ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(80-րդ տարի) Թիվ-7 (1713) Հուլիս 2026

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Պատասխանատվության առաքելությունը (էջ 1-2)

2 - Քաղաքական

Արամ Շահնազարյան
Քարտեզից այն կողմ. Տիգրանաշենը և Հայաստանի ռազմավարական անվտանգության ընտրությունը (էջ 3-7)

Լիանա Պետրոսյան
Աշխարհաքաղաքական պատրանքներ և իրականություն. Ադրբեջանի հռետորաբանության տրանսֆորմացիան ՀՀ 2026 թ. խորհրդարանական ընտրություններից հետո (էջ 8-11)

3 - Տնտեսաքաղաքական

Վահե Դավթյան
Էներգետիկ ինքնիշխանության պատրանքը. Հայաստանի եվրոպական շրջադարձի գեոտնտեսական գինը (էջ 12-16)

4 - Աշխարհաքաղաքական

Անի Մելքոնյան
Հայաստանի մարտահրավերներն ու սպառնացող վտանգները՝ աշխարհաքաղաքական իրադարձությունների ծիրում (էջ 17-20)

Նարե Գևորգյան
Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնության ազդեցությունը Թուրքիա–Իսրայել հարաբերությունների արդի դինամիկայի վրա (էջ 21-23)

4 - Աշխարհաքաղաքական

Սաբինա Մուրադյան
Թուրքիայի պանթյուրքական քաղաքականության ժամանակակից դրսևորումները (էջ 24-28)

5 - Հասարակություն

Լուսինե Մխիթարյան
Երբ աղավաղվում են տոնն ու խորհրդանիշը (էջ 29-32)

6 - Պատմության լուսարձակ

Տարոն Վլադիկի Հակոբյան
Միացումից անկախացում: Ներքաղաքական խմորումները Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունում (1992-1993 թթ.) (էջ 33-35)

7 - Հայ Դատ

Մարի Հովհաննիսյան
1992 թ. Մարտակերտի աղետը. Հաթերքի բնակչության բռնի տեղահանման պատմական և իրավական հայեցակետերը (էջ 36-38)

8 - Ընթերցումներ

Արդարադատությունը՝ գլխիվայր *(էջ 39-40)*

Պատասխանատվության առաքելությունը

Ընտրությունները, իրենց բուն նպատակին զուգահեռ, լուծում են դրանից բխող մեկ կարևոր խնդիր ևս՝ խաղաղ ու ներդաշնակ մթնոլորտ են հաստատում երկրում, ըստ հասունացած հասարակական պահանջի՝ վերափոխելով քաղաքական դաշտը:

2026 թվականի հունիսին Հայաստանում տեղի ունեցած ընտրություններն ոչ միայն չլուծեցին առկա հիմնահարցերը, այլև ավելի ընդգծեցին դրանք՝ խորացնելով հասարակական դժգոհությունն ու հիասթափությունը: Պատճառն ակնհայտ է՝ ընտրության հրամցված արդյունքը չէր համապատասխանում հասարակության մեծամասնության ակնկալիքներին: Չսպասելով ընտրությունների օրինականության վիճարկման հարցով Սահմանադրական դատարանի վերջնական վճռին՝ երկրի գործող վարչապետը հրապարակայնացրեց խորհրդարանում և իշխանական այլ օղակներում նշանակումների և վերանշանակումների հարցեր, կանխապես հանրությանն ուղերձ հղելով, որ ավելորդ են դատարանի վճռի հետ կապված նրա սպասումները:

Հիշելով, մասնավորապես, հունիսի 7-ի ընտրությունների գիշերը, արդյունքների հաշվարկի հենց սկզբում, նույն վարչապետի հայտարարությունն իր գլխավորած ուժի հաղթանակի մասին, համոզվում ենք, որ գործ ունենք քաղաքական գործընթացները կանխելու գործելակերպի հետ, որն ուղերձ է, առաջին հերթին, տվյալ գործընթացներն իրականացնող պետական մարմիններին և, ապա, հանրությանն ու քաղաքական ուժերին: Իր սև գործն անելուց հետո Նիկոլ Փաշինյանը մեկնեց արձակուրդ, իսկ իրականում փախուստ տվեց անմիջականորեն առճակատվելուց այն հիմնահարցերի հետ, որոնք ընտրություններից անմիջապես հետո բոլոր կողմերից ծառացան նրա առջև, ինչպես և այն ռեպրեսիաներից որոնք երկրում ծավալվելու էին իր իսկ հրահանգով: Այդ խնդիրները նրա համար սկսվում էին հարաբերություններից սեփական թիմի հետ, որի մի մասին նա, ուզեր թե չուզեր, պետք է հիասթափեցներ, քանի որ խորհրդարանական տեղերն ու մյուս բարձրագույն պաշտոններն անսահմանափակ չեն, իսկ մյուս կողմից, ծառացել էին ներթիմային ու կադրային այլ խնդիրներ, որոնք ցանկանում էր լուծել ՔՊ առաջնորդը:

Առաջին հայացքից արտաքին ու ներքին բազում հիմնահարցերի կողքին ներթիմային խնդիրները թվում են երկրորդական՝ այս դեպքում, սակայն, անակնկալ մի պահի սրանք կարող են դառնալ ամենաճակատագրականը Նիկոլի իշխանության համար: Նա մշտապես զգոն է, որ հանկարծ դասալքություններ ու ճեղքվածքներ չառաջանան սեփական «տանը», ինչն այդ թղթե կառույցը ցիրուցան կանի ժամերի ընթացքում: Եվ այս դեպքում, նախորդ բազում անգամների նման, ի՞նչ է անում նա իր անսկզբունք, անհայրենիք, ագահ ու իշխանատենչ թիմակիցների

սանձերը ձեռքում պահելու համար. առնում է նրանց՝ այս անգամ 5 միլիարդ դրամի պարգևավճար բաժանելով, այն պահին, երբ հին իշխանությունն ավարտել է իր գործունեությունը, իսկ նորը դեռ չի սկսել: Ինչ վերաբերում է պետական ողջ համակարգն ընդգրկող այդ թիմին, ապա փողի դիմաց վճարողի բոլոր քմահաճույքները կատարողների հարցում, ում շեֆը մեկ վայրկյանում և մեկ SMS-ով կարող է թոցնել աթոռից, որևէ դրական դրսևորում ակնկալելու հիմքեր չկան: Պետք է ցավով արձանագրենք, որ սրանք իրենց բախտախնդիր առաքելությամբ ամենաամոթալի էջն են գրում հայոց պատմության մեջ:

Նիկոլ Փաշինյանին կամակատար կենտրոնական ընտրական հանձնաժողովը և Սահմանադրական դատարանը հաստատեցին ընտրությունների անօրինական արդյունքները, բայց արդյո՞ք դա ապահովեց Նիկոլ Փաշինյանի կայուն և անամպ իշխանավարման գալիք տարիները: Ակնհայտ է, որ իշխանազավթման այս ճիգի ընթացքում Փաշինյանը կորցրեց իր քաղաքական լեգիտիմությունը, բարոյական վարկը, և օրինականության հիմքը:

Սահմանադրական դատարանի վճիռը չչորացած՝ գազազած Փաշինյանը անձնական օգտագործման ուժային կառույցներին ուղղորդեց ձերբակալելու Գագիկ Ծառուկյանին, կասեցնելու գործունեությունը և խլելու հայտնի գործարարին պատկանող ձեռնարկությունները: Թվում էր, թե Գագիկ Ծառուկյանի գլխավորած ուժից նրա օրինականորեն ձեռք բերած մանդատները խլելով՝ Նիկոլ Փաշինյանը դաժանորեն պատժեց վերջինիս իր դուդուկի տակ պար չգալու համար, բայց Փաշինյանը հասկանում է, որ իր այս աղաղակող անօրինականությամբ բարոյական ու քաղաքական ավելի մեծ հարված ստացավ, քան գործարարը: Գուցե բացի սահմաններ չճանաչող հիշաչարությունը, այս քայլով Նիկոլ Փաշինյանը փորձում էր արժեզրկել Գագիկ Ծառուկյանի քաղաքական դրամագլուխը՝ ներսի ու դրսի աչքին նրան ներկայացնելով որպես քրեաօլիգարխիկ կլանի առաջնորդ: Այնուամենայնիվ,

առաջին հայացքից զարմանալի, իսկ տրամաբանության տեսանկյունից լիովին բացատրելի է, որ օլիգարխներին ու թալանչիներին պատժելու կարգախոսն ութ տարի թափահարող երկրի ղեկավարի այս քայլը հանրության մեծամասնության աչքին ավելի ու ավելի վարկաբեկեց նրան, փոխարենը մեծացնելով համակրանքը գործարարի նկատմամբ: Այս առումով Փաշինյանն իր ցուցադրական շոուների վերածված անօրինական քրեական հետապնդումներով այլևս ոչ թե ընկալվում է որպես արդարության մարտիկ, այլ իշխանության պատժիչ մեքենան սեփական աթոռի պահպանությանը ծառայեցնող դիկտատոր: Փաշինյանն Արևմուտքին և թուրքադրբեջանական դաշինքին մեծ խոստումներ է տվել՝ իր իշխանության պահպանման համար վերջիններիս գործնական հովանավորությունը ստանալու դիմաց: Հանուն այդ նպատակի նա բացահայտորեն հակադրվեց Ռուսաստանին, որի հովանավորությունն իր քաղաքական կայունության հիմնական երաշխիքներից մեկն էր անցնող տարիներին: Այդ երաշխիքներից մեկն էլ այն տնտեսական օգուտներն էին, որոնք կարծես առատության եղջյուրից թափվեցին այս իշխանության գիրկը, երբ Արևմուտքի պատժամիջոցների տակ հայտնված Ռուսաստանի հետ բազմակի անգամ մեծացավ Հայաստանի առևտրաշրջանառությունը: Դրա փոխարեն այսօր Ռուսաստանը տնտեսական չհայտարարված պատժամիջոցների է ենթարկում Հայաստանին, որոնք կործանարար կարող են դառնալ հայ արտադրողների համար և կտրուկ անկումների առջև կանգնեցնել Հայաստանի տնտեսական-սոցիալական կյանքը: Նախընտրական փուլում Փաշինյանը խաբեց ժողովրդին, թե հրաշալի հարաբերություններ ունի ռուսական իշխանությունների հետ և շատ հեշտությամբ կլուծի ի հայտ եկած բոլոր խնդիրները: Այսօր ոչ միայն կեղծիքի այս հերթական փուչիկը պայթեց, այլև բացահայտվում է այն սուտը, թե Արևմուտքը շուկաները դռները բացած սպասում է հայ արտադրողներին: Մյուս կողմից, Արևմուտքը պահանջում է արագացնել Ռուսաստանի հետ եղած տնտեսական, էներգետիկ, հաղորդակցական և ռազմական կապերի խզումը, ի դեպ՝ քաղաքական, տնտեսական և ֆինանսական «փոխհատուցման» առումով չարդարացնելով Հայաստանի իշխանությունների ակնկալիքները: Մեկ այլ կողմից, Ադրբեջանն ու Թուրքիան, որոնք նույնպես երգում էին այնքան ցանկալի Խաղաղության հանկերգը Նիկոլի վերարտադրությանը օգնելու համար, այժմ օր օրի մեծացնում են ճնշումը՝ պահանջելով գործնական քայլեր խոստացված զիջումների հարցում: Իր իսկ սարքած աջափսանդալի մեջ եփվող, քաղաքականորեն թուլացած և բարոյապես սպառված Նիկոլը պետք է փորձի լուծում տալ այդ բոլոր հարցերին, մինչդեռ յուրաքանչյուր լուծում ինքնին հակասում և հակադրվում է մեկ այլ պահանջի:

Իր վաղվա զիջումների դիմաց ներքին ընդվզումները կանխելու համար Փաշինյանն այսօր փորձում է գլխատել ընդդիմությանը, ջլատել հավանական ընդվզման ներուժը, սերմանել համատարած վախ և հանրությանը մղել խուլ կրավորականության: Այս ուղղությամբ այսօրվա նրա քայլերը հիշեցնում են անկանոն ջղաձգումներ: Լայն ճակատով իրավական անարխիայի շրջագծի մեջ առնելով ողջ ընդդիմադիր դաշտը, վերջինիս համակիրներին և աջակիցներին՝ Փաշինյանը կարծես փորձում է սրանով հասկացնել ողջ հանրությանը, որ այս հետապնդումները սպասվում են բոլոր նրանց, ովքեր կփորձեն դժգոհություն արտահայտել չսպառված արտադրանքի, կորցրած վարկերի, աշխատատեղերի, շուկաների, աճող գների ինչպեսև կենսապայմանների սողացող անկման համար: Ոտքի վրա հանպատրաստի թխվող քրեական գործերը հօդս են ցնդում՝ բախվելով իրավական, փաստական իրողությունների հետ, բայց Նիկոլն անկյուն քշված գազանի պես պատրաստ է հարձակվել յուրաքանչյուրի վրա՝ այլևս թեկուզ ձևականորեն չպահպանելով օրինականությունը և հրապարակայնացնելով իշխանության բոլոր թևերը անխնա շահագործողի իր բռնապետական վարքագիծը:

Այնպիսի տպավորություն է, կարծես Սահմանադրական դատարանի խայտառակ որոշումից հետո և նոր խորհրդարանի գործունեությունից առաջ Փաշինյանն ինքն է ձեռնարկել իրեն վարկաբեկելու և ըմբոստացող զանգվածներին ոտքի հանելու նախնական քայլերը: Այո, իրականում այլևս նիկոլական պայքարի թիրախը ոչ այնքան ընդդիմությունն է, որքան իր կողմից ընդդիմադիր ճակատ մղված ժողովուրդը: Եվ եթե անգամ ազգային ուժերը թույլ տան իրենց ժամանակավորապես մի կողմ քաշվելու, Փաշինյանի ռեպրեսիվ ինքնապաշտպանությունը շարունակվելու է: Անշուշտ, ստեղծված ճգնաժամային ժամանակահատվածում իրական ազգանվեր ուժերն իրավունք չունեն ձեռնծալ մնալու և չիրականացնելու ժողովրդի ճակատագրի համար պատասխանատվությունից բխող գործունեություն: Հուսանք, որ այդ գործընթացը կազմակերպված ընթացք կառնի նոր գումարման խորհրդարանի գործունեության հետ և ներդաշնակ ժողովրդական հասունացող ըմբոստացմանը:

Քարտեզից այն կողմ. Տիգրանաշենը և Հայաստանի ռազմավարական անվտանգության ընտրությունը

Արամ Շահնազարյան
Քաղաքական վերլուծաբան

Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող սահմանազատման և սահմանագծման գործընթացը վաղուց դուրս է եկել միայն իրավական և քարտեզագրական ճշգրտումների շրջանակից: Այն վերածվել է Հարավային Կովկասում ձևավորվող նոր աշխարհաքաղաքական և անվտանգային կարգի վերաձևավորման առանցքային գործընթացներից մեկի, որի շրջանակում փոփոխվում են ոչ միայն սահմանային գծերը, այլև տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը, հաղորդակցությունների վերահսկման տրամաբանությունը և պետությունների ռազմավարական հնարավորությունները:

Տիգրանաշենի շուրջ ընթացող քննարկումները այս գործընթացի առավել տեսանելի դրսևորումներից են, սակայն դրանց իրական նշանակությունը շատ ավելի լայն է, քան մեկ տարածքի կարգավիճակի կամ մեկ ճանապարհային հատվածի շուրջ ծագած վեճը: Տիգրանաշենի հարցը, այս իմաստով, դառնում է այն ավելի մեծ ռազմավարական խնդրի արտահայտությունը, որի առջև կանգնած է Հայաստանի Հանրապետությունը. ընթացող գործընթացը ձևավորո՞ւմ է արդյոք երկարաժամկետ անվտանգային կարգավորում, որի պայմաններում Հայաստանի կենսական շահերը և պետական ինքնիշխանության առանցքային բաղադրիչները կարող են ապահովված լինել, թե՞ իրավական ձևակերպումների միջոցով ամրագրվում են պատերազմից հետո ձևավորված ուժային հարաբերակցության պայմաններում ստեղծված նոր իրողությունները:

Նիկոլ Փաշինյանի՝ Տիգրանաշենի հարցի վերաբերյալ հայտարարությունները պետք է դիտարկել ոչ միայն երկկողմ սահմանային գործընթացի, այլև ավելի լայն աշխարհաքաղաքական խորապատկերի շրջանակում: Գործող վարչապետի ներկայացրած մոտեցման հիմքում ընկած է այն տեսակետը, որ անկլավների հարցը չի կարող դուրս մնալ սահմանազատման գործընթացի օրակարգից, քանի որ այն վերաբերում է ոչ միայն Ադրբեջանի կողմից առաջադրվող պահանջներին, այլև Հայաստանի համար առկա տարածքային խնդիրներին՝ մասնավորապես Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Արծվաշենի հարցին:

Փաշինյանի դիրքորոշման առանցքային փաստարկն այն է, որ եթե կողմերը սահմանազատման հիմքում ընդունում են խորհրդային ժամանակաշրջանի վարչական սահմանների սկզբունքը, ապա այդ սկզբունքը պետք է կիրառվի ամբողջական և փոխադարձաբար՝ առանց ընտրովի մոտեցման:

Այս մոտեցումը հիմնված է որոշակի իրավաքաղաքական հաշվարկի վրա, ըստ որի՝ Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված պետությունների միջև կայուն հարաբերությունների ձևավորման կարևոր նախապայմանը պետք է լինի նախկին վարչական սահմանների միջազգային իրավական ճանաչումը:

Այս տրամաբանության շրջանակում սահմանազատման և սահմանագծման գործընթացը դիտարկվում է ոչ թե պարզապես տարածքային զիջումների կամ փոխզիջումների մեխանիզմ, այլև որպես երկարատև հակամարտության իրավական կարգավորման և տարածաշրջանային կայունության ապահովման հնարավորություն: Ըստ այս մոտեցման՝ սահմանների հստակեցումը պետք է նպաստի երկարատև սահմանային անորոշությունների և տարածքային վեճերի կարգավորմանը՝ նվազեցնելով դրանցից բխող անվտանգային ռիսկերը և ստեղծելով այնպիսի իրավական միջավայր, որտեղ կողմերը, միմյանց տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման միջոցով, կարող են անցնել հարաբերությունների նոր փուլ:

Սակայն այստեղ է առաջանում առավել կարևոր ռազմավարական հարցը. հնարավո՞ր է արդյոք սահմանազատման գործընթացը գնահատել միայն քարտեզների, վարչական բաժանումների և իրավական փաստաթղթերի տրամաբանությամբ՝ առանց հաշվի առնելու այն աշխարհաքաղաքական պայմանները, որոնցում այն իրականացվում է:

Սահմանները ոչ միայն իրավական կատեգորիա են, այլև պետությունների միջև ուժերի հարաբերակցության արտահայտություն: Այդ պատճառով նույն իրավական սկզբունքը կարող է տարբեր հետևանքներ ունենալ՝ կախված այն քաղաքական և ռազմավարական միջավայրից, որտեղ այն կիրառվում է:

Միջազգային հարաբերությունների պատմությունը բազմաթիվ օրինակներ է հուշում, երբ սահմանների ձևավորումն ու փոփոխությունը պայմանավորված են եղել ոչ միայն իրավական փաստաթղթերով, այլև պատերազմների արդյունքներով, քաղաքական համաձայնություններով և ուժային նոր հավասարակշռություններով: Եվրոպայի պատմությունը հատկապես խոսուն օրինակ է: Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում Գերմանիան փորձեց վերանայել իր համար անբարենպաստ սահմանային կարգավորումները՝ հենվելով ուժի կիրառման քաղաքականության վրա, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայի սահմանային համակարգը վերաձևավորվեց արդեն Գերմանիայի պարտության և դաշնակիցների գերակայության պայմաններում:

Այս և նման օրինակները ցույց են տալիս, որ իրավական կարգավորումները երբեք չեն ձևավորվում աշխարհաքաղաքական հավասարակշռության բացակայության պայմաններում: Դրանք առավել կայուն են դառնում այն ժամանակ, երբ արտահայտում են ոչ միայն իրավական համաձայնություն, այլև այնպիսի քաղաքական հավասարակշռություն, որը կողմերին հնարավորություն է տալիս պահպանելու ձեռք բերված կարգավորումը:

Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող սահմանազատման և սահմանագծման գործընթացն իրականացվում է 2020 թվականի պատերազմից և 2023 թվականի Արցախի կորստից հետո ձևավորված նոր ուժային հարաբերակցությունների պայմաններում: Այս հանգամանքը հնարավոր չէ անտեսել, քանի որ սահմանների հարցը քննարկվում է ոչ թե նախկին ուժային հավասարակշռության պահպանման, այլ պատերազմի հետևանքով արմատապես փոփոխված տարածաշրջանային միջավայրում:

Ադրբեջանը բանակցային գործընթացում հանդես է գալիս ոչ միայն «իրավական» հիմնավորումներով, այլև այն ռազմաքաղաքական առավելություններով, որոնք ձևավորվել են ռազմական գերակշռության և պատերազմի հետևանքով ամրապնդված տարածաշրջանային դիրքի արդյունքում: Հայաստանի համար, հետևաբար, սահմանազատման և սահմանագծման խնդիրը չի կարող սահմանափակվել միայն իրավական գործընթացի շրջանակով. այն առաջին հերթին պետական անվտանգության, ռազմավարական կայունության և երկարաժամկետ ինքնիշխանության ապահովման խնդիր է:

Հենց այս կետում է առաջանում Հայաստանի գործող իշխանության մոտեցման նկատմամբ հիմնական ռազմավարական վերապահումը: Խնդիրը սահմանների իրավական հստակեցման անհրաժեշտության մերժումը չէ, քանի որ յուրաքանչյուր պետություն շահագրգռված է կանխատեսելի և ճանաչված սահմանների գոյությամբ: Հարցն այն է, թե ընթացող գործընթացը զուգահեռաբար ստեղծո՞ւմ է արդյոք այնպիսի անվտանգային պայմաններ, որոնք թույլ կտան Հայաստանին պահպանել իր ռազմավարական ինքնուրույնությունը և նվազեցնել հնարավոր արտաքին ճնշումների նկատմամբ խոցելիությունը:

Եթե սահմանազատման և սահմանագծման գործընթացն իրականացվում է այնպիսի պայմաններում, երբ կողմերի միջև առկա է ռազմական, տնտեսական և դիվանագիտական հնարավորությունների էական տարբերություն, ապա իրավական կարգավորումը կարող է վերածվել ոչ թե հավասարակշռված համաձայնության, այլ արդեն ձևավորված ուժերի հարաբերակցության իրավական ամրագրման:

Իրավական փաստաթուղթը կարող է սահմանել սահմանների կարգավիճակը և ձևակերպել կողմերի պարտավորությունները, սակայն ինքնին չի ստեղծում անվտանգային հավասարակշռություն: Եթե դրա հիմքում չկա այնպիսի քաղաքական և ռազմավարական միջավայր, որը կողմերին հնարավորություն և իրական խթան է տալիս պահպանելու ձեռք բերված պայմանավորվածությունները, ապա իրավական կարգավորումը կարող է չվերածվել իրական անվտանգության և կայունության:

Այս տեսանկյունից Տիգրանաշենի հարցը դուրս է եկել միայն տարածքային պատկանելության շուրջ ընթացող քննարկումների շրջանակից: Այն առնչվում է Հայաստանի պետական տարածքի կազմակերպման և անվտանգային համակարգի այնպիսի բաղադրիչների, որոնք չեն կարող գնահատվել բացառապես իրավական կամ վարչատարածքային չափանիշներով:

Աշխարհաքաղաքականության տեսանկյունից տարածքի արժեքը չի սահմանափակվում նրա չափերով կամ իրավական կարգավիճակով: Դրա ռազմավարական նշանակությունը պայմանավորված է այն գործառույթով, որը տվյալ տարածքը կատարում է պետության անվտանգության, տարածքային կապակցվածության և ռազմավարական շարժունակության ապահովման գործում:

Այս տրամաբանության սահմաններում Տիգրանաշենի հարցը պետք է դիտարկել որպես Հայաստանի պետական տարածքի ֆունկցիոնալ ամբողջականության և անվտանգային համակարգի պահպանմանն առնչվող ռազմավարական հարց:

Դասական և ժամանակակից աշխարհաքաղաքական տեսությունները ցույց են տալիս, որ պետությունների միջև մրցակցությունը վաղուց այլևս չի սահմանափակվում տարածքների ընդարձակմամբ: Որոշիչ նշանակություն են ձեռք բերել այն աշխարհագրական կետերն ու տարածքները, որոնք հնարավորություն են տալիս վերահսկելու հաղորդակցային հանգույցները, բնական անցումները և ռազմավարական միջանցքները: Հենց այդ պատճառով աշխարհաքաղաքական մրցակցությունը հաճախ ծավալվում է ոչ թե տարածքի չափի, այլև դրա ռազմավարական գործառույթի շուրջ:

Հորմուզի նեղուցը դրա ամենախոսուն օրինակներից է: Իրանը, իր աշխարհագրական դիրքի շնորհիվ վերահսկելով նեղուցը, այդ առավելությունը վերածել է իր տարածաշրջանային քաղաքականության և զսպման ռազմավարության կարևոր բաղադրիչի՝ ձեռք բերելով նաև ազդեցության լրացուցիչ լծակներ միջազգային հարաբերություններում: Այս օրինակը ցույց է տալիս, որ աշխարհաքաղաքականության մեջ որոշիչը ոչ թե տարածքի չափերն են կամ իրավական կարգավիճակը, այլ այն ռազմավարական ազդեցությունը, որն այդ տարածքն ունի պետության հնարավորությունների և ուժերի հարաբերակցության վրա:

Այս իմաստով Տիգրանաշենի նշանակությունը ևս պետք է գնահատել ոչ թե վարչատարածքային կամ զուտ իրավական չափանիշներով, այլ այն հարցի տեսանկյունից, թե դրա շուրջ կայացվող որոշումներն ինչ ազդեցություն կարող են ունենալ Հայաստանի տարածքային կապակցվածության, հաղորդակցային անվտանգության, ռազմավարական շարժունակության և, ավելի լայն իմաստով, պետական անվտանգային համակարգի վրա:

Հետևաբար, սահմանազատման գործընթացի գնահատման հիմնական չափանիշը պետք է լինի ոչ միայն դրա իրավական հիմնավորումը, այլև այն, թե դրա արդյունքում ամրապնդվո՞ւմ են, թե՞ թուլանում պետության ռազմավարական դիրքերն ու անվտանգային դիմադրողականությունը:

Այս աշխարհաքաղաքական օրինաչափությունը Հարավային Կովկասում առավել հստակ դրսևորվում է հաղորդակցային ուղիների շուրջ ձևավորված մրցակցության պայմաններում: Վերջին տարիներին տարածաշրջանային մրցակցությունն այլևս չի սահմանափակվում միայն սահմանների և տարածքային հարցերի շրջանակով. այն ներառում է նաև տարանցիկ ենթակառուցվածքների, հաղորդակցային ուղիների և տարածքային կապակցվածության նկատմամբ վերահսկողության խնդիրները:

Ժամանակակից աշխարհաքաղաքականության մեջ հաղորդակցությունները վաղուց դադարել են լինել միայն տնտեսական կամ տրանսպորտային ենթակառուցվածքներ՝ վերածվելով ռազմավարական ազդեցության, քաղաքական ներգործության և տարածաշրջանային ուժերի հարաբերակցության ձևավորման կարևոր գործոնների:

Այս տրամաբանության շրջանակում Ադրբեջանի կողմից առաջ մղվող հաղորդակցային օրակարգը դժվար է գնահատել միայն տնտեսական համագործակցության կամ սահմանների իրավական ճանաչման տրամաբանությամբ: Այն ավելի լայն գործընթացի բաղադրիչ է, որի միջոցով ձևավորվում են տարածաշրջանում ուժերի հարաբերակցության և ռազմավարական ազդեցության նոր հարաբերություններ:

Այս խորապատկերում սահմանազատման և սահմանագծման գործընթացը միայն որպես խաղաղության հաստատման իրավաքաղաքական մեխանիզմ դիտարկելը պահանջում է առավել խորքային գնահատում: Խաղաղությունը, անշուշտ, որևէ պետության բարձրագույն քաղաքական նպատակներից մեկն է, սակայն միջազգային հարաբերությունների փորձը ցույց է տալիս, որ պատերազմի բացակայությունը դեռևս չի նշանակում կայուն խաղաղություն:

Կայուն խաղաղությունը ձևավորվում է այնպիսի ռազմավարական միջավայրում, որտեղ ուժերի հարաբերակցությունը, փոխադարձ զսպման մեխանիզմները և անվտանգության համակարգը պատերազմը բոլոր կողմերի համար դարձնում են ավելի ծախսատար, քան խաղաղության պահպանումը:

Այդ իմաստով խաղաղության համաձայնագիրը սովորաբար ինքնին չի ստեղծում ռազմավարական հավասարակշռություն, այլ իրավական ձև է հաղորդում այն ուժերի հարաբերակցությանը, որի պայմաններում այդ համաձայնությունը ձեռք է բերվում:

Եթե խաղաղության գործընթացը չի ուղեկցվում անվտանգության գործուն մեխանիզմներով և այնպիսի ուժերի հարաբերակցությամբ, որը կողմերի համար ստեղծում է ձեռք բերված կարգավորումը պահպանելու իրական ռազմավարական խթաններ, ապա այն կարող է ոչ թե վերացնել հակամարտության հիմքում ընկած ռիսկերը, այլ դրանք տեղափոխել նոր իրավական և քաղաքական միջավայր:

Այդ պայմաններում նախկին հակասությունները կարող են պահպանել իրենց ազդեցությունը՝ դրսևոր-



վելով արդեն նոր ձևերով և ստեղծելով նոր ճգնաժամերի ու ուժի կիրառման հնարավորությունների առաջացման պայմաններ:

Միջազգային հարաբերությունների պատմությունը փաստում է, որ միայն իրավական համաձայնությունները կամ քաղաքական փոխզիջումները միշտ չէ, որ ձևավորում են կայուն խաղաղություն, եթե դրանց հիմքում բացակայում են ուժի կիրառումը սահմանափակող, փոխադարձ վստահություն ձևավորող և ձեռք բերված կարգավորումների երկարաժամկետ կենսունակությունն ապահովող արդյունավետ մեխանիզմներ:

Այս իմաստով ուշագրավ օրինակ է 1990-ականների իսրայելա-պաղեստինյան խաղաղության գործընթացը, մասնավորապես՝ 1993 թվականի Օսլոյի համաձայնագիրը և դրան հաջորդած պայմանավորվածությունները, որոնք ստեղծեցին քաղաքական երկխոսության և փոխադարձ ճանաչման նոր շրջանակ, սակայն չապահովեցին այնպիսի անվտանգության համակարգ, որը թույլ կտար հաղթահարել խորքային հակասությունները և ձևավորել կայուն խաղաղություն:

Այս փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ քաղաքական համաձայնությունը և իրավական պարտավորությունները կարող են մնալ խոցելի, եթե դրանք չեն ուղեկցվում այնպիսի ռազմավարական հավասարակշռությամբ և գործնական մեխանիզմներով, որոնք կողմերի համար խաղաղության պահպանումը դարձնում են ավելի շահավետ, քան ուժային ճանապարհով առկա կարգավորումների վերանայումը:

Հետևաբար, սահմանազատման և սահմանագծման գործընթացի քաղաքական գնահատականը չի կարող սահմանափակվել միայն դրա իրավական կամ դիվանագիտական բաղադրիչով: Այն պետք է ներառի նաև հիմնարար հարցադրումը՝ ձևավորվող կարգավորումն ամրապնդո՞ւմ է, թե՞ թուլացնում կողմերի ռազմավարական դիրքերը և անվտանգային դիմադրողականությունը:

Այս տեսանկյունից Փաշինյանի այն մոտեցումը, ըստ որի՝ Հայաստանը չի կարող հրաժարվել անկլավների հարցի քննարկումից՝ հաշվի առնելով Արծվաշենի խնդիրը, արտահայտում է իրավական փոխադարձության տրամաբանություն: Սակայն տարածքային հարցերի գնահատման դեպքում իրավական համարժեքությունը ինքնին դեռևս չի նշանակում ռազմավարական համարժեքություն:

Նույն իրավական սկզբունքի կիրառումը տարբեր տարածքների նկատմամբ կարող է ունենալ տարբեր քաղաքական և անվտանգային հետևանքներ՝ կախված դրանց աշխարհագրական դիրքից, հաղորդակցային նշանակությունից և պետության անվտանգության համակարգում ունեցած դերից:

Այս խորապատկերում սահմանային հարցերի շուրջ որոշումները չեն կարող գնահատվել միայն այն հիմքով, թե տվյալ տարածքի վերաբերյալ ինչ իրավական փաստարկներ կարող են ներկայացվել: Անհրաժեշտ է նաև դիտարկել, թե այդ որոշումներն ինչ ազդեցություն կարող են ունենալ պետության տարածքային կապակցվածության, ռազմավարական շարժունակության և երկարաժամկետ անվտանգության իրավիճակի վրա:

Միջազգային հարաբերությունների փորձը ցույց է տալիս, որ իրավական համարժեքությունը միշտ չէ, որ նշանակում է ռազմավարական համարժեքություն: Տարբեր տարածքային հարցեր կարող են ունենալ նմանատիպ իրավական հիմքեր, սակայն դրանց քաղաքական և անվտանգային հետևանքները կարող են էապես տարբերվել՝ պայմանավորված տվյալ տարածքների աշխարհագրական դիրքով, գործառույթով և պետության ընդհանուր ռազմավարական միջավայրում ունեցած նշանակությամբ:

Հետևաբար, տարածքային խնդիրների գնահատումը չի կարող սահմանափակվել միայն իրավական պատկանելիության կամ փոխադարձության սկզբունքով: Այն պետք է ներառի նաև այն հարցը, թե ձևավորվող կարգավորումը ինչպիսի ռազմավարական միջավայր է ստեղծում պետության համար:

Այս առումով Արծվաշենի և Տիգրանաշենի հարցերի զուտ «մեկը մյուսի դիմաց» սկզբունքով համադրումը կարող է անտեսել այն հանգամանքը, որ տարբեր տարածքներ կարող են ունենալ ոչ նույնական ռազմավարական նշանակություն՝ նույնիսկ եթե դրանց իրավական կարգավիճակի վերաբերյալ հարցերը ձևականորեն համադրելի են:

Խնդիրը միայն այն չէ, թե որ տարածքն ում վարչական սահմաններում է գտնվելու, այլև այն, թե տվյալ տարածքի շուրջ ընդունվող որոշումն ինչ ազդեցություն կարող է ունենալ պետության տարածքային կապակցվածության, հաղորդակցային հնարավորությունների և երկարաժամկետ անվտանգության պատկերի վրա:

Այս պատճառով սահմանային գործընթացների նկատմամբ պետական մոտեցումը չի կարող սահմանափակվել միայն իրավական փաստաթղթերի և քարտեզագրական ճշգրտումների շրջանակով: Սահ-



մանը պետության տարածքային իրավազորության արտահայտությունից ավելին է. այն անվտանգության համակարգի բաղադրիչ է, որի միջոցով պետությունն ապահովում է իր պաշտպանությունը, հաղորդակցային կապերը, տնտեսական կենսունակությունը և ռազմավարական ինքնուրույնությունը:

Ուստի յուրաքանչյուր սահմանային որոշման իրական նշանակությունը պետք է գնահատել ոչ միայն այն իրավական ձևակերպումներով, որոնք ամրագրվում են փաստաթղթերում, այլև այն պետական կարողությունների և ռազմավարական հնարավորությունների տեսանկյունից, որոնք այդ որոշումը ստեղծում կամ սահմանափակում են ապագայում:

Հենց այս խորապատկերում Տիգրանաշենի շուրջ ձևավորված քննարկումը պետք է դիտարկել որպես ավելի լայն ռազմավարական ընտրության արտահայտություն: Դրա հիմնական հարցը միայն այն չէ, թե ինչպես կավարտվի սահմանազատման և սահմանագծման գործընթացը, այլև այն, թե ինչպիսի անվտանգության մոդել է Հայաստանը փորձում ձևավորել նոր տարածաշրջանային պայմաններում:

Այդ ընտրությունը վերաբերում է ոչ միայն սահմանային գծերի իրավական ամրագրմանը, այլև այնպիսի պետական միջավայրի ձևավորմանը, որտեղ սահմանները կարող են իրականում ապահովել անվտանգության, կայունության և ինքնիշխան որոշումների պահպանման գործառույթ:

Հետևաբար, սահմանային գործընթացների քաղաքական գնահատման առանցքում պետք է լինի ոչ միայն ձեռք բերված իրավական ձևակերպումների ուսումնասիրությունը, այլև դրանց ռազմավարական հետևանքների գնահատումը: Կարևոր է հասկանալ՝ արդյոք ձևավորվող կարգավորումը բարձրացնո՞ւմ է Հայաստանի պաշտպանունակությունը, ամրապնդո՞ւմ ռազմավարական ինքնուրույնությունը և մեծացնո՞ւմ երկարաժամկետ դիմադրողականությունը, թե՞ հիմնականում իրավականորեն ամրագրում է այն իրողությունները, որոնք ձևավորվել են ուժերի հարաբերակցության էական փոփոխության պայմաններում:

Այս հարցադրումը պետք է ընկած լինի որևէ սահմանային գործընթացի գնահատման հիմքում, քանի որ պետության համար սահմանը ոչ միայն անցյալի վարչական ժառանգություն է, այլև ապագայի անվտանգության ճարտարապետության հիմնարար տարր:

Հայաստանի համար սահմանների հարցը չի կարող սահմանափակվել միայն քարտեզների ճշգրտմամբ. այն պետական ինքնուրույնության ավելի լայն խնդրի մասն է՝ երկիրը կարո՞ղ է արդյոք ձևավորել այնպիսի կարողություններ, որոնք թույլ կտան ոչ միայն արձագանքել արտաքին գործընթացներին, այլև պահպանել որոշումների կայացման ազատությունը և նվազեցնել արտաքին ճնշումների նկատմամբ խոցելիությունը:

Սահմանազատման գործընթացի իրական արժեքը որոշվելու է ոչ միայն քարտեզի վրա ամրագրվող գծերով կամ իրավական փաստաթղթերով, այլև այն պետական կարողություններով և ռազմավարական միջավայրով, որոնք կձևավորվեն դրանցից հետո:

Եթե այդ միջավայրը ապահովում է ռազմավարական հավասարակշռություն, ինքնիշխան որոշումների ազատություն և երկարաժամկետ անվտանգություն, ապա սահմանների կարգավորումը կարող է դառնալ կայունության հիմք: Հակառակ դեպքում նույնիսկ իրավականորեն ամրագրված լուծումները կարող են մնալ ժամանակավոր և խոցելի:

Աշխարհաքաղաքական պատրանքներ և իրականություն. Ադրբեջանի հռետորաբանության տրանսֆորմացիան ՀՀ 2026 թ. խորհրդարանական ընտրություններից հետո

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, դասախոս

2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները Հայաստանում դարձան հերթական ջրբաժանը, որտեղ բախվեցին ներքաղաքական պատումներն ու արտաքին անողոք իրականությունը: Մեր խնդիրն է սառնասիրտ ախտորոշման ենթարկել այն անդունդը, որը գոյություն ունի ընտրական փուլում հայաստանյան հանրությանը հրամցված թեզերի և դրանից հետո Բաքվից հնչող իրական ռազմաքաղաքական հայտարարությունների միջև:

Փաստերի համադրումն ու հետընտրական շրջանի հռետորաբանության վերլուծությունը թույլ են տալիս հստակ գնահատել, թե քաղաքական որ բևեռի կանխատեսումներն էին համապատասխանում տարածաշրջանային դաժան իրողություններին, և թե ինչպիսի նոր ու վտանգավոր հանգրվանում է հայտնվել Հայաստանը 2026 թվականի ամռանը:

Փաշինյանի նախընտրական թեզերը. «Խաղաղության խաչմերուկ» և դարաշրջանի ավարտ. Նախընտրական քարոզարշավի ողջ ընթացքում Նիկոլ Փաշինյանի և իշխող քաղաքական թիմի հիմնական հենասյունը «Խաղաղության պայմանագրի» շուտափույթ ստորագրման և տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակման թեզն էր: Իշխանության քարոզչամեքենան առաջ էր տանում այն միտքը, որ Հայաստանի կատարած զիջումները, սահմանազատման միակողմանի պատրաստակամությունը և «պատմական ու իրական Հայաստանների» տարանջատումը վերջնականապես զրկելու են Ադրբեջանին ագրեսիայի լեգիտիմ հիմքերից:

Ն. Փաշինյանը հանրությանը համոզում էր, որ ընտրություններում իրենց հաղթանակը կլինի վերջնական մանդատ՝ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման և ինքնիշխանության ամրապնդման համար: Ըստ իշխանական թեզերի՝ խաղաղությունը հասանելիության գոտում էր, իսկ Բաքվի կոշտ հռետորաբանությունը ներկայացվում էր որպես զուտ տակտիկական մանևր, որը կմեղմանար ընտրություններից և Հայաստանում կայուն իշխանության ձևավորումից հետո:

Ինչ էր ասում ընդդիմությունը. նախազգուշացումներ անկշտում ախորժակի մասին Հակառակ պատկերն էր ներկայացնում հայաստանյան ընդդիմությունը: Նախընտրական փուլում ընդդիմադիր ուժերի վերլուծական ու քաղաքական թեզերը հիմնված էին այն պնդման վրա, որ Ադրբեջանի նպատակը ոչ թե խաղաղությունն է, այլ Հայաստանի փուլային կապիտուլյացիան և կենսական տարածքների կլանումը:

Ընդդիմությունը նախազգուշացնում էր, որ Իլհամ Ալիևի հավակնությունները չեն սահմանափակվում Արցախի հարցի փակմամբ կամ սահմանային որոշակի հատվածների հանձնմամբ: Նրանք ասում էին, որ Բաքուն օգտագործելու է ընտրությունների արդյունքները՝ հայկական կողմին նոր, ավելի կործանարար պահանջներ ներկայացնելու համար՝ սկսած ՀՀ Սահմանադրության փոփոխությունից, վերջացրած, այսպես կոչված, «Արևմտյան Ադրբեջանի» թեզի պաշտոնականացմամբ և միջանցքային տրամաբանության պարտադրմամբ: Ընդդիմության կանխատեսմամբ՝ զիջումները ոչ թե բերելու էին խաղաղություն, այլ մեծացնելու էին թշնամու ախորժակը:

Գործնական իրականությունը. Ալիևի և Ադրբեջանի պաշտոնյաների հեգրընտրական հարձակումը. Հունիսի 7-ի ընտրություններից անմիջապես հետո պատրանքների փուչիկը պայթեց: Ադրբեջանի պաշտոնական հռետորաբանությունը ոչ միայն չմեղմացավ, այլև ստացավ որակական նոր, ավելի ագրեսիվ երանգներ: Բաքուն գործնականում ցույց տվեց, որ Երևանի ընտրական գործընթացները որևէ ազդեցություն չունեն իր ռազմավարական ծրագրերի վրա:

Այս համատեքստում ամենացավոտ և ռազմավարական առումով ամենավտանգավոր ձախողումը տեղի ունեցավ Հայաստանի մայր օրենքի՝ Սահմանադրության փոփոխության հարցում: Նախընտրական ողջ քարոզարշավի ընթացքում ընդդիմադիր ուժերը և անկախ վերլուծական շրջանակները փաստերով ապացուցում էին, որ Ն. Փաշինյանի կողմից նոր Սահմանադրություն ունենալու հանկարծակի օրակարգը բխում է բացառապես Բաքվից ստացված պահանջներից, որոնց նպատակն է հայկական իրավական համակարգից ջնջել Արցախի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված հիմնարար դրույթները:

Ի պատասխան այս քննադատության՝ Ն. Փաշինյանն ու իր թիմը նախընտրական փուլում կատաղի կերպով հերքում էին ադրբեջանական ճնշման փաստը: Իշխանությունը հանրությանը համոզում էր, որ նոր Սահմանադրության անհրաժեշտությունը զուտ ներքին, ինքնիշխան օրակարգ է՝ ուղղված «պատմական Հայաստանից դեպի իրական Հայաստան» անցմանը և պետության իրավական հիմքերի արդիականացմանը: Փաշինյանը հրապարակավ հայտարարում էր, որ Հայաստանն իր ներքին կյանքին վերաբերող որոշումները չի ընդունում Ի. Ալիևի հրահանգով, և որ խաղաղության պայմանագրի տեքստը գրեթե պատրաստ է ու կարող է ստորագրվել մոտ ժամանակներս՝ առանց որևէ նախապայմանի:

2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններից անմիջապես հետո, սակայն, պատրանքների այս շղարշը վերջնականապես պատռվեց: Ի. Ալիևը և Ադրբեջանի ԱԳՆ-ն ոչ միայն չսպասեցին Հայաստանի «ինքնիշխան» իրավական գործընթացներին, այլև կտրուկ ուժեղացրին հրապարակային ճնշումը Երևանի վրա: Բաքվից բաց տեքստով հնչեցին վերջնագրեր, որոնցում հստակ նշվեց. առանց Հայաստանի Սահմանադրության փոփոխության և Անկախության հռչակագրին հղումների վերացման՝ որևէ խաղաղության պայմանագիր չի ստորագրվի:

Ադրբեջանի այս հետընտրական կոշտ հարձակումը լիովին հերքեց իշխանության նախընտրական այն թեզը, թե հարցը կապ չունի Բաքվի պահանջների հետ: Ի. Ալիևը գործնականում մերկացրեց հայաստանյան իշխանության ներքին պատումները՝ աշխարհին ցույց տալով, որ Հայաստանի Սահմանադրության փոփոխությունը ոչ թե Երևանի ինքնիշխան ցանկությունն է, այլ իր կողմից պարտադրված նախապայման: Սա ուղղակի և ջախջախիչ հարված էր Ն. Փաշինյանի ողջ նախընտրական տրամաբանությանը, ինչն ապացուցեց, որ իշխանությունը փորձում էր քողարկել արտաքին պարտադրանքը՝ այն հանրությանը հրամցնելով որպես «սեփական պետականության ամրապնդման» քայլ:

Երկրորդ, Բաքվի հոետորաբանության մեջ առանցքային դարձավ Հայաստանի վերազինման և արևմտյան (մասնավորապես՝ ֆրանսիական) ռազմական գնումների թեման: Ադրբեջանական կողմը Հայաստանի ինքնապաշտպանական քայլերը պաշտոնապես որակում է որպես «ռևանշիզմի դրսևորում» և բացահայտ սպառնում է դիմել «կանխարգելիչ ռազմական գործողությունների»: Սա լիովին հակասում է Ն. Փաշինյանի քարոզած «փոխադարձաբար սահմանների ճանաչման» թեզին:

Երրորդ, ադրբեջանական պաշտոնական քարոզչությունը նոր թափով շրջանառության մեջ դրեց Հա-

յաստանի տարածքների նկատմամբ ժողովրդագրական հավակնությունների թեզը («Արևմտյան Ադրբեջան»)՝ փաստացի կասկածի տակ դնելով ՀՀ 29.743 քառակուսի կիլոմետրի լեգիտիմությունը, ինչն իշխանության ամենասիրած քաղաքական կովանն էր:

Համեմատություն և փաստեր. Ո՞վ էր ճիշտ. Քաղաքագիտական մեթոդաբանությունը պահանջում է քաղաքական ուժերի կանխատեսումների ճշգրտությունը գնահատել ոչ թե նրանց հռետորաբանության գրավչությամբ, այլ գործնական արդյունքների և փաստացի զարգացումների համադրմամբ: 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններից հետո ստեղծված իրավիճակը թույլ է տալիս անցկացնել հստակ զուգահեռներ, որտեղ ակադեմիական և վերլուծական անկողմնակալությունը ստիպում է արձանագրել. իրադարձությունների զարգացման գնահատականներում հեռատես և ճիշտ դուրս եկավ ընդդիմությունը, մինչդեռ գործող իշխանության հիմնարար թեզերը ձախողվեցին պրակտիկայում:

Այս իրողությունը հասկանալու համար անհրաժեշտ է կետ առ կետ վերլուծել հիմնական հակադրությունները: Նախընտրական քարոզարշավի ժամանակ իշխանության առանցքային թեզն այն էր, որ ընտրություններից հետո «Խաղաղության պայմանագիրը» կստորագրվի: Ըստ իշխանական պատումի՝ փաստաթղթի տեքստը մեծ մասամբ համաձայնեցված էր, և անհրաժեշտ էր միայն ընտրական լեգիտիմության վերահաստատում՝ գործընթացն ավարտին հասցնելու համար:

Ընտրությունների ավարտից անմիջապես հետո Բաքուն ոչ միայն չգնաց փաստաթղթի ստորագրմանը, այլև պաշտոնական Երևանի առջև դրեց որակական նոր և ավելի ծանր նախապայմաններ: Ի. Ալիևի վարչակազմը հստակ հասկացրեց, որ բուն տեքստի համաձայնեցումը երկրորդական է, քանի դեռ Հայաստանը չի կատարել իրենց հիմնարար պահանջները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունը և Անկախության հռչակագրից հղումների հեռացումը: Արդյունքում՝ պայմանագրի ստորագրումը կրկին հետաձգվեց անորոշ ժամկետով, ինչը փաստում է, որ իշխանության «շուտափույթ խաղաղության» խոստումը չուներ իրական աշխարհաքաղաքական երաշխիքներ:

Երկրորդ, իշխող ուժի հաջորդ հայեցակարգային դրույթը հիմնված էր այն թեզի վրա, որ «Մեր կողմից սահմանների ճանաչումը երաշխավորում է անվտանգություն»: Պաշտոնական Երևանը պնդում էր, որ ԽՍՀՄ քարտեզներով սահմանագծի հստակեցումն ու սահմանազատման գործընթացը Ադրբեջանին կզրկեն Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժելու որևէ լեգիտիմ հիմնավորումից կամ պատրվակից:

Իրականում, Ադրբեջանը ոչ միայն չդադարեցրեց ուժի կիրառման սպառնալիքները, այլև ընդլայնեց իր պահանջների աշխարհագրությունն ու տրամաբանությունը: Բաքուն պաշտոնական մակարդակով հայտարարեց, որ Հայաստանի բանակի ցանկացած արդիականացում, պաշտպանական հնարավորությունների վերականգնում և արևմտյան գործընկերներից զենքի գնում իր կողմից դիտարկվում է որպես «սպառնալիք» և «լեգիտիմ թիրախ»: Սա նշանակում է, որ սահմանների ճանաչումը չդարձավ անվտանգության երաշխիք. Ադրբեջանն իրեն իրավունք է վերապահում միջամտել Հայաստանի ներքին գործերին և սպառնալ նոր հարվածներով՝ արգելելով սեփական երկիրը պաշտպանելու տարրական իրավունքը:

Երրորդ, նախընտրական քարոզարշավի ժամանակ ընդդիմության հիմնական նախազգուշացումն ու քաղաքագիտական պնդումն էր. «Բաքվի ախորժակը միակողմանի զիջումներով հնարավոր չէ փակել»: Ժամանակը ցույց տվեց, որ ընդդիմության այս վերլուծությունը լիովին ճշգրիտ էր: Տավուշի և այլ հատվածների սահմանազատման գործընթացից, ինչպես նաև ընտրություններում իշխանության հաջողությունից հետո Ադրբեջանի հռետորաբանությունը ոչ թե մեղմացավ կամ կառուցողական դարձավ, այլ ստացավ ընդգծված վերջնագրային բնույթ: «Արևմտյան Ադրբեջանի» պատումի ակտիվացումը, միջանցքային պահանջների թարմացումը և Հայաստանի ինքնիշխանության սահմանափակմանն ուղղված հայտարարությունները փաստեցին, որ Բաքուն Երևանի զիջումները ընկալում է ոչ թե որպես խաղաղության քայլ, այլ որպես հայկական կողմի թուլության և կապիտուլյացիայի պատրաստակամության ապացույց:

Փաստացի, ընտրություններից ընդամենը մեկ ամիս անց (հուլիսին) Ի. Ալիևն արդեն բացահայտ ցուցադրում է հաղթողի իր դիրքերն ու խոսում տարածաշրջանի տիրոջ կարգավիճակից: Հայաստանի խորհրդարանական ընտրություններից ընդամենը շաբաթներ անց՝ հուլիսի 13-ին, բռնազավթված Շուշիում կայացած «ՋԼՄ-ների առաքելությունը խաղաղության խթանման գործում» խորագրով 3-ժամյա քննարկումը դարձավ Ի. Ալիևի հետընտրական կեցվածքի և ռազմավարական նպատակների լավագույն լակմուսի թուղթը: Այս հավաքի ընթացքում

Ի. Ալիևի արած խոստովանություններն ու հայտարարությունները վերջնականապես մերկացրին Երևանի կողմից քարոզվող «խաղաղության դարաշրջանի» սնանկությունը և ի հայտ բերեցին նոր աշխարհաքաղաքական շեշտադրումներ:

Շուշիում Ի. Ալիևի դժգոհությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի նախորդ առաջարկներից և դրանց համադրումը Ն. Փաշինյանի նախընտրական թեզերի հետ բացահայտում են մի ողբերգական իրողություն: Երկու կողմերն էլ, ըստ էության, դժգոհ էին միջնորդների առաջարկներից. Ի. Ալիևը՝ որովհետև ցանկանում էր տիրանալ ամբողջին, իսկ ՀՀ իշխանությունը՝ որովհետև ցանկանում էր օր առաջ ազատվել Արցախի «բեռից»՝ հանրությանը համոզելով, թե դա արվում է հանուն «իրական Հայաստանի»:

Արդյունքում երկուսն էլ ստացան իրենց ուզածը. Բաքուն իրականացրեց Արցախի ամբողջական էթնիկ զտում, իսկ Երևանը հպարտանում է Արցախի «թոկից» ազատվելու իրողությամբ: Սակայն, եթե Ադրբեջանի համար սա ռազմավարական հաղթանակ էր, ապա հայկական կողմի համար սա նմանվեց սեփական հիվանդ զավակին սպանելու պատրաստակամության՝ հանուն մյուս զավակի թվացյալ բարեկեցության, ինչը քաղաքական բարոյազրկության դասական օրինակ է:

Հետընտրական շրջանում Ի. Ալիևն արդեն իրեն թույլ է տալիս բացահայտ կոշտությամբ խոսել եվրոպական կառույցների հետ: Նրա կատաղի հարձակումները Ժոզեպ Բորելի և Եվրոպայի խորհրդի հասցեին, որտեղ նա հայտարարեց, թե «Ադրբեջանի դուրս գալը ԵԽ-ից երկրում ոչ ոք չի նկատի», ցույց են տալիս, որ Բաքուն թքած ունի միջազգային իրավունքի և ժողովրդավարական ինստիտուտների վրա: Փոխարենը, նա գոհունակություն է հայտնում Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ աշխատանքից՝ հասկացնելով, որ Արևմուտքի հետ իր հարաբերությունները բացառապես առևտրատնտեսական են:

Միևնույն ժամանակ, Ի. Ալիևը չի խորշում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի գործոնի շուրջ մանևրելուց և հանրային դաշտում կրկին ներարկում է, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք» եզրույթը: Սա ուղղակիորեն հերքում է ՀՀ իշխանության նախընտրական այն հանգստացնող թեզերը, թե միջանցքային տրամաբանությունն այլևս օրակարգում չէ, և հարցը փակված է:

Ամենից թերագնահատված, բայց ռազմավարական առումով կարևորագույն դրվագը վերաբերում է Ադրբեջանի գազային էներգետիկայի վերաբերյալ խոստովանությանը: Ի. Ալիևը բացահայտ դժգոհեց, որ եվրոպական բանկերը՝ «Կանաչ օրակարգի» պատճառով, չեն ցանկանում ֆինանսավորել բրածո վառելիքի նախագծերը, և ինքը չգիտի, թե որտեղից վարկ վերցնի խողովակաշարերի ընդլայնման համար: Նրա մտավախությունը, որ Եվրոպան մի օր կարող է ասել՝ «մեզ այլևս ձեր գազը պետք չէ», բացահայտում է Բաքվի տնտեսական հիմքերի խոցելիությունն ու անորոշ ապագան:

Ուշագրավ է նաև Ի. Ալիևի բացահայտ խանդն ու նյարդային արձագանքը Հայաստանում արհեստական բանականության (AI) գործարանի կառուցման հեռանկարի վերաբերյալ: Սա ցույց է տալիս, որ Բաքուն վախենում է Հայաստանի ինտելեկտուալ և տեխնոլոգիական որևէ առավելությունից, նույնիսկ երբ երկիրը գտնվում է ծանր կորուստների փուլում:

Իր ելույթի ավարտին Ի. Ալիևի ձևակերպած միտքը, թե «երբ քեզ կախվածության մեջ ես դնում այլ ուժային կենտրոններից, հետո մնում ես քո մասին նրանց կայացրած որոշումների գերին», հնչում է որպես դաժան, բայց ճշմարիտ հեգնանք: Սա լավագույն ախտորոշումն է հենց հայաստանյան այն իշխանության համար, որն իր քաղաքականությունն ամբողջությամբ կառուցել է Ադրբեջանի քմահաճույքներին հարմարվելու և սեփական դիրքերը թուլացնելու վրա՝ քայլ առ քայլ Հայաստանը վերածելով արտաքին ուժերի և Բաքվի որոշումների պատանդի:

Ակնհայտ է, որ 2026 թվականի հետընտրական հունձքը Հայաստանի համար մտահոգիչ է: Մենք ունենք մի իրավիճակ, երբ ներքաղաքական նպատակներով հանրությանը մատուցված խաղաղության օրակարգը բախվել է Ադրբեջանի կոշտ ռազմավարությանը: Բաքուն ընտրություններից հետո տեսնում է մի իշխանություն, որն իր քաղաքական կապիտալը կառուցել է միմիայն «պատերազմի բացառման» վախի վրա, ինչը Ի. Ալիևին հնարավորություն է տալիս էլ ավելի բարձրացնել խաղադրույքները:

Հայաստանը հայտնվել է մի ծուղակում, որտեղ ներքին լեգիտիմություն ստացած «խաղաղության» թեզն արտաքին ասպարեզում վերածվել է աշխարհաքաղաքական թուլության նշանի: Բաքվի հռետորաբանության փոփոխությունը ցույց տվեց, որ տարածաշրջանում խաղաղությունը կախված չէ հայկական կողմի բարի կամքից կամ ընտրությունների արդյունքներից. այն որոշվում է ուժերի հավասարակշռությամբ, որի խախտումը, ցավոք, շարունակվում է նաև այսօր:

Էներգետիկ ինքնիշխանության պատրանքը. Հայաստանի եվրոպական շրջադարձի գեոտնտեսական գինը

Վահե Դավթյան
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ռուսաստանը կարող է վերանայել կամ դադարեցնել Հայաստանի նկատմամբ բնական գազի, նավթամթերքի և չմշակված ալմաստների արտոնյալ մատակարարումների գործող ռեժիմը, եթե Երևանը շարունակի Եվրամիության հետ ինտեգրման գործընթացը: Այս մասին նշվում է Ռուսաստանի էներգետիկայի նախարար Սերգեյ Ցիվիլևի՝ Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը մայիսի 27-ին ուղարկված նամակում:[1]

Փաստորեն, Մոսկվան առաջին անգամ նման հստակությամբ է կապում Հայաստանի եվրոպական ինտեգրման քաղաքականությունը հնարավոր էներգետիկ հետևանքների հետ:

Սակայն ստեղծված իրավիճակը գնահատելիս անհրաժեշտ է դուրս գալ միայն քաղաքական հայտարարությունների շրջանակից և դիտարկել այն գեոտնտեսական իրականության համատեքստում:

Այսօր Հայաստանի առջև ծառացած հիմնական հարցը ոչ այնքան այն է, թե արդյո՞ք երկիրը կարող է փոխել իր արտաքին քաղաքական ուղղությունը, որքան այն, թե արդյոք ունի՞ բավարար ենթակառուցվածքային, ֆինանսական և տեխնոլոգիական հնարավորություններ՝ այդ փոփոխության հնարավոր գինը վճարելու համար: Հենց այստեղ է ի հայտ գալիս գլխավոր հակասությունը. քաղաքական դիսկուրսում հաճախ օգտագործվող «դիվերսիֆիկացում» հասկացությունը բախվում է Հայաստանի էներգետիկ համակարգի խորքային սահմանափակումներին: Դիվերսիֆիկացումը հնարավոր չէ իրականացնել միայն քաղաքական ցանկությամբ: Այն պահանջում է այլընտրանքային մատակարարումների ուղիներ, անհրաժեշտ կրիտիկական ենթակառուցվածքներ, ներդրումներ և երկարաժամկետ ռազմավարություն:

Գազային դիվերսիֆիկացման սահմանները

Ներհայաստանյան քաղաքական քննարկումներում վերջին շրջանում հաճախ շրջանառվում է Ադրբեջանից բնական գազի ներկրման գաղափարը: Սակայն այս սցենարը մինչ այժմ ավելի շատ քաղաքական ենթադրություն է, քան պատրաստի տնտեսական ծրագիր:

Խորհրդային տարիներին գործող Իջևան-Ղազախ գազատարը ներկայումս չի շահագործվում: Դրա վերագործարկումը կպահանջի ոչ միայն տեխնիկական վերականգնում, այլև մեծածավալ ներդրումներ, իրավական կարգավորումներ և, ամենակարևորը, քաղաքական համաձայնություններ: Ավելին, նույնիսկ նման նախագծի իրականացվելու դեպքում անհրաժեշտ է

պատասխանել մեկ այլ հարցի. արդյո՞ք Ադրբեջանը երկարաժամկետ հեռանկարում ունի բավարար ազատ գազային ռեսուրս՝ Հայաստանի ներքին պահանջարկն ապահովելու համար: Վերջին տարիներին Բաքուն ակտիվորեն ընդլայնում է իր ներկայությունը արտաքին էներգետիկ շուկաներում՝ մեծացնելով գազի արտահանումները դեպի Եվրամիություն, Թուրքիա, Վրաստան և այլ ուղղություններով՝ ընդհուպ մինչև Սիրիա: Իսկ 2027 թ. պարտավորվել է կրկնապատկել մատակարարումները Եվրոպա՝ հասցնելով դրանք 20 մլրդ խմ-ի: Ընդ որում՝ Ադրբեջանի կառավարությունը 2026-2028 թթ. համար կանխատեսում է գազի արդյունահանման փուլային նվազում: Ենթադրվում է, որ առևտրային արդյունահանման ծավալը կկազմի 38 մլրդ խմ, ինչը 1.6%-ով պակաս է 2025 թ. համար կանխատեսված ցուցանիշից: Հաջորդ տարիներին անկման միտումը կշարունակվի. 2027 թ. կանխատեսվում է արդյունահանման նվազում մինչև 36.7 մլրդ խմ, իսկ 2028 թ.՝ մինչև 34.5 մլրդ խմ[2]:

Այսպիսով, Ադրբեջանի արտահանման հնարավորությունները նույնպես անսահմանափակ չեն: Նոր շուկաներ մուտք գործելու համար Ադրբեջանն ինքն էլ կանգնած է լրացուցիչ ենթակառուցվածքների ու հզորությունների ստեղծման անհրաժեշտության առջև:

Այս համատեքստում հաճախ հիշատակվող Անդրկասպյան գազատարի նախագիծը (Թուրքմենստան-Ադրբեջան) շարունակում է մնալ առկախված վիճակում՝ աշխարհաքաղաքական և իրավական սահ-

մանափակումների հետևանքով: Խնդիրները կապված են Կասպից ծովի իրավական կարգավիճակի, տարածաշրջանային մրցակցության և արտաքին դերակատարների դիրքորոշումների հետ: Հետևաբար, ադրբեջանական ուղղությունը ներկայումս չի կարող դիտարկվել որպես ռուսական գազին արագ և ամբողջապես փոխարինող այլընտրանք:

Նույնը վերաբերում է նաև TRIPP նախագծի հնարավորություններին: Թեև այն ներկայացվում է որպես տարածաշրջանային կապերի և հաղորդակցությունների զարգացման կարևոր նախաձեռնություն, դրա ներկա ձևաչափում գազատրանսպորտային բաղադրիչը փաստացի բացակայում է: Ու թեև Փաշինյանը նախընտրական փուլում դաշտ նետեց TRIPP-ով բնական գազի ներկրման մասին թեզը («մենք մեր սեփական գազն ենք ունենալու»), պարզ է, որ, միջազգային փորձից ելնելով, խոսքը լավագույն դեպքում տարանցվող գազի 10-15%-ի մասին կարող է լինել: Հետևաբար, քանի որ Հայաստանը տարեկան սպառում է մոտ 2.3 մլրդ խմ գազ, TRIPP-ով անցնող գազամուղի թողունակությունը պետք է կազմի առնվազն 20 մլրդ խմ՝ ներհայաստանյան պահանջարկը բավարարելու համար: Հաշվի առնելով առկա գազային կոնյունկտուրան, ինչպես նաև հիշատակված Անդրկասպյան գազամուղի նախագծի իրականացման սահմանափակումները՝ Բաքվի կողմից նման մատակարարումների իրականացումը խիստ անիրատեսական է:

Տեսականորեն Հայաստանի համար ամենատրամաբանական այլընտրանքային ուղղությունը շարունակում է մնալ Իրանը: Իրան-Հայաստան գազամուղը երկար տարիներ դիտարկվել է որպես Հայաստանի էներգետիկ անվտանգության կարևոր բաղադրիչ: Սակայն այս ուղղությունը նույնպես ունի լուրջ սահմանափակումներ:

Առաջին՝ գործող գազատարը չի օգտագործվում իր ամբողջ ներուժով: Առկա 2.3 մլրդ խմ նախագծային թողունակության պարագայում տարեկան դրանով Հայաստան է ներկրվում 350-400 մլն խմ գազ՝ «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» բարտերային գործարքի շրջանակներում:

Երկրորդ՝ առավել կարևոր հանգամանքն այն է, որ Իրան-Հայաստան գազամուղը գտնվում է ռուսական վերահսկողության ներքո և պատկանում է «Գազպրոմ» ընկերությանը: Այս փաստը հաճախ դուրս է մնում հանրային քննարկումներից, սակայն այն առանցքային նշանակություն ունի Հայաստանի էներգետիկ համակարգի իրական պատկերը հասկանալու համար: Հիմնարար հարց է առաջանում. եթե Իրանը դիտարկվում է որպես հնարավոր այլընտրանք, ապա ինչպե՞ս է այդ այլընտրանքը գործնականում իրականացվելու, եթե Իրան-Հայաստան գազամուղը շարունակում է մնալ Ռուսաստանի պետական սեփականությունը:

Հայաստանի էներգետիկ համակարգի վերաբերյալ ամենակարևոր, սակայն հանրային քննարկումներում հաճախ անտեսվող հանգամանքներից մեկը նաև այն է, որ երկրի ամբողջ գազատրանսպորտային համակարգը (ԳՏՀ) 2013 թ. կնքված «գազային համաձայնագրերից» ի վեր «Գազպրոմի» սեփականությունն է: Սա նշանակում է, որ նույնիսկ մասնակի դիվերսիֆիկացման դեպքում ռուսական գործոնը հնարավոր չէ ամբողջությամբ դուրս բերել Հայաստանի էներգետիկ համակարգից:

«Գազպրոմ Արմենիա» ընկերությունը շարունակում է առանցքային դեր ունենալ ոչ միայն բնական գազի մատակարարման, այլև ամբողջ համակարգի տեխնիկական կառավարման, ներդրումային քաղաքականության և սակագնային գործընթացների մեջ: Ընկերությունը մինչև 2030 թ. նախատեսում է իրականացնել շուրջ 150.3 մլրդ դրամի (400 մլն ԱՄՆ դոլար) ներդրումային ծրագիր, ինչը հաստատվել է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:[3] Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ռուսական ներկայությունը Հայաստանի էներգետիկ ոլորտում ունի ոչ միայն առևտրային, այլև երկարաժամկետ ենթակառուցվածքային բնույթ: Սա համակարգային կախվածություն է, որը ձևավորվել է տասնամյակների ընթացքում: Հետևաբար, ցանկացած կտրուկ փոփոխություն պահանջում է ոչ միայն քաղաքական որոշում, այլև ամբողջ էներգետիկ ճարտարապետության վերափոխում:

Բնական գազը՝ որպես տնտեսական ու սոցիալական կայունության հիմք

«Գազպրոմը» Հայաստանի Հանրապետությանը բնական գազի հիմնական մատակարարն է: 2025 թ. արդյունքներով հանրապետություն բնական գազի մատակարարումների ընդհանուր ծավալը կազմել է 2 318.6 մլն խմ: Միևնույն ժամանակ, վերջնական սպառողներին հատկացվել է 2223.1 մլն խմ բնական գազ (տես՝ գծապատկեր):



Հայաստանում գազի սպառման կառուցվածքը, մլն խմ (աղբյուր՝ Գազպրոմ Արմենիա)

Ռուսաստանից Հայաստան մատակարարվող բնական գազի գինը շարունակում է պահպանվել արտոնյալ մակարդակում՝ 177.5 ԱՄՆ դոլար 1000 խմ դիմաց (հաշվի առնելով կալորիականության գործակիցը), մինչդեռ եվրոպական շուկաներում բնական գազի գինը ս.թ. հուլիսի դրությամբ գերազանցում է 600 ԱՄՆ դոլարը, իսկ 2022 թ. գարնանը՝ ռուս-ուկրաինական էսկալացիայի ֆոնին, այն գերազանցել էր 3500 ԱՄՆ դոլարը: Սրանք են այն շուկայական գնները, որոնց կիրառումը Հայաստանի համար կարող են խորքային ռիսկեր ձևավորել երկրի սոցիալ-տնտեսական անվտանգության առումով:

Երկրի էլեկտրաէներգիայի արտադրության զգալի մասը՝ ավելի քան 40%-ը, ապահովվում է գազով աշխատող ջերմաէլեկտրակայանների միջոցով: Հետևաբար, գազի գնի ցանկացած փոփոխություն անմիջապես ազդում է ոչ միայն բնակչության ծախսերի, այլև ամբողջ տնտեսության մրցունակության վրա:

Գազի արտոնյալ պայմանների վերանայման դեպքում հետևանքները կարող են լինել բազմաշերտ.

- կաճեն բնակչության կոմունալ վճարները,
- կբարձրանա էլեկտրաէներգիայի արտադրության ինքնարժեքը,
- կավելանա արդյունաբերական հատվածի ծախսային բեռը,
- կուժեղանա գնաճը,
- կավելանան պետական բյուջեի սոցիալական պարտավորությունները:

Այս ամենը տեղի կունենա մի ժամանակահատվածում, երբ Հայաստանի ֆինանսական համակարգն արդեն բախվում է լրացուցիչ արտաքին և ներքին ճնշումների: Հատկանշական է, որ Երևանը վերջերս դիմել է Համաշխարհային բանկի խմբի մաս կազմող Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին՝ 170 մլն ԱՄՆ դոլարի բյուջետային աջակցության վարկ ստանալու նպատակով: Միայն այս հանգամանքը խոսում է Հայաստանի առկա բյուջետային քաղաքականության իրական պատկերի մասին:

Այս համատեքստում էներգետիկ հարցը վերածվում է ոչ միայն արտաքին քաղաքական, այլև ազգային անվտանգության խնդրի:

Եվրոպական աջակցության հնարավորությունները և սահմանները

Հայաստանի էներգետիկ ապագայի վերաբերյալ կարևոր հայտարարություններ են հնչում նաև Եվրամիության բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից: Սույն թվի հուլիսի 2-ին Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտարարել է, որ ԵՄ-ն պատրաստ է աջակցել Հայաստանին հնարավոր էներգետիկ մարտահրավերների դեպքում՝ հղում կատարելով Մոլդովայի և Ուկրաինայի փորձին:[4] Վատ շարք չէ, ինչ խոսք: Մոլդովա՝ երկիր, որը պատրաստ է եվրաինտեգրման անվան տակ դառնալ այլ պետության՝ Ռումինիայի մաս: Ուկրաինա՝ երկարատև պատերազմի մեջ խրված պե-

տություն՝ մարդկային, տարածքային և տնտեսական հսկայական կորուստներով:

Բրյուսելի հնարավոր աջակցության կապակցությամբ մի քանի հարց է առաջանում:

1. Որքա՞ն երկար կարող է տրամադրվել այդ աջակցությունը: Կարճաժամկետ սուբսիդիաները, ընթացիկ խնդիրների լուծման համար դրամաշնորհների հատկացումը, գուցե, վատ չեն: Սակայն դժվար թե դրանք համակարգային մակարդակում լուծեն էներգետիկ անվտանգության ապահովման հարցը:

2. Ֆոն դեր Լայենի խոսքով՝ ԵՄ-ն նաև կաջակցի Հայաստանին վերականգնվող էներգետիկայի (ՎԷ) ոլորտում: Սա, իհարկե, դրական է, սակայն բավարար չէ կայուն էներգամատակարարման համար: ՎԷ կայանները, ի տարբերություն ՋԷԿ-երի և ԱԷԿ-երի, ունեն տեղակայված հզորության օգտագործման ցածր գործակից: Եթե ՎԷ զարգացման միջոցով հնարավոր լիներ ապահովել էներգետիկ անվտանգություն, ապա բազմաթիվ եվրոպական երկրներ չէին պահպանի գազային գեներացիան և չէին վերադառնա ատոմային էներգետիկային:

3. Ինչպե՞ս վերաբերվել հայկական գազատրանսպորտային համակարգին, որը, ինչպես նշեցինք, Ռուսաստանի սեփականությունն է: Սեփականատիրոջ փոփոխությո՞ւն: Դժվար թե Բրյուսելը աջակցության անվան տակ նման արմատական քայլեր նկատի ունենա: Հետևաբար՝ անկախ աջակցությունից, Հայաստանի ԳՏՀ-ի 100%-անոց պատկանելությունը «Գազպրոմին» մնում է կարևոր, եթե ոչ առանցքային գործոն հանրապետության էներգետիկ իրականության համար:

4. Արդյո՞ք Եվրահանձնաժողովում մոռացել են աշխարհագրական գործոնի մասին: Մոլդովական և ուկրաինական ուղղություններով ԵՄ փորձը խիստ սպեցիֆիկ է: Մոլդովայի կողքին կա Ռումինիա՝ որպես «մետրոպոլիա», որը նրան մատակարարում է բնական գազ: Ուկրաինան գազ է ստանում ռեվերսային հոսքերով՝ նույնպես Եվրոպայից: Այլ կերպ ասած՝ ԵՄ-ի էներգետիկ աջակցությունը Մոլդովային և Ուկրաինային ունի հստակ աշխարհագրական հիմքեր: Ոլորտից հեռու որոշ հանրային ու քաղաքական գործիչներ հայտարարում են, որ Հայաստանը Եվրոպայից կարող է հեղուկացված գազ ներկրել: Զուտ հռետորական մակարդակում հեռանկարային է հնչում, սակայն իրականում նման մատակարարումների համար, լոգիստիկ խնդիրներից զատ, անհրաժեշտ է լուծել մի կարևոր խնդիր, այն է՝ ձևավորել Հայաստանում միլիարդավոր դոլարների ներդրումներ պահանջող ռեգազիֆիկացիոն հզորություններ, առանց որոնց ներկրված հեղուկացված գազը հնարավոր չի լինի օգտագործել առկա ԳՏՀ-ում:

Ամեն դեպքում, այստեղ անհրաժեշտ է հստակ տարբերակել երկու հասկացություն՝ **աջակցություն** և **համակարգային լուծում**: Աջակցությունը կարող է մեղմել ճգնաժամային իրավիճակը, սակայն համակարգային լուծումը պահանջում է նոր ենթակառուցվածքներ, ներդրումներ և երկարաժամկետ ռազմավարություն:

Հատկանշական է, որ ս.թ. մայիսին Հայաստան-ԵՄ գագաթնաժողովի արդյունքներով ընդունված համատեղ հռչակագրի մեջ[5] էներգետիկային վերաբերող հատվածներն առաջին հայացքից ներկայացվում են որպես զարգացման, արդիականացման և «կապակցվածության» օրակարգ: Սակայն այդ ձևակերպումների խորքում թաքնված է ավելի լուրջ խնդիր՝ ենթակառուցվածքային վերահսկողության աստիճանական վերաձևում:

Էներգետիկայի մասին հատվածներում շեշտվում են դիվերսիֆիկացումը, «էներգետիկ անցումը», ցանցերի ամրապնդումը և եվրոպական շուկաների հետ ինտեգրումը: Բայց այստեղ առանցքային խնդիրը ոչ թե էներգետիկայի զարգացումն է, այլ այն, թե որ, իսկ

ավելի շուտ՝ ում տրամաբանությամբ է այդ զարգացումն իրականացվելու: Դիվերսիֆիկացումը ներկայացվում է որպես կախվածության նվազեցում, սակայն իրականում այն կարող է վերածվել կախվածության ուղղակի փոփոխության՝ դեպի եվրոպական կարգավորիչ և տեխնոլոգիական համակարգեր:

Ամենազգայուն կետը միջուկային էներգետիկան է: Հայկական ԱԷԿ-ի շահագործումից դուրսբերման ճանապարհային քարտեզի վերաբերյալ ԵՄ աջակցությունը ձևակերպվում է որպես տեխնիկական և անվտանգային համագործակցություն, սակայն փաստացի այն արձանագրում է մի գործընթաց, որի վերջնարդյունքը ակնհայտ է՝ գործող ատոմային բլոկի փակումը: Հարց է առաջանում՝ ինչով է այն փոխարինվելու: Հռչակագրում դրա մասին հստակ պատասխան չկա: Սա նշանակում է, որ Հայաստանի էներգետիկ համակարգի բազային, կայուն հզորությունը դրվում է հարցականի տակ՝ առանց համարժեք այլընտրանքի: Հիշեք Իգնալինի ԱԷԿ-ը, որը կոնսերվացվեց Լիտվայի ԵՄ անդամակցելուց հետո՝ առանց նոր հզորությունների ձևավորման: Արդյունքում Լիտվան առ այսօր ստիպված է թանկ էլեկտրաէներգիա ներկրել Սկանդինավիայից:

Ու ամենակարևորը՝ հռչակագրում խոսվում է Սևծովյան էլեկտրամալուխին Հայաստանի միանալու հեռանկարի մասին: Վերջինս ԵՄ-Ադրբեջան համատեղ մի նախաձեռնություն է, որը կոչված է ադրբեջանական «կանաչ» էներգիան արտահանել եվրոպական շուկա: Ակնհայտ է, որ առանց կայուն գեներացնող հզրությունների Հայաստանն այդ հաղորդակցության մեջ պարզապես անելիք չունի: Ակնհայտ է նաև, որ առկա պայմաններում Բաքուն ամեն կերպ խոչընդոտելու է Հայաստանի միացումը ադրբեջանական լոբբիզմի արդյունք հանդիսացող այդ մալուխին:

Եզրակացություն

Հայաստանի առջև այսօր ծառացած հիմնական խնդիրը պարզապես արտաքին քաղաքական վեկտորի ընտրությունը չէ: Խնդիրը շատ ավելի խորքային է. արդյո՞ք Հայաստանն ունի բավարար տնտեսական, տեխնոլոգիական և ենթակառուցվածքային կարողություններ իր արտաքին քաղաքական վերադասավորումներն առավել անվտանգ կերպով իրականացնելու համար:

Էներգետիկ համակարգերը չեն փոխվում քաղաքական հայտարարություններով: Դրանք փոխվում են երկարաժամկետ ներդրումներով, միլիարդավոր դոլարների ծրագրերով, նոր ենթակառուցվածքներով, տեխնոլոգիական լուծումներով և կայուն պայմանագրերով: Հայաստանի էներգետիկ համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում խորապես ներկայացված է ռուսական գործոնը՝ ապահովելով երկրի էներգետիկ անվտանգությունն ու կայունությունը: Միևնույն ժամանակ, եվրաինտեգրման քաղաքականությունն ինքնին չի հանդիսանում էներգետիկ անվտանգության երաշխիք, եթե դրա հիմքում չկա մանրակրկիտ հաշվարկված ենթակառուցվածքային ռազմավարություն:

Հղումներ

1 https://www.rbc.ru/politics/26/05/2026/6a15fb6f9a794724253b296a?utm_referrer=https%3A%2F%2Fwww.google.com%2F
2 https://caspianbarrel.org/ru/2025/12/azerbajdzhan-ponizil-prognoz-po-dobyche-gaza-v-2026-2028-gg/
3 https://armenia.gazprom.ru/press/news/2025/12/1763/
4 https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2026/07/02/Nikol-Pashinyan-Annuaunsment/
5 https://data.consilium.europa.eu/doc/document/ST-8799-2026-INIT/en/pdf

Հայաստանի մարտահրավերներն ու սպառնացող վտանգները՝ աշխարհաքաղաքական իրադարձությունների ծիրում

Անի Մելքոնյան
Պատմաբան

Այն, որ աշխարհում շատ բան այլևս նախկինի պես չէ, շատ վաղուց պարզ է: Աշխարհի վերափոխման, անվերջանալի թվացող հակամարտությունների ու պատերազմների սկիզբը դրվեց հայկական Արցախում, որը զոհաբերվեց համաշխարհային՝ գլոբալիզմի շահերին:

Ինչպես ասում են՝ «առաջին ծիծեռնակը» ռուս-ուկրաինական պատերազմն է՝ 2022 թ. «Փետրվարի 24-ի գիշերը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է Ուկրաինայի դեմ լայնածավալ ռազմական գործողություններ սկսելու մասին: Ըստ Պուտինի՝ գործողության նպատակը այն մարդկանց պաշտպանությունն է, որոնք «ութ տարի շարունակ ցեղասպանության են ենթարկվում Կիևի ռեժիմի կողմից»: Պուտինն ընդգծել է, որ Ռուսաստանի ծրագրերում չկա բռնազավթել Ուկրաինայի տարածքը, և այդ գործողությունն անվանել է «ստեղծվող սպառնալիքից ինքնապաշտպանություն»[1] - ու թեև շատերը մտածում էին, որ պատերազմը շատ արագ կավարտվի, որովհետև, ըստ ռուսամետների՝ Ռուսաստանը շատ կարճ ժամանակում «Ուկրաինայի հարցերը կլուծի» կամ ըստ արևմտամետների՝ Արևմուտքը Ուկրաինայի միջոցով «ամիսների ընթացքում կքանդի Ռուսաստանը», բայց քաղաքականությունից քիչ թե շատ հասկացողների համար պարզ էր, որ սկսվել է հյուծիչ ու երկարատև մի պատերազմ, որն ի սկզբանե ոչ թե ուղղակի ռուս-ուկրաինական պատերազմ էր՝ երկու ազգակից ժողովուրդների միջև առաջացած հակասությունների տիրույթում, այլ համաշխարհային խոշոր խաղացողների միջև սկսված արյունալի բախում էր, որն իր անխուսափելի ազդեցությունն էր ունենալու աշխարհաքաղաքական հետագա զարգացումների վրա:

Արդեն չորս տարուց ավելի ձգվում է ռուս-ուկրաինական պատերազմը, և ամեն անգամ, երբ թվում է, թե հանգուցալուծմանն է մոտենում, այն բռնկվում է մի նոր թափով ու ավելի աղետալի հետևանքներով: Այս պատերազմի վերջը կարծես չի երևում, բայց դրա ավարտին անհամբեր սպասում են հատկապես թուրքական աշխարհում, և սպասում են՝ որ պատերազմը կավարտվի Ռուսաստանի պարտությամբ:

Ինչո՞ւ, ի՞նչ շահ ունի թուրքական աշխարհը պարտված ու թույլ Ռուսաստանի գոյությունից: Բանն այն է, որ Ռուսաստանը՝ Հայաստանի հետ միասին, Մեծ Թուրանի ճանապարհին ընկած խոչընդոտ է, և թուրքերն այլևս չեն թաքցնում, որ Ռուսաստանի թուլացումն ու տարածաշրջանից հեռանալը՝ նշանակում է, որ «եկել է Թուրքիայի ժամանակը»: Վերջերս այս մասին Թուրքիայում բացահայտ խոսել են պանթյուրքիզմի

երկրորդ փուլի իրականացման ու Մեղրիի միջանցքը «Թուրանի միջանցք» դառնալու շուրջ քննարկումների ժամանակ,[2] որտեղ ակնհայտորեն դրսևորվել են Թուրքիայի ծրագրերը Հայաստանի, Ռուսաստանի ու աշխարհի և, իրենց ընկալմամբ, «մեծ Թուրանի» վերաբերյալ:

Պանթյուրքիզմի մասին շատ ենք խոսել, միայն ասենք, որ պանթյուրքիզմ ու մեծ Թուրան, նշանակում է հայ ժողովրդի ամբողջական բնաջնջում ու Հայաստանի վերացում:

Նույնը, իհարկե սպասում է Ռուսաստանին ու քրիստոնյա աշխարհին, որոնք այս ամենը դեռևս չեն գիտակցում, գաղափար չունենալով՝ թե ինչ են իրականում նշանակում թուրք և Թուրքիա հասկացությունները:

Իսկ մե՞նք, թուրքին շատ լավ ճանաչող ու այս ամենի աղետալի հետևանքները գիտակցող հայերս, ի՞նչ ենք պատրաստվում անել: Ազգային անվտանգության հայեցակարգ ունե՞նք, ունե՞նք արտակարգ իրավիճակներում գործելու համար նախատեսված, գրեթե կազմավորված մի «ստվերային իշխանություն», որն ամեն ինչ իր ձեռքը կվերցնի ու կկանխի նախ՝ Սյունիքի, ապա ամբողջ Հայաստանի հայաթափումը:

Պարզ է, որ եթե շարունակենք նույն կերպ, ամենաշատը մեկ տարում Հայաստանի ու հայերի հարցերը կլուծեն և պանթյուրքիզմի ֆաշիստական գաղափարախոսության երկրորդ փուլն ավարտին կհասցնեն...., մանավանդ, որ Ռուսաստանի տարածաշրջանային հարցերում պասիվությունը և մի տեսակ

«ինքնամփոփ» դառնալը շատ խոսուն է և աղոտ կերպով հիշեցնում է 1917 թ. Ռուսաստանը, այս տարածաշրջանից նրա հեռացումն ու հետագա իրադարձությունները (որոնք ամենաշատը հայ ժողովուրդն իր մաշկի վրա զգաց):

Անցյալի պատմությունից դասեր քաղել է պետք ու պատրաստ լինել, վատթարագույն զարգացումներին..., մե՛նք իհարկե, պատրաստ չենք, պատմությունից դասեր քաղելն էլ մեզ համար չէ:

Ինչևէ, անցնենք առաջ և խոսենք մեզ համար մեկ այլ վտանգավոր իրադարձությունից՝ ԱՄՆ-Իսրայել-Իրան պատերազմից, որը սկսվել է դեռ 2025 թ. ամռանը. «Հունիսի 13-ի առավոտյան, Իսրայելի զինված ուժերը իրականացրել են լայնածավալ հարձակման շարք Իրանի վրա՝ «Մագլցող առյուծ» ռազմական գործողության շրջանակում: Հարվածները հիմնականում ուղղված են եղել Թեհրանի, Նաթանզի, ինչպես նաև մի շարք ռազմական և միջուկային օբյեկտների վրա: Միջազգային մամուլի և տարածաշրջանային աղբյուրների համաձայն՝ այս հարձակման հետևանքով զոհվել են Իրանի բարձրագույն ռազմական ղեկավարության և գիտական ոլորտի առանցքային ներկայացուցիչներ»:

Իրանն արագ արձագանքեց՝ հակադարձելով «Խիստ պատիժ» գործողությամբ: Իրանի պատասխան հարվածներին (ավելի քան 550 բալիստիկ հրթիռ և 1000 պայթուցիկ ԱԹՍ) դիմակայելու համար Իսրայելն օգտագործել է իր բազմաշերտ հակահրթիռային պաշտպանության համակարգը:

Իրանը թիրախավորել էր Իսրայելի ռազմական օբյեկտները, ներառյալ՝ Թել Ավիվի մերձակայքում գտնվող ռազմաբազան և «Arrow» հակահրթիռային պաշտպանության համակարգի կայանները: Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին հայտարարել է, որ գործողությունները «պաշտպանական» էին և նպատակ ունեին «պատժել ագրեսորին»: Պատերազմը զգալի կորուստներ պատճառեց երկու կողմերին էլ:[3]

Իրանի հուժկու հակահարվածի արդյունքում, ռազմական գործողությունները կանգ առան ու մինչ հայաստանյան «քաղաքական մտքի գիգանտներին» թվում էր, թե Իրան-Իսրայել պատերազմն ավարտվեց, այն ժամանակավոր դադարի փուլում էր գտնվում ու նոր թափով պայթեց 2026-ին՝ փետրվարի 28-ին Իսրայելն ու ԱՄՆ-ը համատեղ ռազմական գործողություն սկսեցին Իրանի Իսլամական Հանրապետության դեմ՝ օդային հարվածներ հասցնելով Թեհրանի մի շարք պետական թիրախների:[4]

Իրանը, իհարկե, ժամերի ընթացքում կազմակերպելով «համակարգված հարվածներ սկսեց Իսրայելի ու Մերձավոր Արևելքում տեղակայված ամերիկյան բոլոր ռազմաբազաների ուղղությամբ՝ հրթիռներ ուղարկելով, ըստ էության, Պարսից ծոցի բոլոր երկրներ: Զուգահեռաբար՝ Իրանից կոշտ հայտարարություններ հնչեցին, որ Իրանի համար «կարմիր գծեր» չեն լինելու, և Իրանը թիրախավորելու է այն երկրների տարածքը, որտեղից կուղղվեն հարվածներ Իրանին»:[5]

Թեև, ԱՄՆ-Իսրայել տանդեմի հարվածների հետևանքով Իրանը կորցրեց իր ռազմա-քաղաքական ղեկավարության մեծ մասին (գլխավորապես պատերազմի առաջին ժամերին), բայց Իրանի կողմից հավասարը-հավասարին տրված պատասխանների արդյունքում, ինչպես նաև «Հորմուզի» նեղուցի փակման հետևանքով Արևմուտքի ու, առհասարակ, աշխարհի գրեթե բոլոր երկրների կրած ահռելի տնտեսական վնասներից հետո, 2026 թ. հունիսի 13-ին հայտնի դարձավ, որ «ԱՄՆ-ն ու Իրանը համաձայնեցրել են խաղաղության համաձայնագրի վերջնական տեքստը: «Իրան-ԱՄՆ հուշագիրը երբևէ այսքան մոտ չի եղել, սակայն ՋԼՄ-ները պետք է զերծ մնան բովանդակության վերաբերյալ ենթադրություններից: Մանրամասները ժամանակին կներկայացվեն հանրությանը»,- այս մասին X-ի իր էջում գրել է Իրանի ԱԳ նախարար Աբբաս Արաղչին»:[6]

Աշխարհի ոգևորության համապատկերում Իրանի նախագահ Մաքսուդ Փեզեշքիանը հունիսի 15-ին հայտարարեց. «Ձեռք բերված համաձայնությունը կարևոր քայլ է պատերազմի ավարտի և բանակցությունների մեկնարկի համար, սակայն վերջնական համաձայնագիրը դեռ պետք է մշակվի:

Իրանի Իսլամական Հանրապետությունը պատրաստ է բոլոր սցենարներին, և կառավարությունը, անկախ նրանից, համաձայնության կհասնի, թե ոչ, կենտրոնացած է ժողովրդին անկեղծորեն ծառայելու վրա: Իրանի ժողովուրդը սովորել է իր նահատակ իմամի դասը. նվաստացումը չի կարող հանդուրժվել»:[7]

Արդեն հունիսի 17-ին հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ն ու Իրանը համաձայնեցրել են 14 կետից բաղկացած «խաղաղության հուշագիր», որը նախատեսում էր.

Իրանի նկատմամբ պատժամիջոցների աստիճանական վերացում, նավթային արտահանման վերականգնում, սառեցված ակտիվների ապաշրջափակում և մինչև 300 միլիարդ դոլարի տնտեսական զարգացման ծրագիր:[8]

Հուշագրի 14 կետերը հետևյալն էին.

«1. Պատերազմի ավարտ

ԱՄՆ-ն և Իրանը պարտավորվում են անմիջապես և մշտապես դադարեցնել ռազմական գործողությունները բոլոր ուղղություններով, այդ թվում՝ Լիբանանում: Կողմերը նաև պարտավորվում են չսպառնալ միմյանց և չկիրառել ուժ:

2. Ինքնիշխանության հարգում

Կողմերը համաձայնում են հարգել միմյանց ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը և չմիջամտել ներքին գործերին: Սա նշանակում է, որ Վաշինգտոնը հրաժարվում է Իրանում իշխանափոխության քաղաքականությունից:

3. Վերջնական համաձայնագիր՝ 60 օրվա ընթացքում

Կողմերը նախատեսում են առավելագույնը 60 օրում մշակել և ստորագրել վերջնական խաղաղության համաձայնագիր, որը կարող է երկարաձգվել փոխադարձ համաձայնությամբ:

4. Ամերիկյան ծովային շրջափակման վերացում

ԱՄՆ-ն պարտավորվում է 30 օրվա ընթացքում ամբողջությամբ վերացնել Իրանի նկատմամբ կիրառվող ծովային շրջափակումը և հետ քաշել իր լրացուցիչ ռազմական ուժերը տարածաշրջանից:

5. Հորմուզի նեղուցի բացում

Իրանը համաձայնում է 60 օրով անվճար և անվտանգ անցում ապահովել առևտրային նավերի համար Հորմուզի նեղուցով: Հետագայում նեղուցի կառավարման նոր մեխանիզմը պետք է մշակվի Օմանի և Պարսից ծոցի մյուս երկրների հետ:

6. 300 միլիարդ դոլարի տնտեսական փաթեթ

ԱՄՆ-ն տարածաշրջանային գործընկերների հետ նախատեսում է Իրանի վերակառուցման և տնտեսական զարգացման համար առնվազն 300 միլիարդ դոլարի ներդրումային ծրագիր: Ֆինանսավորման մեխանիզմները պետք է հստակեցվեն վերջնական համաձայնագրում:

7. Պատժամիջոցների վերացում

Վաշինգտոնը պարտավորվում է վերացնել Իրանի նկատմամբ կիրառվող ամերիկյան և միջազգային պատժամիջոցները, ներառյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշ սահմանափակումները:

8. Միջուկային ծրագիր

Իրանը վերահաստատում է, որ չի ստեղծելու և չի ձեռք բերելու միջուկային զենք: Սակայն ուրանի հարստացման և խաղաղ ատոմային էներգիայի ծրագրերի շուրջ վերջնական պայմանավորվածություններ դեռ չկան:

9. Ստատուս քվոյի պահպանում

Մինչև վերջնական համաձայնագիրը Իրանը պահպանում է իր ներկայիս միջուկային ծրագիրը, իսկ

ԱՄՆ-ն պարտավորվում է նոր պատժամիջոցներ չսահմանել և տարածաշրջան լրացուցիչ զորքեր չուղարկել:

10. Նավթի արտահանման թույլտվություն

Հուշագրի ստորագրումից անմիջապես հետո ԱՄՆ-ն ժամանակավոր բացառություններ է տրամադրելու, որպեսզի Իրանը կարողանա արտահանել նավթ և նավթամթերք՝ օգտվելով նաև միջազգային բանկային և ապահովագրական ծառայություններից:

11. Սառեցված ակտիվների ապաշրջափակում

ԱՄՆ-ն համաձայնում է Իրանի համար հասանելի դարձնել սառեցված կամ սահմանափակված ֆինանսական միջոցները: Տարբեր գնահատականներով դրանց ծավալը կարող է կազմել 124–167 միլիարդ դոլար:

12. Վերահսկման մեխանիզմ

Ստեղծվելու է հատուկ համակարգ, որը կհետևի հուշագրի և ապագա վերջնական համաձայնագրի կատարմանը:

13. Հաջորդ փուլերի բանակցություններ

Վերջնական համաձայնագրի շուրջ բանակցությունները կսկսվեն միայն այն բանից հետո, երբ կողմերը կատարեն առաջին փուլով ստանձնած հիմնական պարտավորությունները՝ Հորմուզի բացումը, շրջափակման վերացումը և ակտիվների ապաշրջափակումը:

14. ՄԱԿ-ի ԱԽ հաստատում

Վերջնական համաձայնագիրը պետք է հաստատվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պարտադիր ուժ ունեցող բանաձևով, ինչը դրա իրականացումը կդարձնի միջազգային իրավական պարտավորություն»:[9]

Թվում էր, թե վերջ՝ պատերազմն ավարտվեց, 1979 թ. ձգվող ԱՄՆ-Իրան հակամարտությունն էլ մտավ լուծման փուլ, սակայն սկզբունքային հարցերում Իրանի դրվատելի վճռականությունն ու ազգային-պետական ու կրոնական գաղափարներին հավատարմությունը, և ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ամբարտավան պահվածքն ու հայտարարությունները, Իսրայելի կողմից Լիբանանին հասցվող հարվածներն ու նրա տարածքային ամբողջականության խախտումը հուշում էին այն մասին, որ «խաղաղության հուշագիրը» ընդամենը ժամանակավոր հրադադարի փաստաթուղթ է դառնալու... հետագա իրադարձությունները եկան փաստելու այդ իրողությունը: Ընդամենը մեկ ամիս անց՝ ռազմական գործողու-

թյունները վերսկսվեցին. հուլիսի 13-ին ԱՄՆ նախագահ Թրամփը Անկարայում ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի ժամանակ հայտարարեց, որ «Իրանի հետ հրադադարի ռեժիմը փաստացի այլևս չի գործում»[10]- ավելացնելով, որ ամերիկացի զինվորականները հուլիսի 8-ի գիշերը «շատ հզոր հարվածներ» են հասցրել Իրանին: Միաժամանակ «Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հայտարարել էր, որ իրանական զորքերը անօդաչուներով և հրթիռներով հարձակվել են Պարսից ծոցում գտնվող 85 թիրախի ուղղությամբ, որոնք կապված են ամերիկյան կողմի հետ»:[11]

Սա, նշանակում է, որ Մերձավոր Արևելքում պատերազմը շարունակվում է, իսկ պատերազմը Մերձավոր Արևելքում արմատապես փոխում է տարածաշրջանային ուժային ճարտարապետությունը: Չի բացառվում, որ բախումը վերաճի երկարատև ռազմական հակամարտության՝ ներառելով ոչ միայն հրթիռային հարվածներ, այլև ծովային ուղիների ապակայունացում և դաշնակցային ակտիվացում, ինչը նշանակում է, որ Հարավային Կովկասը չի կարող մնալ այդ զարգացումների լուսանցքում: Հայաստանի համար հետևանքները կլինեն բազմաշերտ՝ անվտանգային, տնտեսական և դիվանագիտական հարթություններում:

Որքան էլ որ Հայաստանում չեն գիտակցում, բայց Հայաստանի Հանրապետությունը կանգնած է շատ լուրջ վտանգների և ֆիզիկական գոյությանը սպառնացող աղետի առջև, որին Հայաստանում, իհարկե պատրաստ չեն. պատրաստ չեն, որովհետև նորից ու նորից հույսը «թղթե շերեփն» է, ակնկալիքը, որ Ադրբեջանը իր կողմից ստորագրված հրադադարի հուշագիրը չի խախտի ու լայնածավալ պատերազմ չի սկսի: ԱՄՆ-ի ու Իրանի օրինակը, սակայն, ցույց տվեց, որ թղթին ու դիվանագետների ստորագրություններին վստահել պետք չէ, պետք է յուրաքանչյուր վայրկյան պատրաստ լինել պատերազմի, անգամ, եթե ինքդ քեզ համոզել ես, թե «խաղաղության դարաշրջան» ես բացել:

Ինչ կլինի, եթե ԱՄՆ-Իրան և Ռուսաստան-Ուկրաինա պատերազմները ավելի երկար ձգվեն՝ կամ ավարտվեն Հայաստանի դաշնակիցների (որոնց հետ հարաբերությունները հետևողականորեն փչացվեցին՝ վերջին 7-8 տարիներին) պարտությամբ.

1. Մեծ է հավանականությունը, որ ԱՄՆ-Իսրայել-Իրան և Ռուսաստան-Ուկրաինա պատերազմները որևէ փուլում կարող են պաշտոնապես վերաճել համաշխարհային պատերազմի (խորքում, դրանք հենց համաշխարհային պատերազմներ են, դեռևս անմիջականորեն միայն մի քանի երկրների մասնակցությամբ):

2. Այս երկու պատերազմների երկարաձգումը կամ Հայաստանի երկու դաշնակիցներից որևէ մեկի պարտությունը, կարող է նշանակել պատերազմ թուրքերի դեմ՝ պանթյուրքիզմի իրականացման ճանապարհով ընթացող Թուրքիայի հարձակում Հայաստանի վրա՝ իհարկե՝ Ադրբեջանի ձեռամբ:

Իսկ որ պատերազմի վտանգ կա, այդ մասին ի՛նքը՝ «խաղաղություն բերած» Փաշինյանը, հայտարարեց. «սեպտեմբերին լինելու ա աղետաբեր պատերազմ, եթե «Քաղաքացիական պայմանագիրը» սահմանադրական մեծամասնություն չունենա»[12] - ՔՊ-ն ընտրությունների արդյունքում սահմանադրական մեծամասնություն չունեցավ, ուրեմն ի՞նչ... պատրաստվել պատերազմի՞, թե՞ սպասել հերթական հրաշքին, որը Հայաստանն ու հայությանը կփրկի հերթական ցեղասպանությունից:

Ամեն դեպքում, պատերազմի հավանականությունը փոքր չէ, հատկապես եթե հաշվի առնենք, որ հայաստանյան ներքաղաքական իրավիճակն անկայուն է, քանզի սոցիալական թշվառության ճիրաններում հայտնվող հայ ժողովրդի ընդվզումը, վաղ թե ուշ, անխուսափելի է, իսկ թվացյալ հանդարտությունն ու հանգստությունը լռություն է փոթորկից առաջ...., այդ ընդվզման համապատկերում Ադրբեջանը կարող է փորձել փրկել «դաշնակից» Փաշինյանին՝ պատերազմ սկսելով Հայաստանի դեմ:

Կարող է մեկ այլ սցենար խաղարկվել՝ 300.000 ադրբեջանցիների ՀՀ-ում վերաբնակեցնելն ու Ադրբեջանին նոր տարածքային զիջումները գլուխ բերվեն հերթական բեմադրված պատերազմով:

Ինչևէ, առաջիկա ամիսները և գալիք մեկ տարին վճռորոշ են լինելու ինչպես աշխարհաքաղաքական զարգացումների, այնպես էլ Հայաստանի վրա դրանց ազդեցության առումով՝ Հայաստանը և հայ ժողովուրդը կանգնած են լինել-չլինելու հրամայականի առջև, և այս հարցի պատասխանը կտա հայ ժողովուրդը՝ իր քաղաքական դաշտի հետ միասին՝ վերահաս վտանգներին իր արձագանքով.... ■

Ծանոթագրություններ

1. https://www.aravot.am/2022/02/24/1249594/
2. https://www.facebook.com/share/v/1HKWrT9Ebn/
3. Գևորգյան Ն., Իրան-Իսրայել 12-օրյա հակամարտությունը և Ադրբեջանի հնարավոր ներգրավվածությունը., Դրոշակ թիվ 7, 2025., էջ 13:
4. https://168.am/2026/02/28/2369956.html
5. Նույնը:
6. https://mediahub.am/hy/post/cml2sfwjx9ssrhqe
7. https://www.infoport.am/am/news/international/verjnakan-hamadzaynagir-der-chka-irani-nakhagahy-amn-i-het-hamadzaynutyan-masin
8. https://armlur.am/1569519/
9. Նույնը:
10. https://hetq.am/hy/article/182559
11. Նույնը
12. https://artsakh.news/am/news/354427

Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնության ազդեցությունը Թուրքիա–Իսրայել հարաբերությունների արդի դինամիկայի վրա

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

Թուրքիայի Հանրապետության և Իսրայելի պետության հարաբերությունները Մերձավոր Արևելքի ամենաբարդ և բազմաշերտ երկկողմ հարաբերություններից են: Դրանք ձևավորվել են ոչ միայն քաղաքական և տնտեսական շահերի, այլև տարածաշրջանային անվտանգության, աշխարհաքաղաքական մրցակցության և միջազգային ուժային հավասարակշռության ազդեցության ներքո: Չնայած երկու պետություններն ունեն համագործակցության երկարամյա փորձ, վերջին տասնամյակում նրանց միջև առկա հակասությունները գնալով խորացել են՝ վերածվելով ռազմավարական անվստահության:

2023 թվականի հոկտեմբերի 7-ից հետո սկսված Գազայի պատերազմը դարձավ Թուրքիա–Իսրայել հարաբերությունների նոր շրջադարձային փուլ: Թուրքիայի ղեկավարությունը որդեգրեց առավել կոշտ քաղաքականություն Իսրայելի նկատմամբ՝ մեղադրելով վերջինիս միջազգային մարդասիրական իրավունքի խախտման, խաղաղ բնակչության դեմ անհամաչափ ուժի կիրառման և տարածաշրջանի ապակայունացման մեջ: Ի պատասխան՝ Իսրայելում սկսեցին վերանայվել Թուրքիայի նկատմամբ նախկին քաղաքական մոտեցումները, ինչն ազդեց ոչ միայն երկկողմ հարաբերությունների, այլև տարածաշրջանային ռազմավարական հաշվարկների վրա:

2026 թվականի ընթացքում նոր քաղաքական իրողություն ձևավորվեց այն բանից հետո, երբ Իսրայելի իշխանությունները նախաձեռնեցին Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Տասնամյակներ շարունակ Իսրայելը խուսափում էր նման քայլից՝ հաշվի առնելով Թուրքիայի հետ ռազմավարական համագործակցությունը, ինչպես նաև սեփական անվտանգային և դիվանագիտական առաջնահերթությունները: Սակայն վերջին զարգացումները ցույց են տալիս, որ այդ հաշվարկները զգալիորեն փոխվել են: Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն աստիճանաբար վերածվում է ոչ միայն պատմական արդարության, այլև Իսրայելի արտաքին քաղաքականության կարևոր գործոնի:

Այս համատեքստում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ճանաչման գործընթացը Թուրքիա–Իսրայել հարաբերությունների հետագա զարգացման վրա, և ինչ փոփոխություններ կարող են տեղի ունենալ տարածաշրջանային ուժային հավասարակշռությունում:

2026 թվականի հունիսի 28-ին Իսրայելի կառավարությունը միաձայն հավանություն տվեց Օսմանյան

կայսրությունում հայերի զանգվածային կոտորածները որպես ցեղասպանություն ճանաչելու առաջարկին:

Սակայն հուլիսի 19-ին լրատվամիջոցները տարածեցին, որ Քնեսեթում նախատեսված քվեարկությունը տեղի չի ունեցել: «Հաարեց» թերթի փոխանցմամբ՝ Իսրայելի ներկայացուցիչները Բաքվին վստահեցրել են, որ հարցը հանվել է խորհրդարանական օրակարգից: Թերթի իսրայելական աղբյուրի տվյալներով՝ վարչապետ Բենիամին Նեթանյահուն անձամբ է արգելափակել քվեարկությունն այն բանից հետո, երբ Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության խորհրդական Հիքմեթ Հաջիևը կապ է հաստատել վարչապետի գրասենյակի հետ: Թեև Ադրբեջանի ճնշումը հանգեցրել է նախաձեռնության ժամանակավոր սառեցման, այն արդեն իսկ դիտարկվում է որպես Իսրայելի արտաքին քաղաքականության էական վերանայում և Թուրքիայի նկատմամբ քաղաքական ուղերձ:

Երկար տարիներ Իսրայելը խուսափում էր պաշտոնական ճանաչումից՝ հաշվի առնելով Թուրքիայի հետ ռազմավարական հարաբերությունները, ինչպես նաև Ադրբեջանի հետ անվտանգության և էներգետիկ ոլորտներում համագործակցության կարևորությունը: Սակայն վերջին տարիներին, հատկապես Գազայի պատերազմի, Թուրքիայի հակաիսրայելական հռետորաբանության և երկկողմ հարաբերությունների խորացող ճգնաժամի պայմաններում, այդ քաղաքական հաշվարկները զգալիորեն փոխվել են: Իսրայելի

արտաքին գործերի նախարար Գիդեոն Սաարը նախաձեռնությունը ներկայացրեց որպես «բարոյական և պատմական պարտավորություն»՝ ընդգծելով, որ ցեղասպանության ժխտումը չի կարող համատեղելի լինել պատմական ճշմարտության և միջազգային պատասխանատվության սկզբունքների հետ:[1]

Թուրքիայի արձագանքը եղավ կտրուկ: Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց, որ Իսրայելի որոշումը «քաղաքական շարժառիթներով պայմանավորված քայլ է», որի նպատակը միջազգային հանրության ուշադրությունը Գազայի իրադարձություններից շեղելն է: Անկարան նաև ընդգծեց, որ նման որոշումները չեն փոխում Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ և հակասում են պատմական փաստերի թուրքական մեկնաբանությանը:[2]

Նույն տրամաբանությունը շարունակեց նաև նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Հանրային ելույթում նա հայտարարեց, որ Իսրայելի նախաձեռնությունը զրպարտություն է Թուրքիայի նկատմամբ և այն պայմանավորված է քաղաքական նպատակահարմարությամբ: Էրդողանը պնդեց, որ Թուրքիան իր պատմության ընթացքում ցեղասպանություն չի իրականացրել, իսկ Իսրայելի ղեկավարությանը մեղադրեց միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների և Գազայում իրականացվող ռազմական գործողությունների համար: Նրա խոսքով՝ պատմական հիշողությունը չի կարող օգտագործվել որպես արտաքին քաղաքական ճնշման գործիք:

Իսրայելի պաշտոնական դիրքորոշումը, իր հերթին, շեշտում էր, որ պատմական իրողությունների ճանաչումը չի կարող կախված լինել ընթացիկ քաղաքական հարաբերություններից: Իսրայելի ղեկավարության հայտարարություններում ընդգծվում էր, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը պատմական արդարության և ցեղասպանությունների կանխարգելման քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Այս մոտեցումը վկայում է, որ Իսրայելը վերջին տարիներին աստիճանաբար հեռանում է այն քաղաքականությունից, որի շրջանակներում ցեղասպանության ճանաչման հարցը պայմանավորված էր Թուրքիայի հետ հարաբերությունների պահպանմամբ:

Վերլուծական տեսանկյունից, կողմերի հայտարարությունները ցույց են տալիս, որ Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնությունն այլևս միայն պատմական հիշողության խնդիր չէ: Այն վերածվել է Թուրքիայի և Իսրայելի միջև ռազմավարական մրցակցության նոր գործոնի, որտեղ պատմական քաղաքականությունը կիրառվում է որպես արտաքին քաղաքական ազդեցության միջոց: Այս հանգամանքը վկայում է, որ պատմական հիշողության հարցերն աստիճանաբար ներառվում են ժամանակակից աշխարհաքաղաքական մրցակցության գործիքակազմում և ազդում են տարածաշրջանային ուժային հավասարակշռության վրա:

Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնությունը կարելի է դիտարկել ոչ միայն որպես պատմական արդարության վերականգնմանն ուղղված քայլ, այլև որպես Մերձավոր Արևելքում ձևավորվող նոր քաղաքական իրողությունների արտահայտություն: Վերջին տարիներին Թուրքիա–Իսրայել հարաբերություններում կուտակված տարաձայնությունները, որոնք պայմանավորված են Գազայի հակամարտությամբ, Սիրիայում և Արևելյան Միջերկրականում կողմերի մրցակցությամբ, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության վերաբերյալ տարբեր մոտեցումներով, հանգեցրել են փոխադարձ անվստահության խորացման: Այս համատեքստում Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնությունը ձեռք է բերում ոչ միայն պատմական, այլև ակնհայտ քաղաքական նշանակություն:

Թուրքիայի արձագանքը ցույց է տալիս, որ Անկարան շարունակում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը դիտարկել որպես իր արտաքին քաղաքականության և ազգային ինքնության դեմ ուղղված մարտահրավեր: Թուրքիայի ղեկավարությունը բազմիցս հայտարարել է, որ նման նախաձեռնությունները քաղաքական բնույթ ունեն և նպատակ ունեն ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Այս մոտեցումը, ամենայն հավանականությամբ, կպահպանվի նաև առաջիկայում, քանի որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը շարունակում է

մնալ Թուրքիայի արտաքին քաղաքականության առավել զգայուն թեմաներից մեկը:

Մյուս կողմից, Իսրայելի դիրքորոշման փոփոխությունը վկայում է նրա արտաքին քաղաքականության վերաիմաստավորման մասին: Եթե նախկինում պաշտոնական Թել Ավիվը խուսափում էր Հայոց ցեղասպանության ճանաչումից՝ հաշվի առնելով Թուրքիայի հետ ռազմավարական համագործակցության կարևորությունը, ապա ներկայումս այդ հաշվարկները զգալիորեն փոխվել են: Իսրայելի քաղաքական ղեկավարությունը փաստացի ցույց է տալիս, որ պատմական արդարության և բարոյական պատասխանատվության հարցերը կարող են դառնալ արտաքին քաղաքական որոշումների բաղադրիչ, հատկապես այն պայմաններում, երբ Թուրքիայի հետ հարաբերություններն արդեն կորցրել են նախկին ռազմավարական նշանակությունը:

Տարածաշրջանային մակարդակում այս գործընթացը կարող է ունենալ մի շարք հետևանքներ: Առաջին հերթին, այն կարող է խորացնել Թուրքիա–Իսրայել քաղաքական հակասությունները և սահմանափակել երկկողմ հարաբերությունների վերականգնման հնարավորությունները: Թեև տնտեսական համագործակցությունը որոշ ոլորտներում կարող է շարունակվել փոխադարձ շահերից ելնելով, քաղաքական և դիվանագիտական վստահության վերականգնումը կդառնա առավել բարդ: Երկրորդ, Իսրայելի դիրքորոշման փոփոխությունը կարող է խթանել այլ պետությունների և միջազգային կառույցների քննարկումները Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ՝ ամրապնդելով պատմական արդարության միջազգային օրակարգը:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնությունը դարձել է Թուրքիա–Իսրայել հարաբերությունների նոր լարվածության առանցքային գործոններից մեկը: Այն արտացոլում է ոչ միայն պատմական հիշողության նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը, այլև միջազգային հարաբերություններում արժեքային և քաղաքական գործոնների աճող փոխկապվածությունը: Վերջին զարգացումները վկայում են, որ պատմական արդարության հարցերը շարունակելու են մնալ ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացների կարևոր բաղադրիչ՝ ազդելով պետությունների արտաքին քաղաքականության, տարածաշրջանային անվտանգության և միջազգային դիվանագիտական հարաբերությունների վրա:

Հղումներ

1 https://www.newarab.com/news/israel-could-recognise-armenian-genocide-amid-turkey-tensions?utm_source=chatgpt.com

2 https://www.lemonde.fr/en/international/article/2026/06/28/israel-government-recognizes-armenian-genocide-in-rebuke-to-turkey_6754948_4.html?srsltid=AfmBOooPUZtSIii2SdIoAEXaL4yorczzB4FduWHj3lPXCLaW5VVb7BhZ&utm_source=chatgpt.com

Թուրքիայի պանթյուրքական քաղաքականության ժամանակակից դրսևորումները

Սաբինա Մուրադյան
Թուրքագետ, Ռուս-Հայկական Սլավոնական Համալսարանի դասախոս

XXI դարում Թուրքիան զգալիորեն ակտիվացրել է իր քաղաքականությունը թյուրքախոս պետությունների և ժողովուրդների նկատմամբ՝ փորձելով ընդլայնել ազդեցությունը ոչ միայն քաղաքական և տնտեսական, այլև մշակութային, կրթական և տեղեկատվական ոլորտներում: Այդ գործընթացի գաղափարական հիմքում ընկած է պանթյուրքիզմը, որը վերջին տասնամյակներում ձեռք է բերել նոր բովանդակություն և գործնական արտահայտություն:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականությունն առանձնանում է աշխարհաքաղաքական հավակնությունների ընդլայնմամբ: Եթե XX դարի մեծ մասում Անկարայի հիմնական ռազմավարական ուղղությունը եվրոպական ինտեգրման ձգտումն էր և ՆԱՏՕ-ի շրջանակներում համագործակցությունը, ապա XXI դարում նկատվում է նոր առաջնահերթությունների ձևավորում, որոնցից կարևորագույններից մեկը թյուրքախոս պետությունների և ժողովուրդների միջև համագործակցության խորացումն է:

Այս գործընթացը հիմնվում է ոչ միայն տնտեսական կամ քաղաքական շահերի, այլև ընդհանուր լեզվամշակութային ինքնության գաղափարի վրա: Թուրքիայի ղեկավարությունը վերջին տարիներին պարբերաբար շեշտում է «թյուրքական աշխարհի» միասնության անհրաժեշտությունը՝ այն ներկայացնելով որպես տարածաշրջանային կայունության, տնտեսական զարգացման և փոխադարձ անվտանգության կարևոր նախապայման: Այդ նպատակով ստեղծվել և ակտիվ գործունեություն են ծավալում մի շարք միջազգային կառույցներ, որոնց թվում առանձնանում են Թյուրքական պետությունների կազմակերպությունը (TDT), TÜRKSOY-ը (միջազգային մշակութային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1993 թվականին՝ թյուրքալեզու ժողովուրդների միջև մշակութային կապերի ամրապնդման, նրանց ընդհանուր ժառանգության պահպանման և աշխարհում դրա տարածման նպատակով: Այն հայտնի է որպես «Թյուրքական աշխարհի ՅՈՒՆԵՍԿՕ»), Diyanet-ը, որը զբաղվում է կրոնական հարցերով ոչ միայն թյուրքալեզու երկրներում, այլ նաև ոչ իսլամադավան երկրներում մուսուլման համայնքներում (հատկապես սունի ուղղվածության), ինչպես նաև կրթական, մշակութային և տեղեկատվական համագործակցության բազմաթիվ հարթակներ:

Օրինակ, 2009 թ. հիմնված Թյուրքական պետությունների կազմակերպությունը (ԹՊԿ), որի կազմի մեջ է մտնում 5 անդամ-երկիր՝ Ղազախստանը, Ուզբեկստանը, Ղրղզստանը, Թուրքիան, Ադրբեջանը և

2 դիտորդ-երկիր՝ Հունգարիան և Թուրքմենստանը, փնտրում է իր ազդեցությունը Վաշինգտոնում ամրապնդելու ուղիներ: Նրա ուշադրության կենտրոնում են առաջատար ամերիկյան վերլուծական-ուղեղային կենտրոնները: Հեղինակավոր Հադսոնի ինստիտուտը (Hudson Institute) վերջերս դարձել է Միացյալ Նահանգներում ԹՊԿ-ի շահերի լոբբիստական խոսափողը: Մայիսի 30-ին Հադսոնի ինստիտուտի կայքը հրապարակեց ավագ գիտաշխատող Լյուկ Քոֆիի՝ «Վաշինգտոնը պետք է համագործակցի թյուրքալեզու պետությունների հետ» վերնագրով ծրագրային հոդվածը: Հրատարակությունը ոչ միայն ակադեմիական վերլուծություն է, այլև Թրամփի վարչակազմին ուղղված գործողությունների ուղղակի կոչ: Քոֆին կոչ է անում պետքարտուղար Ռուբիոյին անցկացնել ԱՄՆ-ԹՊԿ գագաթնաժողով: Հեղինակը ամերիկացի քաղաքական գործիչներին ԹՊԿ-ն ներկայացնում է որպես կարևորագույն հանքանյութերի մատակարարումների դիվերսիֆիկացման գործիք, իբրև Չինաստանի և Ռուսաստանի ազդեցության հակակշիռ և որպես Եվրասիայում տրանսպորտային ուղիների բանալի: Հիշեցնենք, որ Հադսոնի ինստիտուտը Վաշինգտոնի ազդեցիկ նեոկոնսերվատիվ վերլուծական կենտրոններից մեկն է, որը մասնագի-

տանում է արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ոլորտներում: Այն ունի ռազմատենչ համբավ և ավանդաբար սերտ կապեր ունի Հանրապետական կուսակցության ղեկավարության և Պենտագոնի հետ:

Իր հերթին թուրքական կառավարամետ «Daily Sabah» հրատարակությունը ծրագրային մի հոդված է հրապարակել, որտեղ նշվում է Թյուրքական պետությունների կազմակերպության առաջիկա վերելքի՝ «արևածագի» մասին: Հոդվածում նշվում է, որ ԹՊԿ-ն վերելք է ապրում որպես համաշխարհային տերություն, և ապագան կարող է ավելի շատ հնարավորություններ ընձեռել ավելի մեծ ինտեգրման համար: Նշվում է, որ Անկարան փայփայում է «թյուրքական ԵՄ» ստեղծելու երազանքը՝ ընդհանուր այբուբենով, ընդհանուր թուրանական բանակով և նույնիսկ թյուրքական արհեստական բանականությամբ և, միևնույն ժամանակ, փորձում է ստանձնել Արևելքի և Արևմուտքի միջև աշխարհաքաղաքական հավասարակշռողի դերը: Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը մայիսին Ղազախստանում կայացած թյուրքական աշխարհի առաջնորդների ոչ պաշտոնական գագաթնաժողովի ժամանակ նշել է, որ Թուրքիայի Հանրապետությունն իր պատմության ընթացքում միշտ հույսը դրել է մեկ կոնկրետ խմբի՝ թյուրքական աշխարհի հետ լավ հարաբերությունների վրա: Էրդողանը որպես ծրագրային ուղեցույց մեջբերում է Ղրիմի թաթար հայտնի մտավորական Իսմայիլ Գասպրինսկու «լեզվի, աշխատանքի և կարծիքի միասնության» տեսլականը և հպարտանում է թյուրքական աշխարհի հետ հարաբերությունների սերտացմամբ՝ ի շնորհիվ Թյուրքական պետությունների կազմակերպության: ԹՊԿ-ի աշխարհաքաղաքական միավորը միավորում է 170 միլիոն մարդու և ունի 2 տրիլիոն դոլարի ՀՆԱ: Կազմակերպությունը հասունացել է այնքանով, որ կարող է մարտահրավեր նետել արտաքին տերությունների մեծ խաղին: Այժմ Անկարան հաջողությամբ կառուցում է «թյուրքական գոտի» Միջերկրական ծովից մինչև Չինաստան:

Անկարայի Ճգնաժամային և քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոնի նախագահ, պրոֆեսոր Մեհմեթ Սեյֆեթթին Էրոլը «Daily Sabah»-ին տված հարցազրույցում նշում է, որ ԹՊԿ-ն մեծ թափ է ստացել 2016 թվականից ի վեր: Այն այժմ դինամիկ կառույց է, որը մշակութային ինքնության վրա հիմնված համագործակցության հարթակից վերածվել է ավելի ինստիտուցիոնալ, բազմակողմանի և «տեխնո-աշխարհաքաղաքական» մարմնի: Էրոլի խոսքով՝ ԹՊԿ-ն՝ իր բազմակողմանի աշխարհաքաղաքական հաղորդակցությամբ, փոխշահավետ քաղաքականության վրա հիմնված տնտեսական ինտեգրման մոդելով և հավասարակշռության վրա հիմնված կառուցողական, խաղաղ ռազմավարական դիվանագիտությամբ, «գործնականում հակաթույն» է այն դարաշրջանում, երբ համաշխարհային տերությունները մրցում և պայքարում են «աղբյուրների» և «միջանցքների» վերահսկողության համար՝

էներգետիկ ռեսուրսների (հիմնականում նավթի և գազի), կարևորագույն հանքանյութերի, թանկարժեք մետաղների և առաքման ուղիների կամ մատակարարման շղթաների համատեքստում: Ռեսուրսներն ու միջանցքները Թուրքիայի հետաքրքրության հիմնական ոլորտներն են, որը տարեցտարի դիվերսիֆիկացնում է իր էներգետիկ ռեսուրսները և օգտագործում է հաստատված համաշխարհային երթուղիներին մասնակցելու ներուժը, որոնց համար այն ծառայում է որպես տարանցիկ կետ, կամուրջ և կարող է դառնալ շահառու: «Այս համատեքստում, Եվրոպայի և Ասիայի միջև կարևորագույն էներգետիկ, առևտրային և տրանսպորտային ուղիների սրտում գտնվող ԹՊԿ-ն ավելի ու ավելի է դիտարկվում որպես զարգացող աշխարհաքաղաքական ոլորտ, որի կարևորությունն անհերքելի է դարձել արևելք-արևմուտք առանցքի երկայնքով Միջին միջանցքի աճող նշանակության, Տրանսկասպյան տրանսպորտային ցանցերի ընդլայնման և Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության ու եվրոպական շուկաների միջև այլընտրանքային տարանցիկ ուղիների որոնման լույսի ներքո», - ասաց Էրոլը: Ըստ նրա. «Այնպիսի զարգացումները, ինչպիսիք են Ռուսաստան-Ուկրաինա պատերազմը և Կարմիր ծովից ու Մերձավոր Արևելքից բխող ճգնաժամերը, ընդգծել են անվտանգ և բազմազան լոգիստիկ միջանցքների կարևորությունը՝ ԹՊԿ-ի աշխարհագրությունը տեսանելի դարձնելով ոչ միայն «Արևելք-Արևմուտք» երթուղիների, այլև «Հյուսիս-Հարավ» միջանցքների համատեքստում»:

Նույն պարբերականին հարցազրույց տված Գազի համալսարանի դոցենտ Սինան Դեմիրթուրքը, որը Թուրքիայի քաղաքականության և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամի նախագահն է, նշում է, որ ԹՊԿ-ն կենտրոնական դեր ունի Թուրքիայի և թյուրքական աշխարհի քաղաքականության մեջ: Ըստ նրա, հատկապես 2018 թվականի Նախիջևանի համաձայնագրից հետո, Թուրքական

Թուրքական պետությունների կազմակերպության դրոշը

խորհուրդը վերափոխվեց մեծ կազմակերպության՝ Թյուրքական պետությունների կազմակերպություն անվամբ: Սա միջազգային մարմին է՝ քաղաքական արմատներով, ինչպես նաև ռազմական և տնտեսական ինտեգրման համար ենթակառուցվածքները պատրաստող մարմին: ԹՊԿ-ն ներուժ ունի ստեղծելու նոր բևեռ և հաստատելու համաշխարհային նոր ուժային կենտրոն: Դեմիրթուրքը նշեց, որ այս իրականությունն ավելի ակնհայտ է դարձել Ադրբեջանի ղարաբաղյան հաղթանակից հետո՝ նշելով, որ հաղթանակը տարածաշրջանում կայունության զգալի հիմք ստեղծեց. «Դրա արդյունքը թյուրքալեզու պետություններին ցույց տվեց, որ նրանց համագործակցությունը և քաղաքական ինտեգրացիան տարածաշրջանային արդյունքներ է ապահովում»: Դեմիրթուրքի խոսքով, Թյուրքական աշխարհի՝ որպես միասնական ուժի վերելքը այն վերածել է համաշխարհային հիմնական դերակատարի. դրանք այլևս հետխորհրդային պետությունների և նրանց դաշնակիցների մի խումբ չեն, որոնք գտնվում են քաղաքական լուսանցքում: Այն այժմ դիտվում է որպես այլընտրանքային մատակարարման շղթաների և ներդրումների կենտրոն, որը գտնվում է Ռուսաստանի և Չինաստանի աշխարհագրական ծայրամասում: Դեմիրթուրքը նշում է, որ Թուրքիայի և թյուրքալեզու պետությունների միջև համագործակցությունն արդեն բարձունքում է և կարող է նվաճել նոր բարձունքներ՝ մասնավորապես մատնանշելով հինգ տարի առաջ ընդունված «Թյուրքական աշխարհ 2040» տեսլականը՝ էներգետիկայի, զբոսաշրջության, բիզնեսի և ռազմական ոլորտներում ավելի խորը համագործակցություն խթանելու համար:

«ԱՄՆ-Իրան պատերազմը, մասնավորապես, ընդգծեց, թե որքան կարևոր է անվտանգությունը տարածաշրջանում և որքան է աճում Միջին միջանցքի արժեքը: Թուրքական պետությունները ձգվում են Միջին միջանցքի երկայնքով, որն աշխարհի ամենակարևոր էներգամատակարարման անվտանգության ուղին է: Այս ուղին նաև աշխարհի ամենակարևոր լոգիստիկ հանգույցներից և ցամաքային առևտրի ոլորտներից մեկն է», - ասաց Դեմիրթուրքը:

Ներկայացված մեջբերումներից ակնհայտ է դառնում, որ ժամանակակից պանթյուրքական քաղաքականությունը վաղուց դուրս է եկել զուտ մշակութային համագործակցության շրջանակներից: Այն ներառում է տնտեսական ինտեգրման, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման, էներգետիկ համագործակցության, պաշտպանական արդյունաբերության, ռազմական կապերի, ինչպես նաև տեղեկատվական և թվային միասնական տարածքի ձևավորման նախաձեռնություններ: Վերջին տարիներին թուրքական պաշտոնական հայտարարություններում ավելի հաճախ են հնչում ընդհանուր այբուբենի, կիբեռանվտանգության, արհեստական բանականության ոլորտում համագործակցության և նույնիսկ պաշտպանական համակարգերի գործունեության համակարգման վերաբերյալ գաղափարներ:

«Միասնական թյուրքական աշխարհի» մասին հայտարարությունների հետևում թաքնված է շատ կոնկրետ նպատակ՝ Ռուսաստանին դուրս մղել Կենտրոնական Ասիայից և Կովկասից: Այդ նպատակով՝ ի թիվս թվարկված ծրագրերի, ստանդարտացվում են նաև դպրոցական ուսումնական ծրագրերը: Այդ նպատակով ստեղծվում են ՀԿ-ների թվային աջակցության համակարգեր՝ գրավելու նպատակով նրանց հավատարմությունն ու վստահությունը, ովքեր դեռ երեկ հաճախում էին խորհրդային դպրոցներ:

Հունիսին Թուրքիայի մայրաքաղաքում TÜRKSOY-ի հովանու ներքո տեղի ունեցավ «Թյուրքական աշխարհի ինտեգրման նոր հորիզոններ» խորագրով սիմպոզիումը, որտեղ քննարկվեցին ոչ միայն «ընդհանուր այբուբեն»-ի մասին հարցեր, այլ նաև ընդհանուր լեզվի, միասնական հաղորդակցման միջավայրի, տնտեսական միջանցքների ու «ընդհանուր պաշտպանական գոտու» և «անվտանգության հովանոց»-ի վերաբերյալ ծրագրեր՝ Անկարայի հովանու ներքո: Սիմպոզիումի շրջանակներում «Արդարություն և զարգացում» կուսակցության փոխնախագահ, թյուրքալեզու պետությունների հետ հարաբերությունների ղեկավար և Անկարայի խորհրդարանի պատգամավոր, պրոֆեսոր, դոկտոր Քուրշադ Զորլուն իր ելույթում՝ ընդգծելով թյուրքալեզու պետությունների միջև տնտեսական, մշակութային և ռազմավարական համագործակցության կարևորությունը, նշեց հետևյալը. «Այսօր մենք թյուրքական աշխարհը տեսնում ենք ոչ միայն որպես թյուրքական պետությունների կազմակերպություն, այլև որպես ընդհանուր արժեքների շատ ավելի լայն աշխարհագրական տարածք՝ մեր «սրտերի աշխարհագրության» տարածք: Մեզ միավորող ամենակարևոր տարրը մեր լեզուն և հին մշակույթն է: Մենք պետք է արագ քայլեր ձեռնարկենք ընդհանուր այբուբենի և տերմինաբանության վրա հիմնված հաղորդակցության ընդհանուր լեզու ստեղծելու ուղղությամբ: Բացի այդ, տնտեսական միջանցքներում, էներգետիկ գծերում և պաշտպանական արդյունաբերության ոլորտում մեր համատեղ ջանքերը կստեղծեն թյուրքական աշխարհի փոխկա-

պակցվածությունն ու անվտանգության հովանոցը համաշխարհային համակարգի շրջանակներում: Ավելին, մենք շուտով կմեկնարկենք «Թյուրքական աշխարհի քաղաքացիական հասարակության աջակցության համակարգը», որի թվային ենթակառուցվածքը մենք ավարտել ենք՝ մեր քաղաքացիական հասարակության կազմակերպությունների փոխազդեցությունը մեծացնելու համար»:

Մեր «սրտի աշխարհագրություն» արտահայտությունն առաջինը հնչեցրել է Էրդողանը իր ելույթներից մեկում, երբ խոսում էր Թուրքիայի ֆիզիկական, աշխարհագրական սահմանների մասին՝ նշելով, որ այդ սահմաններն ավելի լայն են, քան իրական սահմանների ներքո ամփոփված այսօրվա Թուրքիան, և իրենք իրավունք չունեն մոռանալու իրենց «սրտի սահմանների» մասին, որոնք շատ ավելի ընդարձակ են և սրբազան: Այդ սահմանների ներքո ակնարկվում են և՛ Օսմանյան կայսրությունը, և՛ թյուրքական երկրները, և՛ ծովային տարածքները և բոլոր այն հորիզոնները, ուր հասնում են թուրքական անհագուրդ ծավալապաշտական ծրագրերը:

Եվ այսպիսով, միասնական ուսումնական ծրագրերի մշակման և քննարկման նպատակով Ղազախստանի խորհրդանշական անվանում ունեցող Թուրքեստան քաղաքում հունիսին տեղի է ունեցել Թյուրքական պետությունների կազմակերպության անդամ պետությունների կրթության նախարարների 9-րդ հանդիպումը, որին մասնակցել են համապատասխան գերատեսչությունների ղեկավարները, ԹՊԿ քարտուղարության ներկայացուցիչները, ինչպես նաև կազմակերպության անդամ պետությունների և դիտորդների պատվիրակությունները: Ի դեպ, այդ նույն Թուրքեստան քաղաքում է գտնվում «Խոջա Ահմեդ Յասավիի» անվան միջազգային ղազախա-թուրքական համալսարանը՝ երկրի խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկը, որը ստեղծվել է Ղազախստանի և Թուրքիայի միջև կրթական կապերը ամրապնդելու համար: Հանդիպման ժամանակ Կազմակերպության կրթության նախարարները քննարկել են «Բարձրագույն կրթության ընդհանուր տարածք»-ի ստեղծման նախագիծը, դիպլոմների փոխադարձ ճանաչման, ընդհանուր չափորոշիչների և ուսանողների ֆինանսական աջակցության վերաբերյալ հարցեր: Ի թիվս այլ հարցերի, կարևորվեց ԹՊԿ անդամ պետությունների կրթական համակարգերի հետագա ինտեգրումը և Կազմակերպության ռազմավարական նպատակների իրականացումը մինչև 2040 թվականը:

Թուրքիայի կրթության նախարար Յուսուֆ Թեքինի կողմից այնտեղ մեկ այլ հետաքրքիր հայտարարություն արվեց առ այն, որ Թուրքական ակադեմիան ավարտել է թյուրքական աշխարհի պատմության, աշխարհագրության և գրականության միասնական դասագրքերի վրա աշխատանքը, և դրանք այժմ ներդրվում են կրթական գործընթացում: Սակայն, առայժմ, միայն թուրքական դպրոցներում և որպես ընտրովի առարկաներ:

Այս դասագրքերը դեռևս չեն օգտագործվում Կենտրոնական Ասիայի երկրներում, սակայն դրանց ներդրման ծրագիրը հատուկ ուղղված է հետխորհրդային տարածքին: Նպատակը պարզ և հստակ է՝ վերաձևակերպել ինքնությունը և իրական պատմությունը փոխարինել թյուրքական առասպելներով: Հենց այս դասագրքերում են հեղինակները ազատվել «Կենտրոնական Ասիա» եզրույթից՝ այն փոխարինելով «Թուրքեստան» եզրույթով: Ի դեպ, Թուրքիայի կրթության նախարարն աչքի է ընկել մի շարք այլ ուշագրավ կրթական նախաձեռնություններով, որոնք ուղղված են պատմա-աշխարհագրական անվանումների և պատմական իրադարձությունների անվանափոխմանը՝ համապատասխան թուրքական մենթալիտետային ընկալումների և ուղղված պատմական հիշողության վերաձևմանը: Դրանցից մի քանիսը. «Էգեյան ծով» (Ege Denizi) – «Կղզիների ծով» (Adalar Denizi): «Աշխարհագրական հայտնագործություններ» (Coğrafi Keşifler) – «Գաղութատիրության սկիզբը» (Sömürgeciliğin Başlangici):

Հատկանշական է, որ *Թուրքեստան նշանակում է* (պարսկ.՝ «*Թյուրքերի երկիր*») իսկ *Թուրան նշանակում է* (պարսկ.՝ «*Թուրի երկիր*») - իրանախոս քոչվոր ժողովուրդների (սկյութներ, սարմատներ և այլն) բնակության հին տարածք: **Թուրը** պարսկական «Շահնամե» էպոսի կերպար է: Իրանի լեգենդար թագավոր Ֆերեյդունի երկրորդ որդին (նրա անունը, որ նշանակում է «քաջ», նրան տվել է հայրը, երբ երիտասարդ արքայազնը քաջաբար կռվել է վիշապի դեմ, որը հարձակվել է իր և իր եղբայրների վրա): Բոլոր այս անվանումներն ունեն իրանական քաղաքակրթական արմատներ: Թե ինչպես այդ եզրույթները դարձան թուրքական ազգայնական քարոզչության մեխանիզմներ՝ առանձին ուսումնասիրության առարկա է:

Բայց թե ինչպես է Թուրքիան թյուրքական երկրների համախմբման նպատակով օգտագործում պանթյուրքական գաղափարները և գաղափարախոսներին, կարող ենք հասկանալ՝ անդրադառնալով հետևյալ նախաձեռնությանը:

Թուրքական մշակույթի միջազգային կազմակերպությունը (TÜRKSOY) իր անդամներին մատուցել է շատ յուրահատուկ նվեր՝ 2026 թվականը հայտարարելով Ջիյա Գյոքալփի հիշատակի տարի՝ նրա ծննդյան

150-ամյակի կապակցությամբ: Գյոքալփը ոչ միայն մտածող է, այլև թուրքական ազգայնականության և պանթյուրքիզմի հիմնական գաղափարախոսներից մեկը: Եվ այսպիսով, 2026 թվականին թյուրքական աշխարհում ծավալվում է նրա ժառանգությանը նվիրված միջոցառումների ալիք: Գյոքալփի՝ թյուրքական մշակութային տարածքը միավորելու և ընդհանուր լեզու ստեղծելու ծրագիրն այսօր մեր աչքերի առաջ իրականություն է դառնում: Միասնական թյուրքական այբուբենն արդեն ստեղծվել է և խթանվում է: Թյուրքական ակադեմիան ակտիվորեն ստեղծում է գաղափարախոսությամբ լիցքավորված գրականություն և մտադիր է այդ հիմքի վրա մշակել ընդհանուր մշակութային լեզու: Թուրքական ոճով ինտեգրացիան լիարժեք ընթացքի մեջ է, և Գյոքալփի ազգայնականական գաղափարները բացահայտորեն տարածվում են ԹՊԿ-ի և այլ կառույցների միջոցով:

Միակ միջինասիական երկիրը, որը քիչ թե շատ դիմադրում է թուրքական ագրեսիվ էքսպանսիային, Թուրքմենստանն է, որը ԹՊԿ-ի ոչ թե անդամ, այլ՝ դիտորդ պետություն է և առայժմ չի շտապում անդամակցել նրան: Թուրքմենստանը Թուրքիայի ամենադժվար գործընկերն է Կենտրոնական Ասիայում: Թուրքմենստանը չի դառնում ԹՊԿ-ի լիիրավ անդամ, քանի որ ցանկանում է որոշումների կայացման գործընթացներում պահպանել ինքնիշխանությունը,- կարծում է թուրք քաղաքագետ Քերիմ Հասը: Թուրք քաղաքագետի խոսքով Աշխաբադը ռազմաքաղաքական և քաղաքական կազմակերպություններում պահպանում է չեզոքություն, սակայն սա չէ հիմնական պատճառը, որ այն չի դառնում ԹՊԿ-ի լիիրավ անդամ: Հիմնական պատճառն այն է, որ Թուրքմենստանը ցանկանում է պահպանել իր ինքնիշխանությունը կարևոր որոշումների կայացման գործընթացում: Թուրքիան, այսպես ասած, Թյուրքական պետությունների կազմակերպության առաջնորդն է: Ըստ Հասի, Թուրքիան արդյունավետորեն օգտագործում է այս կազմակերպությունն իր շահերն առաջ մղելու համար: Թուրքմենստանը գրեթե ամբողջությամբ փակ երկիր է, և նա չի ցանկանում իր ինքնիշխանությունը կիսել այլ երկրների հետ: Բացի այդ, Թուրքմենստանի և ԹՊԿ անդամ հանդիսացող Ադրբեջանի միջև կան վիճելի հարցեր Կասպից ծովում գազի հանքավայրերի վերաբերյալ: Այդ պատճառով Թուրքմենստանը կարող է ավելի շատ զիջումներ պահանջել:

Մերձավոր Արևելքի և Կովկասի հարցերով փորձագետ, քաղաքագետ և թյուրքագետ Ստանիսլավ Տարասովն էլ կարծում էր, որ Թուրքմենստանը միշտ որոշակի դիրքորոշում է զբաղեցրել թյուրքական պետությունների նկատմամբ, ինչը պայմանավորված է պատմական գործոններով: «Եթե նայեք թուրքմենների պատմությանը, նրանք կարծում են, որ այսպես կոչված թյուրքական ցեղերը, որոնք Թուրքմենստանից և Թուրքեստանից գաղթել են Իրան, Ադրբեջան և այնուհետև՝ Փոքր Ասիա, իրականում թուրքմենական ցեղեր են: Հետևաբար, նրանք չեն ցանկանում ենթակա դառնալ Անկարային», - RTVI-ին ասել է Տարասովը: Նրա խոսքով՝ Թուրքմենստանը դիրքավորում է իր հատուկ դերն ու նշանակությունը: Խոսքը հակամարտության կամ թշնամության մասին չէ. «Նրանք պարզապես ունեն այդպիսի հատուկ դիրքորոշում»,- կարծում է փորձագետը:

Այսպիսով, թյուրքական պետություններում, առնվազն, դրանցից որոշներում, միանշանակ չէ վերաբերմունքը Թուրքիայի աշխույժ կլանող քաղաքականության նկատմամբ: Անկասկած, թուրքական ներդրումային ծրագրերը շատ գրավիչ կարող են լինել հետխորհրդային հանրապետությունների համար: Սակայն, գիտակցել «մեծ եղբոր» գերակայությունը և անվերապահորեն ենթարկվել նրա քաղաքական քմահաճույքներին այդքան էլ հաճելի հեռանկար չէ, հատկապես, երբ ինքդ ունես հարուստ պաշարներ և հանդիսանում ես էներգոռեսուրսակիր պետություն, ինչից զուրկ է «մեծ եղբայրը», սակայն ցանկանում է քո պաշարների հաշվին և աշխարհագրական դիրքի շնորհիվ դառնալ համաշխարհային օրակարգ թելադրող գերտերություն: ■

Էլեկտրոնային աղբյուրներ

https://www.hudson.org/foreign-policy/washington-should-work-turkic-states-luke-coffey
https://www.dailysabah.com/politics/turkic-unity-rises-in-fragmented-world-with-turkiye-bracing-to-steer-it/news
https://www.turksoy.org/haberler/ozbekistan-cumhurbaskani-mirziyoyev-kultur-ve-sanat-dunyasinin-temsilcileriyle-bir-araya-geldi
https://www.gov.kz/memleket/entities/sci/press/news/details/1236445?lang=ru&ysclid=mq5f86cbe2433030283
https://youtu.be/jadkusB74Hk?si=7XZ37wPHhZMiTjEM
https://rtvi.com/news/eksperty-obyasnili-pochemu-turkmenistan-ne-stanovitsya-polnopravnym-chlenom-otg/

Երբ աղավաղվում են տոնն ու խորհրդանիշը

Լուսինե Մխիթարյան
Միջազգայնագետ, սոցիալական հոգեբան, լրագրող

Հուլիսի 12-ին Հանրապետության հրապարակում Վարդավառը նշվեց փառատոնային ձևաչափով: Մեծ բեմ, բարձր երաժշտություն, դիջեյ, փրփուր, ջրային «մարտեր». այս ամենը կարող էր տեղի ունենալ աշխարհի տարբեր քաղաքներում և տարբեր առիթներով: Հայկական ազգային և քրիստոնեական տոնի բովանդակությունից, ըստ էության, մնացել էին անունն ու միմյանց վրա ջուր լցնելու ավանդույթը: Իսկ բեմում հայտնված Պոսեյդոնի կերպարը, փրփուրային շոուն, նաև տոնին նվիրված ազգային երգերի ու ծիսական բաղադրիչների բացակայությունը շատերի վրդովմունքի պատճառը դարձավ: Այդ արձագանքը միայն ճաշակի կամ միջոցառման կազմակերպման ձևի շուրջ անհամաձայնություն կամ դժգոհություն չէր: Խնդիրը շատ ավելի խորն է:

Տոնը պարզապես միջոցառում չէ, ոչ էլ միայն ժամանցի կամ հանգստյան օր: Տոնական խորհրդանիշները, և ընդհանրապես, ազգի համար կարևոր դարձած խորհրդանիշները, պատահական նշաններ չեն: Դրանք խորհուրդ ունեն, երբեմն հասնում են սրբազան՝ սակրալ նշանակության և հանդես են գալիս որպես ազգային ինքնության, հավաքական հիշողության, մշակութային ինքնության, հասարակական համախմբման ու ինքնանույնականացման կարևոր բաղադրիչներ:

Խորհրդանիշը էթնիկ ինքնության ձևավորման միջոցներից մեկն է, որովհետև հուզական կապ է ստեղծում նույն խմբի ներկայացուցիչների միջև և միաժամանակ սահմանազատում նրանց այլ խմբերից: Էլեն Նալբանդյանի ձևակերպմամբ՝ խորհրդանիշները ոչ միայն ներկայացնում են տվյալ հանրության արժեքներն ու պատկերացումները, այլև ապահովում են այդ իմաստների մշտական շրջանառությունը կոլեկտիվից դեպի անհատ և անհատից դեպի կոլեկտիվ:[1] Այսինքն՝ մարդը խորհրդանիշի միջոցով ճանաչում է այն հանրությունը, որին պատկանում է, իսկ հանրությունը դրա միջոցով վերարտադրում է ինքն իրեն:

Ահա թե ինչու դրոշը պարզապես գունավոր կտոր չէ, Արարատը՝ միայն լեռ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակը՝ սովորական կրակ, իսկ Վարդավառի ջուրը՝ զվարճանքի միջոց: Դրանցից յուրաքանչյուրն ունի պատմական, կրոնական, բարոյական ու հուզական շերտեր: Դրանք ներգործում են մեզ վրա ոչ միայն այն պատճառով, որ մենք գիտենք դրանց բացատրությունը, այլև որովհետև կապվում են մանկության հիշողությունների, ընտանեկան պատմությունների, հանրային արարողությունների և համատեղ ապրումների հետ, իսկ յունգյան ձևակերպմամբ՝ կոլեկտիվ անգիտակցականի հետ:

Գերմանացի փիլիսոփա Էռնստ Կասիրերը մարդուն անվանում էր «խորհրդանշական կենդանի» (animal symbolicum):[2] Նրա դիտարկմամբ՝ մարդն իրականության հետ հարաբերություն է կառուցում լեզվի, առասպելի, կրոնի, արվեստի և պատմության նման խորհրդանշական ձևերի միջոցով: Խորհրդանիշը պարզապես իրականությունը պատկերող նշան չէ, այլ իրականությանը իմաստ տալու միջոց: Մարդն ապրում է ոչ միայն ֆիզիկական, այլև իր ստեղծած խորհրդանշական աշխարհում, հետևաբար, ազգային խորհրդանիշների փոփոխությունը կարող է փոխել նաև այն շրջանակը, որի միջոցով ժողովուրդը մեկնաբանում է իր անցյալն ու ներկան:

Խորհրդանիշի նշանակությունը պայմանավորված է ոչ միայն այն գաղափարով, որը նա արտահայտում է, այլև ձևի ու բովանդակության փոխհարաբերությամբ: Ինչպես նշում է Վիլյամ Պոխլյոբկինը, խորհրդանիշը վերացական գաղափար կամ իմաստ արտահայտող նշան է, իսկ պատկերանշանը՝ կոնկրետ առարկայի պատկերային ներկայացում:[3] Խորհրդանիշի հիմնական իմաստը ժամանակի ընթացքում սովորաբար պահպանվում է, սակայն պատմական և քաղաքական տարբեր պայմաններում կարող է նոր երանգներ ստանալ: Հետևաբար նույնիսկ աննշան թվացող փոփոխությունը երբեմն փոխում է դրա ընկալումն ու մեկնաբանությունը:

Քլիֆորդ Գիրցը[4] մշակույթը դիտարկում էր որպես սերնդեսերունդ փոխանցվող իմաստների համակարգ, որը մարմնավորվում է խորհրդանիշներում: Վիկտոր Թըրները[5] շեշտում էր խորհրդանիշների իմաստային բազմաշերտությունը. նույն խորհրդանիշը կարող է միաժամանակ տարբեր, երբեմն նույնիսկ հակադիր զգացումներ առաջացնել՝ հպարտություն ու ցավ, պատկանելության զգացում ու պարտքի գիտակցում: Հետևաբար տոնի բովանդակության փոփոխությունը միայն արտաքին դրսևորման հարց չէ. այն կարող է փոխել նաև տոնի միջոցով փոխանցվող իմաստները, զգացումները և մարդկանց միջև ձևավորված հավաքական կապերը:

Ազգերի ձևավորման հարցերն ուսումնասիրած Բենեդիկտ Անդերսոնն[6] ազգը բնորոշել է որպես «երևակայված համայնք»: Խոսքը մտացածին կամ կեղծ հանրության մասին չէ, այլ այն, որ թեև ազգի ներկայացուցիչների մեծ մասը երբեք անձամբ չեն հանդիպելու միմյանց, սակայն ընդհանուր տոնների, խորհրդանիշների, երգերի և հիշատակի արարողությունների միջոցով նրանց մեջ ձևավորվում է նույն պատմական ամբողջությանը պատկանելու զգացումը: Յան Ասմանի մշակութային հիշողության տեսությունն[7] էլ ցույց է տալիս, որ հասարակության երկարաժամկետ հիշողությունը պահպանվում է ոչ միայն գրավոր պատմությամբ, այլև կրկնվող ծեսերով, պատկերներով ու հուշարձաններով: Ըստ Պիեռ Նորայի «հիշողության վայրերը»[8] կարող են լինել ոչ միայն աշխարհագրական տարածքներ, այլև տոներ, խորհրդանիշներ և արարողություններ, որոնց միջոցով անցյալը պարբերաբար ներկա է դառնում:

Վերադառնալով Վարդավառի տոնին, նշենք, որ ջուրը տոնի ծիսական համակարգի առանցքային, բայց ոչ միակ տարրն է: Վարդը, աղավնին, ուխտագնացությունը, մատաղը, երգն ու պարը, խաղերը, խնձորի նվիրումը, անձրևաբեր ծեսերը և տարբեր բնակավայրերում պահպանված տեղային սովորույթները միասին են ձևավորել Վարդավառի բնույթը:[9] Այլ կերպ ասած, այն պատմականորեն ձևավորված բազմաշերտ տոն է, որտեղ նախաքրիստոնեական և քրիստոնեական շերտերը ոչ թե պարզապես հաջորդել են միմյանց, այլ միահյուսվել են՝ ձևավորելով ծիսական բաղադրիչների գեղեցիկ և խորհրդանշական ամբողջություն:

Միաժամանակ, ընդունում ենք, որ տոները քարացած համակարգեր չեն և չեն կարող դարերով պահպանվել նույն ձևով: Յուրաքանչյուր ժամանակաշրջան դրանց մեջ ներմուծում է իր փորձը, արտահայտման նոր միջոցներն ու գեղագիտական լեզուն, սակայն խնդիրը փոփոխությունը չէ, այլ այն է, թե փոփոխությունից հետո պահպանվո՞ւմ է արդյոք տոնի իմաստային առանցքը, թե՞ մնում է միայն ձևը: Երբ Վարդավառից առանձնացվում է միայն ջրախաղը, իսկ ազգային երգը, պարը, ծիսական դրսևորումները, խորհրդանիշներն ու բացատրությունն անտեսվում և դուրս են մնում տոնական արարողությունից, ապա տեղի է ունենում ոչ թե արդիականացում, այլ **բովանդակային աղքատացում**:

Հանրապետության հրապարակում օտարազգի հյուրերը միանում էին ընդհանուր ուրախությանը, ջուր էին լցնում միմյանց վրա և մասնակցում փրփուրային շոուին: Սակայն մասնակիցը, բացի ջրոցիի տպավորությունից, տոնից գրեթե ոչինչ չէր տանում իր հետ: Նա չէր հասկանում՝ ինչու է տոնը կոչվում Վարդավառ, ինչ նշանակություն ունի ջուրը, ինչպես են ժամանակի ընթացքում համատեղվել տոնի հնագույն և քրիստոնեական շերտերը: Արդյունքում նա մասնակցում էր հայկական անուն կրող միջոցառմանը, բայց չէր

առնչվում հայկական բուն տոնին, այնինչ դա կարող էր դառնալ հայկական մշակույթին հաղորդակից դառնալու հիանալու հնարավորություն:

Այս օրինակը ցույց է տալիս, որ տոնը կարելի է աղավաղել՝ չփոխելով անգամ դրա անունը: Անվանումը մնում է, սակայն բովանդակությունը փոխարինվում է: Արտաքին ձևը պահպանվում է, իսկ հիշողությունը դուրս է մղվում: Սա խիստ վտանգավոր զարգացում է, որովհետև հասարակության մեջ ստեղծվում է տոնը պահպանելու պատրանք: Մարդիկ մասնակցում են, լուսանկարվում, զվարճանում և համոզված են, որ նշում են Վարդավառը, մինչդեռ հաջորդ սերնդին փոխանցում են միայն մեկ բաղադրիչ՝ առավել մակերեսային բովանդակազուրկ գործողություն:

Նույնը տեղի է ունենում նաև ազգային խորհրդանիշների հետ: Դրանք հասարակությունից «խլելու» համար պարտադիր չէ արգելել կամ ոչնչացնել: Խորհրդանիշը կարող է շարունակել մնալ զինանշանի վրա, դասագրքերում կամ քաղաքային միջավայրում, բայց աստիճանաբար կորցնել կենդանի կապը հասարակության հետ: Բավական է այն հետևողականորեն ներկայացնել որպես հնացած, անիրական կամ պետական շահերին հակասող պատկեր, և ժամանակի ընթացքում մարդիկ սկսում են օտարվել սեփական պատմական հիշողությունից: Այս երևույթը կարելի է բնորոշել որպես **խորհրդանշական օտարում**. արտաքին ձևը պահպանվում է, սակայն խզվում է դրա կապը հավաքական հիշողության ու ազգային ինքնության հետ:

Այս տրամաբանության դրսևորումներից է «Արարատ-Արագած» արհեստական հակադրությունը:[10] Արագածը սիրելու, Հայաստանի Հանրապետության տարածքն ու պետական սահմանները պաշտպանելու համար Արարատից հրաժարվելու անհրաժեշտություն չկա: Արարատը հայերի համար միայն աշխարհագրական անուն չէ: Դարերի ընթացքում Արարատը դարձել է հայկական ինքնության անքակտելի մասը՝ ընկալվելով որպես սրբազան լեռ, հայրենիքի, արարչական սկզբի, կորստի ու շարունակականության խորհրդանիշ և ամրագրվել գրականության, արվեստի, առօրյա մշակույթի ու պետական զինանշանի մեջ: Ազգային խորհրդանիշի նշանակությունը չի վերանում այն պատճառով, որ պատմաքաղաքական հանգամանքների բերումով ներկայումս Արարատը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Մինչդեռ «Արագածը Հայաստանի Հանրապետությունում է, Արարատը՝ ոչ» ձևակերպումը աշխարհագրական փաստից վերածվում է արժեքային ընտրության պահանջի: Խնդիրը Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության կարևորումը չէ, այլ Արարատի խորհրդանշական պատկանելությունը պարտադիր տարածքային պահանջի հետ նույնացնելը: Ժողովուրդը կարող է պահպանել իր պատմական հայրենիքի, սրբավայրերի և մշակութային կենտրոնների հիշողությունը՝ առանց գործող սահմանները փոխելու քաղաքական ծրագիր առաջադրելու: Հակառակ մոտեցումը հիշողությունն ու



մշակույթը տեղավորում է միայն տվյալ պահի քաղաքական քարտեզի սահմաններում:

Նույն տրամաբանությունն առավել բացահայտ է դրսևորվում «պատմական Հայաստան–իրական Հայաստան»[11] կեղծ հակադրության մեջ: Հայաստանի Հանրապետությունը պետություն է՝ հստակ իրավական սահմաններով, մինչդեռ հայրենիքը միայն պետական տարածք չէ. այն նաև պատմական, մշակութային ու հոգևոր տարածք է, որը շարունակում է ապրել հավաքական հիշողության մեջ: Պետական սահմանները պատմության ընթացքում փոխվում են, սակայն դա չի կարող հիմք դառնալ ներկա սահմաններից դուրս մնացած պատմական վայրերը, տեղանունները, մշակութային ժառանգությունն ու ընտանեկան հիշողությունները մեր հիշողությունից դուրս մղելու համար: Այս մոտեցման վտանգն այն է, որ այդ ամենը կարող է աստիճանաբար ներկայացվել ոչ թե որպես ազգային հիշողության մաս, այլ որպես պետականությանը խանգարող անցյալի բեռ: Իսկ «իրական» բնորոշումն անուղղակիորեն «անիրական» է դարձնում այն ամենը, ինչը չի տեղավորվում այսօրվա քաղաքական սահմանների մեջ:

Խորհրդանիշների շարունակական նսեմացումն ունենում է նաև սոցիալ-հոգեբանական հետևանքներ: Թե՛ խմբային, թե՛ ազգային խորհրդանիշները մարդու ինքնաընկալման անբաժան մասնիկն են, ուստի դրանց մերժումը կամ ծաղրն ընկալվում է ոչ թե որպես վերացական բանավեճ, այլ՝ սեփական արժանապատվության նկատմամբ ոտնձգություն: Միաժամանակ, երբ հասարակությանը պարբերաբար առաջարկվում է հրաժարվել պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված արժեքներից՝ հանուն հերթական «նոր» մեկնաբանության, դա կարող է հանգեցնել ինքնության աղճատման, անորոշության ու անվստահության առաջացմանն ու ցինիզմի դրսևորմանը հանրային մակարդակում: Մարդը դժվարանում է հասկանալ՝ անցյալի ո՞ր հատվածն է շարունակում իրենը լինել, իսկ ո՞րն է վաղը հայտարարվելու ավելորդ կամ վտանգավոր: Այդ պայմաններում թուլանում է ոչ միայն պատմական շարունակականության, այլև հասարակական համերաշխության զգացումը:

Տոնի կամ խորհրդանիշի վերաիմաստավորումը կարող է անհրաժեշտ և օգտակար լինել, եթե բացահայտում է մոռացված շերտերը, նոր սերնդին հասկանալի լեզվով ներկայացնում դրանց նշանակությունը և անցյալը կապում ներկայի խնդիրների հետ: Այն վտանգավոր է դառնում, երբ վերանայման անվան տակ հեռացվում է անցանկալի դարձած պատմությունը, փոխվում են պատճառահետևանքային կապերը կամ ազգային հիշողությունը հարմարեցվում է ժամանակավոր քաղաքական նպատակներին: Այդ դեպքում հասարակությունը ոչ թե նորովի է ճանաչում իրեն, այլ աստիճանաբար կորցնում է ինքնաճանաչման գործիքները:

Ազգային ինքնությունը մեկ անգամ ստեղծված ու անփոփոխ ժառանգություն չէ: Այն շարունակաբար սերնդեսերունդ վերարտադրվում է ընտանիքում, դպրոցում, մշակութային հաստատություններում, լրատվամիջոցներում, պետական արարողություններում և առօրյա միջավայրում: Տոներն ու խորհրդանիշներն այդ գործընթացի ազդեցիկ միջոցներից են, որովհետև միավորում են գիտելիքը, զգացմունքն ու գործողությունը: Մարդը լսում է պատմությունը, տեսնում խորհրդանիշը և մասնակցում ծեսին: Այդ երեքի միասնության պայմաններում էլ ձևավորվում է կայուն ինքնանույնականացում իր համայնքի, ազգի, նաև պատմության հետ:

Ազգը կարող է կորցնել հիշողությունը ոչ միայն այն ժամանակ, երբ ոչնչացվում են գրքերը, արխիվներն ու հուշարձանները: Հիշողության կորուստ է տեղի ունենում նաև այն ժամանակ, երբ խորհրդանիշները շարունակում են օգտագործվել, բայց դրանց իմաստն այլևս հայտնի չէ, երբ տոնը պահպանվում է օրացույցում, բայց կտրվում է պատմությունից, կամ երբ նախկին բովանդակությունը փոխարինվում է քաղաքականորեն հարմար, սակայն պատմականորեն դատարկ ձևակերպմամբ: Հետևաբար, երբ որոշում ենք՝ ինչ տոնել, ինչպես տոնել և ինչ խորհրդանիշներով, իրականում որոշում ենք՝ **ով ենք մենք**:

Հղումներ

1 Э. Н. Налбандян, “Символы как способ формирования этнической идентичности,” Общество: философия, история, культура, no. 3 (2025): 209–213, https://doi.org/10.24158/fik.2025.3.29

2 Ernst Cassirer, An Essay on Man: An Introduction to a Philosophy of Human Culture (New Haven: Yale University Press, 1944), 44–45.

3 Похлёбкин В. В., Словарь международной символики и эмблематики, 3-я изд. (Москва: Международные отношения, 2001), стр. 8–12

4 Clifford Geertz, The Interpretation of Cultures (New York: Basic Books, 1973), 89.

5 Victor Turner, The Forest of Symbols: Aspects of Ndembu Ritual (Ithaca, NY: Cornell University Press, 1967), 28.

6 Benedict Anderson, Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, rev. ed. (London: Verso, 1991)

7 Jan Assmann, “Collective Memory and Cultural Identity,” trans. John Czaplicka, New German Critique, no. 65 (1995): 125–133.

8 Нора П. «Между памятью и историей. Проблематика мест памяти» // Франция-память / пер. с фр. Д. Хапаевой. Санкт-Петербург: Издательство Санкт-Петербургского университета, 1999. С. 17–50.

9 Ռաֆիկ Նահապետյան, Հայ ազգագրություն. դասախոսություններ (Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2026), 454–456: Տես նաև Ռաֆիկ Ա. Նահապետյան, Հայ ազգագրության պատմություն. XVIII դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը (Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2023):

10 «Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է Արարատ ու Արագած լեռների հետ կապված թեմային», Լուրեր, 22 մայիսի, 2023: Հասանելի է՝ 1lurer.am, (դիտվել է՝ 18.07.2026)

11 Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը Ազգային ժողովում կառավարության ծրագրի (2021-26թթ.) 2023թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի քննարկմանը, 10.04.2024, (դիտվել է՝ 18.07.2026), https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2024/04/10/Nikol-Pashinyan-Speech/

Միացումից անկախացում: Ներքաղաքական խմորումները Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունում (1992-1993 թթ.)

Տարոն Վլադիկի Հակոբյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, դասավանդում է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում

Ինչպես նկատեցիք, ընթերցելով «Դրոշակի» 2026 թ. 6-րդ համարում հրապարակված իմ նախորդ հոդվածը, 1992 թ. հունիսի 2-6-ը տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) Գերագույն խորհրդի (ԳԽ) առաջին նստաշրջանում ԳԽ նախագահի ընտրությունների ժամանակ իրենց նորից զգացնել տվեցին ներքին հակասությունները, որոնք ավելի սրվեցին Հայաստանի ղեկավարության ազդեցության հետևանքով, և դրանք ավելի խորացան Ադրբեջանի կողմից անսպասելի և շատ կարճ ժամանակամիջոցում Շահումյանի ու Մարտակերտի շրջանի մի մասի բռնազավթումից հետո:

Մեր կարծիքով, Շահումյանի ու Մարտակերտի անկումը պետք է բացատրել փոխկապակցված, թերևս, իրար լրացնող մի շարք քաղաքական գործոններով պայմանավորված:

Այստեղ լիովին բնական հարց է ծագում. ինչպե՞ս պատահեց, որ վերջին պարտություններից հետո բարոյալքված ադրբեջանական բանակը, որն ի վիճակի չէր լայնածավալ ռազմական գործողություն վարել, հանկարծ կարողացավ այդքան մեծ հաջողությունների հասնել շատ կարճ ժամանակահատվածում: Չէ՞ որ Ադրբեջանի ներքաղաքական ճգնաժամը չէր կարող նպաստել ադրբեջանական բանակի մարտական ոգու վերելքին: Ընդհակառակը, այդ ճգնաժամն ավելի էր խարխլում նրա մարտունակությունը:

Նման երևույթը կասկածելի է քաղաքական ասպարեզում ու պատմագիտության մեջ. այն մտորումների և ուսումնասիրության տեղիք է տալիս՝ միգուցե պահանջելով հետագա բացահայտում: Մինչև այսօր փորձեր չեն ձեռնարկվել օբյեկտիվության և առողջ տրամաբանության հիման վրա վերհանել անկման պատճառները: Հաշվի առնելով խնդրի բարդությունն ու խճողվածությունը, ինչպես նաև նրա քաղաքական երկարատև շահարկումները՝ հեղինակները հիմնականում շրջանցել են այն: Սակայն շրջանառության մեջ կան տարբեր տեսակետներ, թեև ակնհայտ է այն, որ ԼՂՀ և Հայաստանի Հանրապետության ուժային համակարգերը տեղյակ էին ադրբեջանական բանակի խոշոր կուտակումների մասին:[1]

Հետագայում կտեսնենք, որ իրադարձությունների զարգացումը և երկրում ստեղծված քաոսային վիճակն անխուսափելի դարձրին մի շարք արմատական փոփոխությունները ԼՂՀ ներքաղաքական կյանքում, որոնք կատարվեցին ՀՀ ղեկավարության պահանջով: Դրանից հետո միայն սկսվեց Արցախյան պատերազմում հայկական կողմի նոր հաջողությունների շրջանը:

Շահումյանի և Մարտակերտի հանձնումը մեծ աղմուկ բարձրացրեց Հայաստանի ներքին կյանքում, լարվեց ներքաղաքական դաշտը: Փոխադարձ մեղադրական կոչեր լսվեցին միմյանց հանդեպ: Շահումյանում տեղակայված Հայաստանի զինված ուժերը մեղադրվեցին դիմադրություն ցույց չտալու և խուճապ առաջացնելու մեջ: Իսկ հակառակ թևը մեղադրում էր Արցախի ղեկավարությանը:[2]

Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահությունը փորձեց համապատասխան ուղիներ որոնել: Դրությունը շտկելու նպատակով Արցախի իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը Պաշտպանության խորհրդի (ՊԽ) ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալու ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, որի մեծամասնությունը Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության անդամներ էին, չափազանց լավ էր գիտակցում, որ հանրապետության իշխանական մարմիններում առանց արմատական փոփոխության անհնարին է շտկել իրավիճակը: Իսկ ՀՀ-ից իրական օգնություն ստանալու համար անհրաժեշտ էր փաստացի իշխանությունը հանձնել պաշտոնական Երևանի համար ընդունելի անձանց:[3]

Դրանից ելնելով, դեռևս հուլիսի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում քննարկվեց ՀՀ-ԼՂՀ փոխ-



հարաբերությունների հարցը: Հաշվի առնելով երկու հայկական հանրապետությունների փոխհարաբերությունների նման վիճակը, ինչպես նաև՝ ելնելով արցախյան հիմնահարցի ըմբռնման գործում պաշտոնական Երևանի դիրքորոշումը պարզելու անհրաժեշտությունից, ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց՝ ՀՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսելու նպատակով ՀՀ գործուղել ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակություն՝ հետևյալ կազմով. Գեորգի Պետրոսյան, Վլադիկ Հակոբյան, Վյաչեսլավ Աղաբալյան, Վալերի Ալեքսանյան, Կարեն Բաբուրյան, Վալերի Ղազարյան, Հրանտ Խաչատրյան:[4]

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, սակայն, հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի որոշ քաղաքական գործիչների վկայությունները[5] և ուսումնասիրելով հուլիսի 27-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի սղագրությունը, որտեղ ներկայացված են ՀՀ իշխանությունների հետ բանակցած ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակության անդամների կարծիքները, գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ նախագահը ձգտում էր ձերբազատվել ԼՂՀ ԳԽ նախագահության «անհնազանդ» անդամներից՝ պահանջելով ստեղծել մի ռազմաքաղաքական կամ պետական խորհուրդ և նրան փոխանցել օրենսդիր ու գործադիր մարմինների բոլոր պարտականությունները:[6]

Օգոստոսի 11-ին ԼՂՀ Նախարարների խորհրդի (ՆԽ) նախագահ Օլեգ Եսայանը դիմեց ԳԽ նախագահությանը՝ իր հրաժարականի հարցը քննարկելու խնդրանքով: Նա իր այդ քայլը բացատրում էր իշխանության գոյություն ունեցող կառույցների ու ռազմական իրավիճակի պահանջների անհամապատասխանությամբ և առաջարկեց մինչև 1992 թ. վերջը Հանրապետությունում ռազմական դրություն մտցնել, ինչպես նաև ստեղծել ինչ-որ մարմին և ԼՂՀ ԳԽ ու ՆԽ լիազորությունները հանձնել այդ մարմնին:[7] Իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին, նույն հրաժարականների հարցով, երկրորդ անգամ ԼՂՀ ԳԽ նախագահությանը դիմեցին նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը և ԼՂՀ ԳԽ քարտուղար Վլադիկ Հակոբյանը, սակայն նախագահությունը դարձյալ որոշեց մերժել վերջիններիս հրաժարականների դիմումը:[8]

Նշված իրադարձության վերաբերյալ կարծիքներ էին տարածվել, թե ԳԽ նախագահի պաշտոնակատարի և քարտուղարի հրաժարականների պատճառը ներքին և արտաքին ճնշումներն են, և այդ քայլն իշխանական համակարգում երկպառակությունը կանխելու նպատակ է հետապնդում:

Այդպիսով՝ հունիսյան ռազմական անհաջողություններից հետո ԼՂՀ-ում ստեղծվեց ծայրաստիճան լարված և անկայուն իրավիճակ՝ սպառնալով երկրի անվտանգությանը: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալու ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին: Անհրաժեշտ է նշել նաև, որ այսօր որոշ քաղաքագետներ և պատմաբաններ ինքնապաշտպանության ուժերի անհաջողությունները վերագրում են ԳԽ-ին և ԻՊՈՒ նախկին հրամանատարությանը, որի ռազմաքաղաքական գործունեությունը համարում են կազմակերպչական տեսակետից անարդյունավետ, դրան գումարելով ռուսական օգնությունը Ադրբեջանին, նաև Հայաստանի ոչ ռուսական կողմնորոշումը: Սակայն, պատմական դեպքերն ուսումնասիրելուց և վերլուծելուց հետո կասկածի տակ է առնվում նման տեսակետի տրաբանական լինելը:

1992 թ. օգոստոսի 15-ը դարձավ ԼՂՀ պատմության մեջ մի նոր ուղենիշային տարեթիվ. այդ օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ և ՆԽ համատեղ նիստը, որը պետք է վճռեր ՆԽ նախագահի հրաժարականի հարցը և լուծում տար ՀՀ նախագահի՝ մի նոր մարմնի ստեղծման պահանջի հետ կապված մի շարք խնդիրների:[9] Ընդունվեց ԼՂՀ ՆԽ նախագահ Օլեգ Եսայանի հրաժարականը: Երկրորդ հարցի վերաբերյալ եղան բազմաթիվ իրարամերժ կարծիքներ, և, ի վերջո, ընդդիմադիր կողմերը եկան փոխհամաձայնության: ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ռազմական դրության ռեժիմն իրականացնելու համար «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքի 9-րդ բաժնի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ):[10]

ՊՊԿ նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը, ՊՊԿ նախագահի առաջին տեղակալ՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ Բորիս Առուշանյանը, ՊՊԿ նախագահի տեղակալ՝ ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պետական շինարարության, իրավական հարցերի և օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ Կարեն Բաբուրյանը: ՊՊԿ կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանը, ԼՂՀ ՊԿ նախագահ Սերժ Սարգսյանը, ԼՂՀ ՆԳՆ նախարարի պաշտոնակատար Արմեն Իսագուլովը, ԻՊՈՒ հրամանատարի առաջին տեղակալ Սամվել Բաբայանը:

ՊՊԿ-ին փոխանցվեցին ՆԽ-ի՝ «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված են «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահն օժտվեց ԼՂՀ ՆԽ նախագահի լիազորություններով: ՊՊԿ նախագահին պարտավորեցվում էր 6 ամիս հետո իր գործունեության հաշվետվությունը ներկայացնել ԳԽ:

ՊՊԿ-ի ստեղծումով սկսվեց արցախյան պետականության գոյապայքարի տարեգրության մի նոր էջ: Անժխտելի է, որ պատերազմական ծանր իրադրությունում կենտրոնացված իշխանական համակարգի, մասնավորապես՝ ռազմաքաղաքական նոր մարմնի ստեղծումը, ինչպիսին էր ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող ՊՊԿ-ն, դարձավ կենսական անհրաժեշտություն և առաջին հայացքից պատմականորեն արդարացվեց: Միաժամանակ հայկական երկու հանրապետությունների իշխանությունների միջև ստեղծվեց փոխըմբռնման մթնոլորտ:

Սակայն, պետական շինարարության և քաղաքական զարգացումների հետագա ընթացքի ուսումնասիրությունն ու վերլուծելությունն ակնբախ են դարձնում այդ գործում ի հայտ եկած մի շարք էական թերություններն ու շեղումները, որոնք իրենց բացասական դրոշմն են դրել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Պետականակերտման խրթին ճանապարհին խեղվեց ԼՂՀ բարձրագույն քաղաքական մարմնի՝ ԳԽ-ի դերակատարությունը և նրա կարգավիճակն աստիճանաբար դարձավ ձևական: ՊՊԿ-ի գործունեությունը թելադրվում էր, հիմնականում, ՀՀ իշխանությունների կողմից, և դա կատարվում էր որպես երկու հայկական հանրապետությունների իշխանությունների գործողությունները ներդաշնակեցնելու անհրաժեշտություն: Իհարկե, այդ անհրաժեշտությունը կար, և այն նույնիսկ կենսական պահանջ էր, սակայն այն հանգեցրեց միջազգային դիվանագիտական ասպարեզում ԼՂՀ պետական ինքնուրույնության որոշակի սահմանափակմանը: Իսկ ժողովրդավարական ձևով ստեղծված պետությունը պատերազմական իրադրության թելադրանքով վերածվեց ավտորիտարի: Ցավոք, օգտվելով ժամանակի պարտադրած հանգամանքներից, իշխանական որոշ պաշտոններում հայտնվեցին նաև հասարակության համակրանքը չվայելող անձինք, որոնց գործունեությունը բացասական հետք թողեց և՛ ժողովրդի բարոյահոգեբանության, և՛ երկրի պետական շինարարության որակի վրա:

Որպես վերոնշյալի հակակշիռ՝ պետք է նշել, որ ՊՊԿ-ն, իր ձեռքը վերցնելով վերոհիշյալ լիազորությունները, շարունակեց և գործունեության առաջին պլան մղեց կառավարման համակարգի յուրովի կենտրոնացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև ԻՊ ուժերը կազմակերպական-հաստիքային կառուցվածքի բերելու, այսինքն՝ բանա-

կային ենթակառույցների, պաշտպանական շրջանների (ՊՇ) ձևավորման գործընթացը:

Իսկ այն սկսվել էր դեռևս ԼՂՀ ՊԿ նախագահի՝ «Պաշտպանական շրջանների և շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանագրով:[11] Այդ հրամանագրի հիման վրա ստեղծվեցին 6 ՊՇ-ներ: Իսկ 1993 թ. նոյեմբերին ԻՊՈՒ-ի վերակազմավորման գործընթացը մոտեցավ իր ավարտին, և ԼՂՀ ՊՊԿ նախագահը նոյեմբերի 10-ին հրաման ստորագրեց ԼՂՀ ԻՊՈՒ-ն ԼՂՀ Պաշտպանության բանակի (ՊԲ) վերակազմակերպելու մասին:[12]

1993 թ. ՊՊԿ-ն փոփոխություն կատարեց նաև տեղական ինքնակառավարման ոլորտում՝ այն համապատասխանեցնելով պատերազմական ժամանակի պահանջներին:[13]

(Շարունակելի)

Հղումներ

1 Տե՛ս Արցախի Հանրապետության պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 4, պահպանման միավոր 2, կապ 1, թերթ 94:
2 Տե՛ս Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 463:
3 Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813–2007 թթ.), Ստեփ, 2012, էջ 230:
4 Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 22-23:
5 Տե՛ս Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Եր., 2011, 123:
6 Տե՛ս ԱՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992թ. հուլիսի 27-ի նիստի սղագրություն:
7 Տե՛ս Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Եր., 2001, էջ 182:
8 Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 31-33:
9 Տե՛ս նույն տեղում, թ. 44-47:
10 Տե՛ս Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 127:
11 Տե՛ս Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն, Եր., 2001, էջ 86 (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան):
12 Տե՛ս ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի նախագահի 1993թ. նոյեմբերի10-ի որոշում N 323:
13 ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ նախագահի 1993թ. ապրիլի 29-իորոշում՝ N197:

1992 թ. Մարտակերտի աղետը. Հաթերքի բնակչության բռնի տեղահանման պատմական և իրավական հայեցակետերը

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

1992 թ. հուլիսին Արցախյան պատերազմի ամենածանր էջերից մեկը դարձավ Մարտակերտի շրջանի, մասնավորապես՝ Հաթերք գյուղի բռնազավթումն ու հայաթափումը: Սույն հոդվածն անդրադարձ է այդ իրադարձությունների պատմաիրավական հանգամանքներին: Արխիվային տվյալների, միջազգային զեկույցների և ականատեսների վկայությունների համադրությամբ՝ ներկայացվում են ադրբեջանական կանոնավոր զորքերի գործողությունները միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից: Ուսումնասիրությունը փաստում է, որ խաղաղ բնակչության թիրախավորումն ու բռնի տեղահանումը կրել են համակարգված բնույթ:

1992 թվականի ամառը Արցախյան պատերազմի ժամանակագրության մեջ նշանավորվեց ադրբեջանական կողմի լայնամասշտաբ ռազմական ագրեսիայով, որի հիմնական նպատակը Լեռնային Ղարաբաղի հյուսիսային և կենտրոնական շրջանների ժողովրդագրական պատկերի արմատական փոփոխությունն էր՝ տեղի հայ բնակչության բռնի տեղահանման կամ ֆիզիկական բնաջնջման միջոցով: 1992 թ. հունիսին Շահումյանի շրջանի անկումից հետո, ադրբեջանական զինված ուժերը, օգտագործելով նախկին խորհրդային 4-րդ բանակի թողած ծանր զրահատեխնիկան և ռազմական օդուժը, իրենց հիմնական հարվածն ուղղեցին Մարտակերտի շրջանի դեմ: Հուլիս ամիսը դարձավ այս տարածաշրջանի և նրա խոշորագույն ռազմավարական կարևորագույն բնակավայրերից մեկի՝ Հաթերքի հայաթափման ու ողբերգության ամիսը:[1]

1992 թ. հունիսի կեսերից ծավալված ադրբեջանական զորքերի լայնամասշտաբ հարձակումը կարճ ժամանակահատվածում էապես փոխեց ռազմաճակատի գիծը՝ մարտական գործողությունները տեղափոխելով Մարտակերտի շրջանի խորքերը: Արդեն հուլիսի սկզբին կատաղի մարտեր էին ընթանում անմիջապես Մարտակերտ քաղաքի մատույցներում:

Անհավասար մարտերի և հակառակորդի կողմից իրականացվող շուրջօրյա անխնա հեռահար հրետակոծությունների, «Գրադ» կայանքների զանգվածային կիրառման ու ռազմական ավիացիայի անընդհատ հարվածների հետևանքով՝ հուլիսի 4-ին հայկական ինքնապաշտպանական ուժերը ստիպված եղան նահանջել, ինչն էլ հանգեցրեց Մարտակերտի անկմանը: Քաղաք մտած ադրբեջանական ստորաբաժանումների գործողությունները չսահմանափակվեցին միայն ռազմական խնդիրներով. դրանց անմիջապես հաջորդեց քաղաքացիական ենթակառուցվածքների, պատմամշակութային կոթողների և տեղի բնակչության անձնական գույքի համակարգված թալանն ու հրկիզումը:

Մարտակերտի գրավումից հետո հակառակորդն իր հիմնական հարվածն ուղղեց դեպի ռազմավարական առանձնահատուկ նշանակություն ունեցող Սարսանգի հիդրոհանգույցը և դրան հարող աջափնյա ու ձախափնյա բնակավայրերը: Այս ռազմագործողության թիրախում հայտնվեց տարածաշրջանի խոշորագույն կենտրոններից մեկը՝ Հաթերքը: Հայտնվելով երկկողմանի հրետանային ինտենսիվ կրակի տակ և աստիճանաբար զրկվելով արտաքին աշխարհի հետ կապող հաղորդակցության բոլոր ուղիներից՝ գյուղը հայտնվեց փաստացի շրջափակման և օրհասական հումանիտար ճգնաժամի մեջ:[2]

Հուլիսի 7-9-ին ադրբեջանական զորքերի կողմից պաշտպանական գծի ճեղքումից հետո, Հաթերք, Ջագլիկ և Ակնաբերդ գյուղերի բնակչությունը հայտնվեց կատարյալ շրջափակման վտանգի ներքո: Փրկվելու միակ ելքը Թարթառ գետն անցնելն ու Մռավի անտառային դժվարանցանելի կածաններով դեպի Ստեփանակերտ կամ Հայաստան (Վարդենիս) նահանջելն էր:

Մարտակերտի շրջանի բռնազավթման հետևանքով իրենց բնօրրանից տեղահանված ավելի քան 40.000 խաղաղ բնակիչների զանգվածային շարասյունը հայտնվեց աննախադեպ մարդասիրական աղետի կենտրոնում: Այս ողբերգական երթը, որը վերապրածների հիշողության մեջ մնաց որպես «Մահվան

գաղթ», ուղեկցվում էր ծանրագույն զրկանքներով: Վերապրածների և ականատեսների վավերագրված վկայությունները փաստում են, որ հազարավոր ընտանիքներ, կորցնելով տունն ու անձնական գույքը, ստիպված էին օրեր շարունակ ոտքով հաղթահարել լեռնային բարդ ռելիեֆը՝ հորդառատ անձրևների, ցրտի, սննդի, խմելու ջրի և առաջին բժշկական օգնության միջոցների լիակատար բացակայության պայմաններում:

Իրավիճակն ավելի օրհասական էր դառնում նրանով, որ Ադրբեջանի ռազմական օդուժն ու հրետանին, խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերը՝ մասնավորապես Ժնևի 1949 թ. IV կոնվենցիայի 3-րդ հոդվածը և 1977 թ. I Լրացուցիչ արձանագրության 51-րդ և 54-րդ հոդվածները,[3] նպատակաուղղված ու համակարգված հարվածներ էին հասցնում հենց անտառային ճանապարհներով ու լեռնային կածաններով շարժվող անզեն փախստականների շարասյուներին: Խաղաղ բնակչության և քաղաքացիական օբյեկտների դիտավորյալ թիրախավորումը պատճառ դարձան զանգվածային զոհերի, որոնց մեծ մասը կազմում էին ամենաանպաշտպան խմբերը՝ երեխաները, կանայք և տարեցները: Այս գործողությունները կրում էին էթնիկ զտման և բնակչության ֆիզիկական ոչնչացման հստակ ընդգծված բնույթ՝ համաձայն Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 7-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ռազմական հանցագործությունների հատկանիշների:[4]

Ինչպես 1992 թ. ապրիլին տեղի ունեցած Մարաղայի ողբերգական կոտորածի ժամանակ, այնպես էլ հուլիսի սկզբին Հաթերքի բռնազավթման օրերին, ադրբեջանական զինուժի թիրախում հայտնվեցին հատկապես այն անպաշտպան քաղաքացիական անձինք, ովքեր տարիքի, հաշմանդամության, կուրության կամ տեղաշարժման սահմանափակ կարողությունների պատճառով չէին կարողացել ժամանակին լքել բնակավայրը: Անօգնական վիճակում հայտնված տարեցներն ու հաշմանդամություն ունեցող անձինք ենթարկվեցին նպատակաուղղված դաժանությունների, դաժան խոշտանգումների և ֆիզիկական բնաջնջման:[5]

Հետագայում, երբ հայկական ինքնապաշտպանական ուժերին հաջողվեց մասնակիորեն ազատագրել տարածքը, հայտնաբերված դիակների արտաքին զննությունն ու դատաբժշկական փաստագրումն ի ցույց դրեցին ադրբեջանական կանոնավոր բանակի ստորաբաժանումների կողմից իրականացված վայրագությունների անհերքելի ապացույցներ: Արձանագրվել են մարմինների դիտավորյալ անդամահատումների, կուրացման, դիակների պղծման, ինչպես նաև անօգնական մարդկանց իրենց տների նկուղներում ողջ-ողջ հրկիզելու սարսափելի փաստեր:

Բացի խաղաղ բնակչության դեմ իրականացված ռազմական հանցագործություններից, բնակավայրի գրավմանը հաջորդեց համակարգված մշակութային

վանդալիզմը: Ադրբեջանական ստորաբաժանումների կողմից դիտավորյալ պղծվեցին ու ավերվեցին տեղի դարավոր գերեզմանատները, կոտրվեցին ու ոչնչացվեցին պատմամշակութային արժեք ներկայացնող խաչքարերը, ինչը փաստում է, որ գործողությունները նպատակադրված էին ջնջելու հայկական պատմամշակութային ներկայության և ինքնության ցանկացած հետք տարածաշրջանում:

Միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի համատեքստում 1992 թ. հուլիսին Մարտակերտի շրջանում, մասնավորապես՝ Հաթերքում և հարակից բնակավայրերում ադրբեջանական զինուժի իրականացրած գործողությունները լիովին համապատասխանում են «էթնիկ զտման» իրավական չափանիշներին: Ըստ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 780 (1992) բանաձևի հիման վրա ձևավորված Փորձագետների հանձնաժողովի սահմանման՝ էթնիկ զտումը բնորոշվում է որպես «որոշակի տարածքից որևէ էթնիկ կամ կրոնական խմբի քաղաքացիական բնակչության նպատակաուղղված, բռնի, հարկադրական և տեռորիստական մեթոդներով հեռացում»:[6]

Հաթերքի և Մարտակերտի ենթաշրջանի պարագայում խաղաղ բնակչության դեմ կիրառված բռնությունները՝ անխտիր հրետակոծությունները, քաղաքացիական ենթակառուցվածքների դիտավորյալ թիրախավորումը, խոշտանգումներն ու զանգվածային սպանությունները, կրել են կանխամտածված և համակարգված բնույթ: Դրանք նպատակ ունեին ոչ միայն ռազմական վերահսկողություն սահմանել ռազմավարական տարածքի նկատմամբ, այլև հարկադիր տեղահանման ու ֆիզիկական ահաբեկման միջոցով վերացնել հայկական պատմական էթնիկ ներկայությունը տարածաշրջանում:

Միջազգային քրեական իրավունքի տեսանկյունից էթնիկ զտման նմանօրինակ քաղաքականությունը, թեև առանձին կոնվենցիոն ձևակերպում չունի, դրսևորվում է որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն և ռազմական հանցագործություն՝ համաձայն Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 7-րդ և 8-րդ հոդվածների, ինչպես նաև Ժնևի 1949 թ. IV կոնվենցիայի 147-րդ հոդվածով սահմանված ծանր խախտումների:[7]

Ադրբեջանի կանոնավոր զորամիավորումների գործողությունները 1992 թ. հուլիսին Մարտակերտի շրջանում և Հաթերքի ենթաշրջանում հանգեցրին միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերի ու պատերազմի վարման սովորութային կանոնների կոպտագույն խախտումներին: Նախ և առաջ, խաղաղ բնակչության զանգվածային բռնատեղահանումը հակասում է Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» չորրորդ կոնվենցիայի 49-րդ հոդվածի պահանջներին, որն անվերապահորեն արգելում է քաղաքացիական անձանց բռնի անհատական կամ զանգվածային տեղահանումներն ու արտաքսումները բռնազավթված տարածքից՝ անկախ դրանց դրդապատճառներից:

Միաժամանակ, անզեն բնակավայրերի, բնակելի թաղամասերի և քաղաքացիական ենթակառուցվածքների անխտիր ու նպատակաուղղված հրետակոծություններն ու ռմբակոծությունները կոպտորեն խախտել են Հաագայի 1907 թ. IV կոնվենցիային կից Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների վերաբերյալ կանոնադրությունը, որն արգելում է չպաշտպանվող քաղաքների, գյուղերի, բնակատեղիների կամ շինությունների վրա ցանկացած միջոցներով հարձակվելը կամ ռմբակոծելը:

Ադրբեջանական զինուժի կողմից իրականացված հանցագործությունների առանձնահատուկ դրսևորում էր խաղաղ բնակավայրերի և նահանջող փախստականների շարասյուների դեմ լայնամասշտաբ ու անխտիր ազդեցության զինատեսակների, մասնավորապես՝ կասետային զինամթերքի կիրառումը: Այս փաստերը հատուկ արձանագրվել են միջազգային իրավապաշտպան կազմակերպության 1992 թ. սեպտեմբերի զեկույցում: Խաղաղ բնակչության դեմ անխտիր կործանարար ուժ ունեցող զինատեսակների դիտավորյալ կիրառումը, քաղաքացիական անձանց թիրախավորումն ու նրանց կյանքին ու առողջությանը դիտավորյալ ծանր վնաս պատճառելը միջազգային իրավունքով որակվում են որպես ծանրագույն ռազմական հանցագործություններ (War Crimes)՝ համաձայն Ժնևի IV կոնվենցիայի 147-րդ հոդվածի և Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի:

1992 թվականի հուլիսին Մարտակերտի շրջանի և Հաթերքի ենթաշրջանի բռնի հայաթափումն ու քաղաքացիական բնակչության տեղահանումը ոչ թե ռազմական գործողությունների կամ մարտական բախումների անխուսափելի կողմնակի հետևանք էին, այլ Ադրբեջանի Հանրապետության կողմից պետական մակարդակով ծրագրված, համակարգված և նպատակաուղղված էթնիկ զտումների քաղաքականության գործնական իրականացում: Ոճրագործության կանխամտածված բնույթը, անզեն բնակչության դիտավորյալ թիրախավորումը, բնակավայրերի զանգվածային ավերումն ու պատմամշակութային ժառանգության հետևողական ոչնչացումը վկայում են բնիկ հայ բնակչությանը լիակատար բնաջնջելու և սեփական հայրենիքից հեռացնելու միտումների մասին, ինչն իր էությամբ կրում է ցեղասպանական վարքագծի (*Genocidal intent*) բոլոր հիմնարար հատկանիշները:

Թեև 1993 թվականին հայկական ինքնապաշտպանական ուժերի հակահարձակման արդյունքում Մարտակերտի շրջանը, այդ թվում՝ Հաթերքը, ազատագրվեցին, և տեղահանված բնակչության մի մասը հնարավորություն ստացավ վերադառնալու իր պատմական բնակավայրերը, 1992 թվականի իրադարձությունների նկատմամբ միջազգային հանրության, իրավապաշտպան կառույցների և միջազգային իրավունքի երաշխավորների ժամանակին դրսևորած անտարբերությունն ու համարժեք իրավական գնահատականի բացակայությունը խաթարեցին պատժի անխուսափելիության հիմնարար սկզբունքը: Այս անպատժելիության մթնոլորտը նպաստավոր հիմք հանդիսացավ հետագա տասնամյակներում ադրբեջանական պետական ձեռագրի ու հայատյաց քաղաքականության շարունակականության համար, ինչն իր տրամաբանական և ողբերգական ավարտին հասավ 2023 թ. սեպտեմբերին, երբ ռազմական ագրեսիայի և ամբողջական շրջափակման հետևանքով իրականացվեց ամբողջ Արցախի բռնի հայաթափումը: Այս իրողությունը ևս մեկ անգամ ընդգծում է պատմաիրավական արդարության վերականգնման, փաստագրման և հանցագործին միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկելու հրամայականը: ■

Հղումներ

1 Մանուկյան Հ., Խաչատրյան Հ., Հասրաթյան Ս., «Մարտակերտի շրջան», «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994» հանրագիտարան, Երևան, «Հայկական Հանրագիտարան» հրատ., 2004, էջ 467-471:

2 https://realkarabakh.com/hy/martakert/ (հասանելիության ամսաթիվը՝ 23.07.2026 թ.)

3 https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/gciv-1949 (հասանելիության ամսաթիվը՝ 23.07.2026 թ.)

4 https://www.icc-cpi.int/sites/default/files/2024-05/Rome-Statute-eng.pdf (հասանելիության ամսաթիվը՝ 23.07.2026 թ.)

5 **Baroness Caroline Cox & John Eibner**, *Ethnic Cleansing in Progress: War in Nagorno-Karabakh*, Zurich: Christian Solidarity International (CSI), 1993, pp 35-42.

6 https://digitallibrary.un.org/record/151310?v=pdf (հասանելիության ամսաթիվը՝ 23.07.2026 թ.)

7 https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/gciv-1949 (հասանելիության ամսաթիվը՝ 23.07.2026 թ.)

Արդարադատությունը՝ գլխիվայր

Խմբագրությունը որոշեց թերթի այս համարում ներկայացնել «Դրօշակի» 2020 թ. փետրվարի Առաջնորդողը: Եթե ամսաթիվը չնշեինք, հավանաբար ոմանք կմտածեին, թե հոդվածը վերաբերվում է մեր օրերին: Իսկ մենք այն յոթ տարի անց արտատպում ենք փաստելու համար, որ քաղաքական ուժերի, պետական համակարգի ներկայացուցիչների և ուրիշների իրավական անօրինական հետապնդումները կառավարման ողջ ընթացքում Նիկոլ Փաշինյանի գլխավոր զենքն է, որով նա քաղաքական հաշվեհարդար է տեսնում մրցակիցների հետ, ինչպես և լուծում է իր իշխանության ապահովության խնդիրը: Տարիների ընթացքում այս երևույթը ստացել է առավել անօրինական ու զանգվածային բնույթ, և որքան ավելի թուլանում է իր իշխանությունը, այնքան բոնապետի վերածված Փաշինյանն ավելի ու ավելի շատ է դիմում այս խայտառակ գործելակերպին: Վերջ ի վերջո այս ամենի հետևանքը չափազանց վատ է լինելու պետության համար, բայց... կարդանք հոդվածը և անենք մեր հետևությունները:

Պետության ղեկավարումը ստանձնելուց ի վեր նոր իշխանությունները ոչինչ այնպիսի ջանադրությամբ չեն անում, ինչպես քրեական հետապնդումները, մասնավորապես՝ իշխանության նախկին ներկայացուցիչների նկատմամբ՝ սկսած երկու նախագահներից ու նախարարներից մինչև ցածրաստիճան պաշտոնյաները: Որքան էլ զարմանալի թվա, իշխանության ներկայացուցիչները տարբեր առիթներով հայտարարել են, որ այս կամ այն քրեական գործընթացն ունի քաղաքական դրդապատճառներ: Այդպիսի գնահատականներ հնչել են նույնիսկ երկրի բարձրագույն՝ Սահմանադրական դատարանի շուրջ ծավալվող իրադարձությունների վերաբերյալ, որի անցանկալի անդամներից ազատվելու համար իշխանությունն անգամ համաժողովրդական հանրաքվե է նախաձեռնում: Ակնառու իրողություն է, որ հարուցվող քրեական գործերն ու հետապնդումներն ի սկզբանե դարձել են յուրատեսակ գործիք իշխանության ձեռքին, որի միջոցով փորձ է արվում սահմանափակելու և կանխելու անցանկալիների քաղաքական գործունեությունը, մարդկանց ենթարկելու շանտաժի, պարտադրելու պետական ու մասնավոր գանձարկղեր մուծել որոշակի գումարներ: Այս ճանապարհով ներշնչվում է հանրությանը, որ յուրաքանչյուր ոք ընդդիմադիր գործունեության համար մի օր կարող է հայտնվել իրավապահ համակարգի ուշադրության առանցքում: Պատահականություն չէ, որ մի շարք դեպքերում իշխանության գործողությունները առկա և հնարավոր օրինազանցությունների դեպքում չափազանցված ու անհամարժեք են: Պատահականություն չեն երկրում քիչ թե շատ հայտնի անձանց՝ թեկուզ կարճ ժամանակով ձերբակալությունները, հատուկջոկատայինների մասնակցությամբ կոշտ ուժի կիրառման, ձեռքեր ոլորելու, ասֆալտին պառկեցնելու տեսարանները: Ընդ որում, հասարակական հնչեղություն ունեցող գրեթե բոլոր դեպքերում նախապես մանրամասնորեն ներկայացվում են ենթակայի կատարած «հանցանքները»: Այսինքն՝ աղաղակող կերպով ոտնահարվում է արդարադատության այն երկաթյա կանոնը, ըստ որի՝ յուրաքանչյուր անձ անմեղ է, քանի դեռ վերջնական վճռով դատարանը չի ապացուցել վերջինիս մեղավորությունը: Եվ կարծես ոչ ոքի չի հուզում տվյալ անձի արժանապատվությունը, ապրումներն ու կրած դժվարությունները, անձնական կյանքում տեղի ունեցած կտրուկ փոփոխությունների հետևանքները, նրա ընտանիքի հոգեկան ալեկոծումները և այլն: Արձանագրենք, որ մի շարք դեպքերում լուրջ մեղադրանքների հիման վրա իրականացված համապատասխան իրավական գործընթացներից հետո տվյալ գործերը կարճվել են, այլ դեպքերում գործընթացի վերջը

չի երևում, թեև ի սկզբանե ներկայացվել էին շատ հստակ մեղադրանքներ: Այլ պարագաներում գնալով ակնհայտ է դառնում, որ իշխանությունները «խաղում են ժամանակի վրա»՝ որքան հնարավոր է երկար ժամանակ մարդկանց պահելով փակի տակ և սահմանափակելով նրանց ակտիվ գործունեության հնարավորությունը: Ակնհայտ է նաև այն իրողությունը, որ, ըստ էության, իշխանությունները որդեգրել են ներքաղաքական խնդիրներն իրավական մահակով լուծելու գործելակերպը:

Ընդ որում, ժողովրդական բնույթ ստացած շարժման օրերից նույն ուժը մշտապես ոտնահարել է օրենքը: Պատահական չէ, որ երկրի վարչապետի ղեկավարությամբ իշխող ուժի ոտնձգությունների ու կամայականությունների թիրախում բազմիցս հայտնվել է դատական համակարգը, երբ չի ենթարկվել իշխանության հլու կամակատարը լինելու պահանջին: Նույն տրամաբանությամբ և տարբեր պատճառաբանություններով դատավորներ են հեռացվում ընթացող դատավարություններից, նույն տրամաբանությամբ ցանկալիներով փոխարինվեց Բարձրագույն դատական խորհրդի նման կարևոր ինստիտուտը, և այդ նույն տրամաբանությամբ դատական համակարգի գլխին կախված է մնում, այսպես կոչված, Վեթինգի (անհատական վարքի ու գործունեության քննության) սուրը, չհաշված այն, թե քանի անգամ է վարչապետ Փաշինյանը ամենակոշտ որակումներով ու սպառնալիքներով արտահայտվել դատավորների հասցեին:

Ամեն քայլափոխի քամահրելով օրենքի շրջանակում գործելու պարտականությունը՝ իշխանությունը, խորհրդարանի մակարդակով, նախ որոշեց ժամանակից շուտ թոշակի ուղարկել իր կամքին անհնազանդ Սահմանադրական դատարանին, իսկ երբ վերջինիս բոլոր անդամները հրաժարվեցին կոռուպցիոն գործարքի գնալ, որոշեց նրանց հեռացնել համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Ընդ որում, Սահմանադրական դատարանի նկատմամբ այս հավակնությունը ևս բավարարվեց խորհրդարանի հակասահմանադրական որոշմամբ: Ղեկավարող ուժի ներկայացուցիչներից մեկը, փորձելով արդարացնել անօրինական վճիռը, հեռուստատեսային հարցազրույցի ժամանակ պատճառաբանեց, թե ժողովրդի կամքն օրենքից վեր է: Եթե ասվածը թարգմանենք պարզ մեկնաբանությամբ, հավանաբար այն այսպես կհնչի. «Մենք ոչ մեկ անգամ ենք ոտնահարել օրենքը, և մեր գործողությունների արդարացում է ներկայացվել ժողովրդական պահանջի պատճառաբանությունը, ուրեմն ինչո՞ւ չի կարելի նույն բանն անել ևս մեկ անգամ»:

Թերևս նույն տրամաբանությամբ կարելի է բացատրել նաև այն նշմարվող միտումը, որ Հայաստանի Հանրապետության տարբեր տարածքներում ներկայումս բազմաթիվ քրեական գործեր են հարուցվում գյուղապետների, դպրոցների տնօրենների և այլ պաշտոնյաների նկատմամբ, որոնք Հայաստանում անմիջական ազդեցություն ունեն ընտրող զանգվածների վրա: Գալիք հանրաքվեն կփաստի, թե որքանով էին արդարացված այն ենթադրությունները, որ տվյալ քրեական գործերի գինը հանրաքվեի դրական ելքի ապահովման մեջ ունենալիք ծառայությունն է լինելու:

Երբ մի երկրի իշխանություն փողոցի իր «հեղափոխական» գործելակերպը շարունակում է պետական ղեկի մոտ, պետք է ունենա այն բանի գիտակցումը, թե դա որքան է վտանգավոր սահմանադրական կարգի համար: Երբ մի երկրի «հեղափոխական» իշխանություն ղեկավարման լծակներին տիրանալուց հետո քրեական և այլ բնույթի զանգվածային հետապնդումներ ու քննություններ է նախաձեռնում նախկին բարձրաստիճան պաշտոնյաների, պատերազմական գործողությունների մասնակից բարձրաստիճան զինվորականների նկատմամբ, այդ ամենը ոչ միայն լրջագույն հարված է պետության հեղինակությանը, այլև մի օր խնդրո առարկա կարող է դարձնել և մղված ազգային-ազատագրական պայքարի օրինականությունը և նորանկախ երկրի՝ երեսուն տարվա վարկը: Ինչպես տեսնում ենք, այդ գիտակցությունը հանդես չեն բերում պետության նավը ճոճող՝ երեկվա փողոցի հերոսները:

Անօրինականության սանձարձակ ընթացքը եթե օրինականության պահանջով չկանխվի, պատրանք չունենանք, թե առկա սպառնալիքը փոքր կորուստներով հնարավոր կլինի հաղթահարել: ■

Վահան Նավասարդյան

ՄԵՐ ԱՆԵԼԻՔԸ

Պահենք Դաշնակցությունը (Կրճատումներով)

Կենսունակ քաղաքական հոսանքները պատահականորեն չեն ծնվում և, առավել ևս, անկենսունակ մարմինները դիպվածորեն չեն ապրում տասնամյակներ շարունակ: Անշուշտ, խոր իմաստ կա այն հոյակապ երևույթի մեջ, թե ինչպես սրանից մոտ մեկ երրորդ դար առաջ հայ ապաքաղաքական իրականության մեջ ծնունդ առավ հեղափոխականների անդրանիկ դաշնակցությունը, ապա նա դեպքից դեպք հասակ առավ ու ամրացավ և վերջն էլ՝ հայ ազատագրական պայքարի ալեծուփ հորձանուտում դարձավ մի հզոր ու գրանիտյա ուժ:

Չափազանցությունն պիտի լինի արդյոք եթե ասենք, թե չի կարող հիացում ու պատկառանք չազդել անգամ հակառակորդին այն կենսունակությունը, որ բազմիցս հարվածված ու աղետված Դաշնակցությունը հանդես բերեց իր երկարամյա արյունոտ պայքարի ընթացքում: Այս խորունկ գաղտնիքի պատճառները, անշուշտ, պետք է որոնել այն անժխտելի փաստի մեջ, որ հայ ազատագրական շարժման ղեկավար գումարտակի ենթակայական ձգտումները երբեք չեն հակասել հայ հասարակական զարգացման առարկայական ընթացքին, այլ, հակառակը, բխել են նրանից և նրա հետ մեկտեղ կազմել մի հոյակապ ու ներդաշնակ գեղեցկություն, որ կրում է Դաշնակցություն անունը:

Ժխտել Դաշնակցությունը՝ նշանակում ժխտել մեր կյանքի առաջադիմության բնական և անհրաժեշտ գործոնը: Արգելքներ ու խոչընդոտներ հարուցել Դաշնակցության առաջ՝ նշանակում է գիտակցաբար հարված իջեցնել հայ ժողովրդին և խավարով պատել նրա լուսավոր երթը: Չաջակցել Դաշնակցությանը՝ դա պիտի նշանակեր անմասն մնալ այն նվիրական, վեհ ու գեղեցիկ պայքարին, որ մեր երիցս նահատակ ժողովուրդը տանում է այսօր այլազան կոչումների տակ թաքնված բացահայտ բռնավորների դեմ: Մյասնիկյանների ու Հովհաննիսյանների տղայամիտ շաղակրատանքները անզոր են այն հմայիչ ուժի դեմ, որ գունավորեց մեր խոլական երեսնամյակի պատմությունն ու շունչ տվեց մեր կյանքին: Հովհաննիսյաններն ու Մյասնիկյանները մեկն են հայ ժողովրդի հաղթական երթի առջև ցցված այն խոչընդոտներից, որ վաղվա փոթորիկը պիտի գա ու պիտի սրբի՝ տանելով իր հետ Դաշնակցության քայքայման շուրջը հյուսված նրանց բոլոր պղպջաձիգ ցնորքներն ու երազները: Այսպես էր երեկ, անցյալում, այսպես պիտի լինի նաև վաղը, քանի դեռ հայ ժողովրդի քաղաքական նավը իր փարոսի առաջ խարիսխ չի նետել: Գուրգուրանքով պահենք Դաշնակցությունը, որովհետև առանց այդ հզոր շաղկապի այլևս անկարելի պիտի լինի ամբողջացնել մի կուռ միության մեջ ու մի փրկարար գաղափարի շուրջ՝ կոտորակված ու մարտնչող հայությունը:

Պարտությունների օրերին լայնորեն պետք է բացել կուսակցության դռները, իսկ հաղթանակի օրերին՝ ամրորեն փակել բոլոր անցքերը, որպեսզի ոչ ոք այլևս մուտք չկարողանա ունենալ:

Քաղաքական պայքարում իսկական հավատացյալը լավ օրերին հաճախ մեկուսանում է և, հակառակը, անպայման հրապարակ է գալիս, երբ սկսվում է լքումի և համատարած ուրացումի շրջանը: Ձահերը մարած օրերին նա միշտ վառ է, իսկ վառված ժամանակ նա բոլորի մեջ է ու բոլորի հետ, ու հաճախ մինչև իսկ աննշմար:

Նա, ով հետաքրքրվել է հենց մեր կյանքում գործող հայ քաղաքական կազմակերպության բեղուն ու հարուստ անցյալով, նա գիտի անշուշտ, որ Դաշնակցության բազկերակը խփել է միշտ վարը՝ մարտնչող, անձնուրաց ու հավատացող հայ ժողովրդի մեջ, և ոչ թե վերը՝ եկող ու գնացող «փայլուն» անհատների մոտ:

Հեղափոխականների կազմակերպված կուսակցության ուժը միակ հուսատու զենքն է ժողովրդական ազատագրության ճանապարհին ընկած խոչընդոտների վերացման գործում:

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ, ԹԵ՞ ՉՈՒՆԻ
Վահան Նավասարդյան Հ.Յ. Դաշնակցության անելիքը. մտքեր և հուշեր մի գրքույկի առիթով, էջ 157-161, Երևան 2016

2026 թ. հուլիսի 16-ին Գյումրիում բացվեց Ազգային ազատագրական պայքարի և Առաջին Հանրապետության նշանավոր գործիչ Կարո Սասունու արձանը: Առաջին Հանրապետության շրջանում Սասունին եղել է նաև Գյումրու նահանգապետը, իսկ վրարանդիության տասնամյակներին Սիբիրում իրականացրել է ազգային-կուսակցական, գրական և կրթա-մշակութային լայն գործունեություն:

ԴՐՕՇԱԿ